



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ  
УНИВЕРСИТЕТ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ НАУК  
ИМЕНИ В. БРЮСОВА  
YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY OF  
LANGUAGES AND SOCIAL SCIENCES

**ԲԱՆԲԵՐ**

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ЯЗЫКОВ И  
СОЦИАЛЬНЫХ НАУК ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY OF LANGUAGES AND  
SOCIAL SCIENCES

---

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ**

**LINGUISTICS AND PHILOLOGY**

**1(48)**

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2019

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета ЕГУЯС.

Bulletin is published twice a year by the decision of YSULS Scientific Council.

### **Խմբագրական խորհուրդ՝**

<i>Եղիազարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /գլխավոր խմբագիր/
<i>Արզումանյան Լիլիթ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բարլեզիզյան Արամ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բիմ-Բաղ Բորիս</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի իսկական անդամ
<i>Գասպարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Թոփուզյան Աիդա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Խաչատրյան Կարեն</i> <i>Խաչատրյան Նարայա</i>	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Մարկոսյան Աշոտ</i>	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
<i>Միրումյան Կառլեն</i>	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Նալբանդյան Ջոն</i> <i>Պախասարյան Նարայա</i>	հանրային կառավարման դոկտոր, պրոֆեսոր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Սերերրյակովա Սվետլանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Տարկալո Նինա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### **Խմբագրական կազմ՝**

<i>Աբրահամյան Կարինե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Գևորգյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Համբարձումյան Դիանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Ալավերդյան Անահիտ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

<i>Ապրեսովա Սոնյա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ասատրյան Սուսաննա</i>	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Հովհաննիսյան Ֆրունզե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղազարյան Էլիզա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղարիբյան Դավիթ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու
<i>Մարդյան Հակոբ</i>	փիլիսոփայական գիտությունների թեկնածու
<i>Մանուկյան Նաիրա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Մարգարյան Բելա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Սողկյան Քրիստինե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

### **Տեխնիկական խմբագիրներ՝**

*Փրլավջյան Հասմիկ /գլխավոր տեխնիկական խմբագիր/*

*Ավետիսյան Աննա /տեխնիկական խմբագիր/*

### **Редакционный совет:**

*Егизарян Гаяне, доктор филологических наук, профессор /гл. редактор/*

*Арзуманян Лилит, доктор филологических наук, профессор*

*Барлезизян Арам, доктор филологических наук, профессор*

*Бим-Бад Борис, доктор педагогических наук, профессор, диств. член Академии Наук РД.*

*Гаспарян Гаяне, доктор филологических наук, профессор*

*Топузян Аида, доктор педагогических наук, профессор*

*Хачатрян Карен, доктор исторических наук, профессор*

*Хачатрян Наталья, доктор филологических наук, профессор*

*Маркосян Ашот, доктор экономических наук, профессор*

*Мирумян Карлен, доктор философских наук, профессор*

*Налбандян Джон, доктор государственного управления, профессор*

*Пахсарян Наталья, доктор филологических наук, профессор*

*Серебрякова Светлана, доктор филологических наук, профессор*

*Таткало Нина, доктор педагогических наук, профессор*

### **Редакционная коллегия:**

*Абрамян Карине, доктор филологических наук, профессор*

*Геворгян Гаяне, доктор филологических наук, профессор*

*Амбарцумян Диана, доктор филологических наук, профессор*

*Алавердян Анаит, кандидат филологических наук, доцент*

*Апресова Сося, кандидат филологических наук, доцент*

*Асатрян Сусанна, кандидат педагогических наук, доцент*

*Оганнисян Фрунзе, кандидат филологических наук, доцент*

*Казарян Элиза, кандидат филологических наук, доцент*

*Гарибян Давид, кандидат филологических наук*

*Мадоян Акоп, кандидат философических наук*

*Манукян Наира, кандидат филологических наук, доцент*

*Маргарян Бела, кандидат филологических наук, доцент*

*Согиакян Кристине, кандидат филологических наук, до*

**Технические редакторы:** *Пилавджян Асмик, Аветисян Анна*

**Editorial Council:**

*Yeghiazaryan Gayane*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Arzumanyan Lilit*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Barlezizyan Aram*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Bim-Bad Boris*, Doctor of Sciences (Pedagogy), Professor, Active Member (academician) of the Russian Academy of Sciences  
*Gasparyan Gayane*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Topuzyan Aida*, Doctor of Sciences (Pedagogy), Professor  
*Khachatryan Karen*, Doctor of Sciences (History), Professor  
*Khachatryan Natalya*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Markosyan Ashot*, Doctor of Sciences (Economics), Professor  
*Mirumyan Karlen*, Doctor of Sciences (Philosophy), Professor  
*Nalbandyan John*, Doctor of Sciences (Public Administration), Professor  
*Pakhsaryan Natalya*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Serebryakova Svetlana*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Tatkalo Nina*, Doctor of Sciences (Pedagogy), Professor

**Editorial Board:**

*Abrahamyan Karine*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Gevorgyan Gayane*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Hambardzumyan Diana*, Doctor of Sciences (Philology), Professor  
*Alaverdyan Anahit*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Apresova Sonya*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Asatryan Susanna*, Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor  
*Hovhannisyan Frunze*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Ghazaryan Eliza*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Gharibyan David*, Candidate of Sciences (Pedagogy)  
*Madoyan Hakob*, Candidate of Sciences (Philosophy)  
*Manukyan Naira*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Margaryan Bela*, Candidate of Sciences (Philology), Associate Professor  
*Soghikyan Kristine*, Candidate of Sciences (Philology), Associate Professor

**Technical Editors:** *Pilavjyan Hasmik, Avetisyan Anna*

Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարկագիտական համալսարանի: Լեզվաբանություն և բանասիրություն 1(48):– Երևան, Լինգվա, 2019, 157 էջ:  
Вестник Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова. Лингвистика и филология 1(48). – Ереван, Лингва, 2019, 157 с.  
Bulletin of Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Linguistics and Philology 1(48). – Yerevan, Lingva, 2019, 157 pages.

ISSN 1829-3107  
© Լինգվա, 2019

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ  
CONTENTS**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ЛИНГВИСТИКА И МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ  
LINGUISTICS AND INTERCULTURAL COMMUNICATION**

<b>ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ</b>	<b>ՀԵՆՔԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԴԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ</b>	<b>11</b>
<b>ЛИЛИТ БАДАЛЯН</b>	<b>РОЛЬ ФОНОВЫХ ЗНАНИЙ В ВОСПРИЯТИИ СИМВОЛОВ В ЛИТЕРАТУРЕ И В ПРОЦЕССЕ ИХ ПЕРЕВОДА</b>	
<b>LILIT BADALYAN</b>	<b>THE ROLE OF BACKGROUND KNOWLEDGE IN THE PERCEPTION OF SYMBOLS IN LITERATURE AND THEIR TRANSLATION</b>	
<b>ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ</b>	<b>ԴԻՊԿԱԾԱԲԱՌԵՐԸ ԱՐԱ ԱԼՈՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ</b>	<b>28</b>
<b>ЛИЛИТ ГЕВОРГЯН</b>	<b>ОККАЗИОНАЛЬНЫЕ СЛОВА В ПОЭТИЧЕСКОЙ РЕЧИ АРА АЛОЯНА</b>	
<b>LILIT GEVORGYAN</b>	<b>OCCASIONAL WORDS IN ARA ALOYAN'S POETIC SPEECH</b>	
<b>ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ ՓԵԼՈՇՅԱՆ</b>	<b>ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՔՍՏԻ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՔԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ</b>	<b>39</b>
<b>ГАЯНЕ ЕГИАЗАРЯН ГОАР ПЕЛОШЯН</b>	<b>АНАЛИЗ ЭМОТИВНОСТИ АНГЛИЙСКОГО ТЕКСТА В РАМКАХ ИНФОРМАЦИОННЫХ</b>	

GAYANE YEGHIAZARYAN GOHAR PELOSHYAN	ТЕХНОЛОГИЙ SENTIMENT ANALYSIS OF THE ENGLISH TEXT THROUGH INFORMATION TECHNOLOGIES	
ՖՐՈՒՆԶԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐՆՈՒՄ ПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В СОВРЕМЕННОМ ИТАЛЬЯНСКОМ И ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКАХ	52
ՓՐՄՈՒՆԶԵ ՕԳԱՆԵՍՅԱՆ	ОСОБЕННОСТИ ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В СОВРЕМЕННОМ ИТАЛЬЯНСКОМ И ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКАХ	
FRUNZE HOVHANNISYAN	PRAGMATIC VALUES OF THE USE OF THE IMPERATIVE MOOD IN ITALIAN AND ARMENIAN	
FRUNZE HOVHANNISYAN	I VALORI PRAGMATICI DELL'USO DEL MODO IMPERATIVO IN ITALIANO ED IN ARMENO I VALORI PRAGMATICI DELL'USO DEL MODO IMPERATIVO IN ITALIANO ED IN ARMENO	
ԴՈՆԱՐԱ ԴԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՄԵԼԹՈՆՅԱՆ	ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԱԿԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԵԴԻԱԽՈՍՈՒՅԹՈՒՄ ИМПЛИЦИТНЫЕ ВОЗМОЖНОСТИ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ В МЕДИАРЕЧИ	64
ԴՈՆԱՐԱ ԿԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՄԵԼԿՈՆՅԱՆ	ИМПЛИЦИТНЫЕ ВОЗМОЖНОСТИ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ В МЕДИАРЕЧИ	
DONARA GHAZARYAN ANNA MELKONYAN	IMPLICIT FEATURES OF LANGUAGE UNITS IN MEDIA SPEECHES	

<p><b>ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ</b></p> <p><b>DONARA GHAZARYAN</b></p>	<p><b>ԳՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ</b></p> <p><b>LA COMMUNICATION INTERCULTURELLE À TRAVERS LES TRADUCTIONS LITTÉRAIRES LITERARY TEXT. TRANSLATION AS A MEANS OF CROSS-CULTURAL COMMUNICATION</b></p>	<p><b>75</b></p>
<p><b>ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ</b></p> <p><b>РЕБЕКА МАРГАРЯН</b></p> <p><b>REBEKA MARGARYAN</b></p>	<p><b>ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱԳՈՒՍՏ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ</b></p> <p><b>ЭТИМОЛОГИЧЕСКИЕ И ИСТОРИЧЕСКИЕ СЛОИ СЛОВ НАЗЫВАЮЩИХ ОДЕЖДУ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ</b></p> <p><b>GENEALOGICAL AND HISTORICAL LAYERS OF CLOTHES VOCABULARY IN MODERN ARMENIAN</b></p>	<p><b>84</b></p>
<p><b>ՍԻԼՎԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</b></p> <p><b>СИЛЬВА МАРТИРОСЯН</b></p> <p><b>SILVA MARTIROSYAN</b></p>	<p><b>ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՌՌՍԱՑ ԼԵԶԿԻ ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ</b></p> <p><b>О СИНОНИМИИ И МНОГОЗНАЧНОСТИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ СОЧЕТАНИЙ В СОВРЕМЕННОМ РУССКОМ ЯЗЫКЕ</b></p> <p><b>SYNONYMOUS AND POLYSEMANTIC PHRASEOLOGICAL UNITS IN MODERN RUSSIAN</b></p>	<p><b>97</b></p>

ՌՈՒՋԱՆ ՄՈՒՍԵՅԱՆ	«ՀԱԳՈՒՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ Է» ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՓՈԽԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ	105
РУЗАН МУСЕЯН	АКТУАЛИЗАЦИЯ КОНЦЕПТУАЛЬНОЙ МЕТАФОРЫ «ОДЕЖДА - ЭТО СОЦИАЛЬНЫЙ СТАТУС» В АНГЛИЙСКИХ И АРМЯНСКИХ	
RUZAN MUSEYAN	ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦАХ ACTUALIZATION OF THE CONCEPTUAL METAPHOR "CLOTHING IS A SOCIAL STATUS" IN ENGLISH AND ARMENIAN PHRASEOLOGICAL UNITS	
ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ	“HEIMAT” (ՀԱՅՐԵՆԻՔ) ԼԵՂՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ	114
СИРАНУШ ПАПОЯН	ОСОБЕННОСТИ ЛИНГВО- КУЛЬТУРНОГО КОНЦЕПТА “РОДИНА” В СВЕТЕ АССОЦИАТИВНОГО ЭКСПЕРИМЕНТА	
SIRANUSH PAPOYAN	FEATURES OF LINGUOCULTURAL CONCEPT “HOMELAND” IN THE LIGHT OF THE ASSOCIATIVE EXPERIMENT	



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ  
 ЛИТЕРАТУРА И КУЛЬТУРА  
 LITERATURE AND CULTURE

ԼՈՒՍԻՆԵ ԱԲԳԱՐՅԱՆ	«ՀԵՏՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՎԱԼԵՐԻ ԹՈՐԱՆՅԱՆԻ «ՕՏԱՐԸ» ԵՎ ԱՆԻ ՌՈՄԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՄԵԾ ՄԱՅՐԻԿԱ» ՎԵՊԵՐՈՒՄ	122
ЛУСИНЕ АБГАРЯН	РОМАНЫ «ПОСТПАМЯТИ»: «ЧУЖАЯ» ВАЛЕРИ ТОРАНИИ И «МОЯ БАБУШКА ИЗ АРМЕНИИ» АННИ РОМАНА	
LUSINE ABGARYAN	FEMALE WRITINGS OF "POSTMEMORY" THROUGH THE NOVELS "L'ETRANGÈRE"(THE STRANGER) BY VALÉRIE TORANIAN AND "MA GRAND-MÈRE D'ARMÉNIE" (MY GRANDMOTHER FROM ARMENIA) BY ANNY ROMAND	
ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԾԱՌԸ՝ ՏԱՐԵՐՔՆԵՐԸ ՄԻԱՎՈՐՈՂ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՄԻՇԵԼ ՏՈՒՂՆԻԵԻ «ՈՒՐԲԱԹԸ ԿԱՄ ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԼԻՄԲՈՍԸ» ՎԵՊՈՒՄ	134
АРПИНЕ АРУТЮНЯН	ДЕРЕВО КАК СИМВОЛ, ОБЪЕДИНЯЮЩИЙ СТИХИИ В РОМАНЕ «ПЯТНИЦА, ИЛИ ТИХООКЕАНСКИЙ ЛИМБ» МИШЕЛЯ ТУРНЬЕ	
ARPINE HARUTYUNYAN	TREE AS A SYMBOL CONNECTING THE NATURAL ELEMENTS IN THE NOVEL "FRIDAY, OR THE PACIFIC LIMB" BY MICHAEL TURNIER	

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ԿՆՈՋ ՄԱՐՄԻՆԸ՝ ԵՐԿԲՆՈՒՅԹ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԷՄԻԼ ԶՈԼԱՅԻ «ԱԲԲԱ ՄՈՒՐԵԻ ՍԽԱԼԸ» ՎԵՊՈՒՄ	144
МАРИАМ ОГАННИСЯН	ЖЕНСКОЕ ТЕЛО КАК ДВОЙСТВЕННЫЙ СИМВОЛ В РОМАНЕ ЭМИЛЯ ЗОЛЯ «ПРОСТУПОК АББАТА МУРЕ»	
MARIAM HOVHANNISYAN	WOMAN'S BODY AS A BINARY SYMBOL IN "THE FAULT OF ABBOT MOURET" BY EMILE ZOLA	

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ INFORMATION ABOUT THE AUTHORS	155
---	-----

**ՀԵՆՔԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԴԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ  
ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ խորհրդանիշ, «էմիգրանտ գրողների գրականություն», հենքային գիտելիք, թարգմանական հնարներ*

Թարգմանությունն այլ մշակույթները ներկայացնելու հիմնական միջոցներից է, քանի որ թարգմանության գործընթացում կապ է հաստատվում ոչ միայն լեզուների, այլև մշակույթների միջև: Այդ իսկ պատճառով թարգմանությունը միջլեզվական, միջմշակութային և ճանաչողական գործընթաց է: Եվ բնական է, որ որոշ լեզվական միավորներ կարող են հասկանալի լինել միայն մշակութային համատեքստում:

Գրական թարգմանության մարտահրավերներից մեկն էլ այն է, որ առարկաներ և երևույթներ ցույց տվող որոշ բառեր և արտահայտություններ այնքան բնորոշ են աղբյուր մշակույթին, որ դժվար է թիրախ մշակույթում գտնել դրանց համարժեքը: Նման խնդիրներ կարող են առաջ գալ ցանկացած գեղարվեստական տեքստ թարգմանելիս, սակայն դրանք անխուսափելի են էմիգրանտ գրողների ստեղծագործությունների թարգմանության ընթացքում:

Արտագաղթը իհարկե նոր երևույթ չէ, սակայն վերջին տասնամյակներում այն ավելի մեծ տարածում է գտել՝ հեշտացնելով մշակույթների միջև հաղորդակցությունը, փոխանակումն ու շարժը (Li 2008:2): Քաղաքական հակամարտություններն իրենց ազդեցությունն են ունեցել և ունեն ամբողջ աշխարհում գաղթականների և փախստականների թվաքանակի աճի վրա: Հետևաբար այս երևույթը կարևոր դեր ունի քաղաքականության, տնտեսագիտության, աշխարհագրության, մշակույթի և գրականության ոլորտներում, ինչն էլ

հանգեցրել է «Էմիգրանտ գրողների գրականություն»<sup>1</sup> կոչվող նոր գրական ժանրի առաջացման, որը ժամանակակից ամերիկյան գրականության կարևորագույն ճյուղերից մեկն է:

Էմիգրանտ գրողները իրենց ստեղծագործություններում հիմնականում արծարծում են երկու թեմա. նրանք պատկերում են իրենց նախկին ապրելակերպը և կյանքը հայրենի երկրում և ներկայացնում են իրենց նոր կյանքը հյուրընկալող երկրում (Pourjafari and Vahidpour 2014:685-689): Որքան էլ գրողը հարմարվի հյուրընկալող երկրի մշակույթին, այնուամենայնիվ նրա ստեղծագործությունները հայրենի մշակույթի ազդեցությունն են կրում: Այս ամենի հետևանքով որոշ տեսաբաններ նշում են, որ Էմիգրանտների մոտ ձևավորվում է հիբրիդ մշակութային ինքնություն: Էմիգրանտ գրողների գրականությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու հիբրիդ մշակութային ինքնության առանձնահատկությունները (Pourjafari and Vahidpour 2014:690):

«Էմիգրանտ գրողների գրականությունը» ընթերցողին առաջարկում է մեկ այլ մշակույթի տարբերակ՝ հաճախ կիրառելով բառեր ու արտահայտություններ, որոնք առկա են միայն գրողի մայրենի լեզվում և կարող են ընկալվել միայն լեզվակիրների կողմից: Հաճախ անգլերենով ստեղծագործելիս Էմիգրանտ գրողները, ինչպես Ս. Բասնեթն է նշում, կիրառում են մշակութային տարրեր, որոնք հասկանալի չեն այլազգիների համար (Bassnett 2002): Մայրենի լեզվով գործածվող արտահայտությունները կամ գաղափարները ընթերցողին հասկանալի դարձնելու համար հիմնականում ծանոթագրություններ են կիրառվում:

Ամերիկյան գրականության արժեքավոր շերտերից է Էմիգրանտ գրողների գրականությունը, որոնք ներկայացնում են աշխարհի համարյա բոլոր ազգությունները՝ հայ, պարսիկ, աֆղան, հնդիկ, չինացի, ճապոնացի և այլն: Վերոնշյալ ազգությունները ներկայացնող Էմիգրանտ գրողների ստեղծագործությունների թարգմանությունը միանգամայն

---

<sup>1</sup> Հետազոտողները միակարծիք չեն տվյալ ժանրի գրականության անվան հարցում: Մի շարք հետազոտողներ (Vlasta 2015; Walkowitz 2006) գտնում են, որ «միգրանտի գրականություն» (migrant literature) եզրը չափազանց նեղ է և պետք է փոխարինվի «միգրացիայի գրականություն» (migration literature) եզրով, քանի որ միգրացիայի և բազմամշակութայնության խնդիրները կարող են քննարկել նաև ոչ-միգրանտ գրողները կամ միգրանտների երկրորդ կամ երրորդ սերունդները: Մենք ընտրել ենք «Էմիգրանտ գրողների գրականություն» եզրը, քանի որ հետազոտության ուսումնասիրության առարկան հենց Էմիգրանտ գրողի ստեղծագործությունն է:

տարբեր մարտահրավերներ է առաջադրում թարգմանչին՝ պայմանավորված նրանով, թե որքանով է գրողի մշակույթը մոտ թիրախ մշակույթին: Ակնհայտ է, որ, ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունները միազամայն այլ թարգմանական խնդիրներ են ստեղծում և այլ թարգմանական լուծումներ պահանջում, քան, օրինակ, աֆղանական ծագումով գրողի ստեղծագործությունները: Իրենց հերթին, աֆղան և պարսիկ էմիգրանտ գրողների ստեղծագործություններն էլ ավելի քիչ խնդրահարույց կարող են լինել հայ թարգմանչի համար, քան, օրինակ, ճապոնացի գրողինը, քանի որ աֆղաներենը, լինելով հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդ-արիական ճյուղի իրանական ենթաճյուղի արևելյան խմբին պատկանող լեզու, ընդհանուր բառեր ունի պարսկերենի հետ, որից հայերենը մեծ թվով բառեր է փոխառել, բացի այդ երկու լեզուներում առկա են նաև արաբերենից փոխառված բառեր:

Այսպես, օրինակ, աֆղանական ծագումով էմիգրանտ գրող Խալեդ Հոսեյնիի համաշխարհային ճանաչում գտած “The Kite Runner” («Օդապարուկ թռցնողը») վեպում հանդիպում ենք մի շարք բառերի և արտահայտությունների, ինչպիսիք են՝ «նամուս», «ջան», «աղա» և այլն, որոնք քաջաձանոթ են հայ ընթերցողին: Հետևաբար, հայերեն թարգմանվածքում ծանոթագրությունների անհրաժեշտությունն չկա՝ ի տարբերություն անգլերեն բնագրի:

Baba’s *stony eyes bore into mine* and, just like that, I wasn’t laughing anymore. “I mean to speak to you man to man. Do you think you can handle that for once?”

“Yes, Baba *jan*,” I muttered, marveling, not for the first time, at how badly Baba could sting me with so few words (Chapter 2 ).<sup>2</sup>

Բաբան *սառը հայացք գցեց վրաս*, և դա բավական էր, որ ծիծաղս կտրվեր:

-Ուզում եմ հետո խոսել, ինչպես տղամարդը տղամարդու հետ: Գոնե մի անգամ կհաջողվի՞ ի քեզ:

-Այո՛, Բաբա՛ *ջան*, - մրմնջացի ես, ոչ առաջին անգամ ապշած, թե ինչ ցավոտ է Բաբան կարողանում խայթել ինձ ընդամենը մի քանի բառով (Գլուխ 2):

---

<sup>2</sup> Անգլերեն բնագրի օրինակները ընտրված են առցանց էլեկտրոնային տարբերակից և տրված են ըստ գլուխների [https://archive.org/stream/TheKiteRunnerPDF\\_201805/The%20Kite%20Runner%20PDF\\_djvu.txt](https://archive.org/stream/TheKiteRunnerPDF_201805/The%20Kite%20Runner%20PDF_djvu.txt)

«Ջան» բառը արդի հայերենի գրական և խոսակցական լեզուներում, բարբառներում լայնորեն տարածված փաղաքշական բառ է, որը դրվում է կոչականի կողքին: Այն օգտագործվում է նաև այլ լեզուներով հային դիմելու կամ այդ բառով նրանց նույնացնելու համար: Բառը փոխառված է պարսկերենի “ jān” բառից, որ նշանակում է «հոգի», «կյանք», փաղաքշական՝ «հոգիս» և օգտագործվում է Հնդկաստանում, Պակիստանում, Աֆղանստանում, որոնք կրում են պարսկական մշակույթի ազդեցությունը ([https://en.wikipedia.org/wiki/Jan\\_\(Persian\\_name\)](https://en.wikipedia.org/wiki/Jan_(Persian_name))):

“Remember this,” Baba said, pointing at me, “The man is a Pashtun to the root. He has nang and namoos.” Nang. Namooos. Honor and pride. The tenets of Pashtun men. Especially when it came to the chastity of a wife. Or a daughter (Chapter 12).

-Հիշի՛ր,-ասաց Բաբան՝ ինձ մատնացույց անելով,- այդ մարդը մինչև ուղն ու ծուծը փաշտուն է: Նանգ ու նամուս ունի: Պատիվ ու հպարտություն: Փաշտուն տղամարդկանց սկզբունքներ: Հատկապես եթե խոսքը կնոջ մաքրաբարոյության մասին է: Կամ դստեր(Գլուխ 12):

Հայերենում «նամուսը» փոխառյալ բառ է արաբերենից, որտեղ այն ունի «օրենք», «սովորույթ» և «պատիվ» իմաստները: Հայերենում, թուրքերենում, աֆղաներենում տվյալ բառը կիրառվում է «պատիվ» իմաստով, որը մասնավորապես վերաբերում է կնոջ առաքինությանը (<https://en.wikipedia.org/wiki/Namus>): Հեղինակը nang և namoos բառերից հետո փորձել է ներկայացնել դրանց անգլերեն համարժեքները, որոնք իհարկե չեն ապահովում վերոնշյալ բառերի իմաստային նրբերանգները: Ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, ապա կարելի է ասել, որ հայերենի համար ավելորդ է «պատիվ և հպարտություն» հատվածը, որը անգլիախոս ընթերցողին բացատրելու նպատակով է ներառված: Հայերենում չկա «նանգ» բառը, սակայն շատ կիրառելի է «նամուս ու պատիվ ունեն» արտահայտությունը, ինչը լիովին կապահովեր բնագրի իմաստը:

Անշուշտ, բնագրում կան նաև բառեր, որոնք բացատրության կամ ծանոթագրության կարիք ունեն թարգմանվածքում: Բնագրի ընկալման և թարգմանության համար հիմնական դժվարությունը ներկայացնում են ոչ միայն իրոյթներ ներկայացնող բառերը, այլև ազգային-մշակութային այլ բաղադրիչները, ինչպես օրինակ՝ խորհրդանիշերը և դրանցով պայմանավորված՝ աշխարհընկալման տարբերությունները:

Ներկայացվող հետազոտության նպատակն է ցույց տալ հենքային գիտելիքի կենտրոնական դերը ոչ միայն բնագիր տեքստը ճիշտ ընկալելու, այլև թիրախ լեզու փոխանցելու համար՝ հիմնվելով Խալեդ

Հոսեյնիի «Օդապարուկ թռցնողը» վեպի կենտրոնական խորհրդանիշի՝ օդապարուկի և դրանից ածանցված *kite-flyer*, *kite-fighter* և *kite-runner* բառերի թարգմանության վրա, քանի որ դրանց տարանջատումը կարևոր է հասկանալու թե՛ ստեղծագործության մեջ նկարագրվող իրադարձությունները, թե՛ դրանց խորքային իմաստը, ներառյալ վեպի վերնագիրը:

Մ. Լարսոնը առաջադրում է այն գաղափարը, որ թարգմանչի ամենալուրջ խնդիրն է ճշգրիտ ներկայացնել և մեկնաբանել պատկերավոր արտահայտչամիջոցները, որոնք հիմնված են «պատմությունների կամ պատմական միջադեպերի վրա» (Larson 2008:21):

Վերոնշյալ խնդիրների թվին է պատկանում նաև խորհրդանիշների թարգմանությունը, քանի որ դրանք ավելի շատ իմաստ են պարունակում, քան կարող է թվալ, քանի որ ի լրումն իրենց բառացի իմաստի, ենթադրում են այլ իմաստներ՝ գաղափարներ ու հասկացություններ: Հաճախ, այդ գաղափարը ավելի վերացական է, ընդհանուր, խորհրդանիշն ավելի կոնկրետ է՝ առարկա, անձ, իրավիճակ կամ գործողություն:

Ինչպես Պերին (Perrine 1974:211-214) է գրում, գրական խորհրդանիշը առարկա է, անձ, իրավիճակ, գործողություն, որը բառացի իմաստ ունի պատմվածքում, բայց ներկայացնում է այլ իմաստներ նույնպես: Կրկնությունների, շեշտադրման միջոցով պատմվածքի ողջ համատեքում բանալի է տրամադրվում, որ որևէ բաղադրիչ պետք է ընկալվի որպես խորհրդանիշ է: Խորհրդանիշ համարվելու համար, բաղադրիչը պետք է ենթադրի իր բառացի իմաստից այլ իմաստ (ըստ Fadaee 2011):

Խորհրդանիշն ավելի շատ առնչվում է սոցիալ-մշակութային թեմաներին: Բենքը և ՄըքԳին գրում են, որ որոշ սոցիոլոգներ այսօր մշակույթը դիտում են որպես հիմնականում մարդկային հասարակությունների խորհրդանշային, գաղափարական և այլ անշոշափելի հայեցակետերի ամբողջություն: Ըստ նրանց՝ մշակույթի էությունը այն արժեքները, խորհրդանիշերն ու մեկնաբանություններն են, որոնց միջոցով կամ օգնությամբ ժամանակակից հասարակության մեջ կարելի է տարբերակել մի ժողովրդին մյուսից: Միևնույն աղբյուր լեզվի մշակույթին պատկանող մարդիկ սովորաբար խորհրդանիշերի իմաստը մեկնաբանում են այլ կերպ, քան թիրախ մշակույթի լեզվակիրները (Banks and McGee 1989:76):

Խորհրդանիշերի թարգմանության ժամանակ հիմնականում բախվում են այն խնդիրն, որ աղբյուր լեզվում գոյություն ունեցող որևէ

երևույթ ամբողջովին հակադրվում է թիրախ լեզվում գոյություն ունեցող երևույթին, կամ աղբյուր լեզվում գոյություն ունեցող որևէ երևույթ կամ վերջինիս համարժեքը թիրախ լեզվում ամբողջապես այլ իմաստներ ունի:

“Օդապարուկ թռցնողը” վեպի կենտրոնական խորհրդանիշը օդապարուկն է, որը աֆղանական մշակույթի կարևոր բաղադրիչ է: Կարծիք կա, որ օդապարուկներն ունեն ավելի քան 3000 տարվա պատմություն և առաջին անգամ կիրառվել են Չինաստանում և տարածվել արևելյան երկներում՝ Հնդկաստան, Պակիստան և Աֆղանստան: Աֆղանստանում դրանք խորհրդանշում են ազգային և անձնական հպարտությունը, պայքարը, անկախությունը, պատմությունը և կրոնը: Եվ վեպում նույնպես օդապարուկը մի քանի խորհրդանշական իմաստ ունի: Վեպում տեղ գտած բոլոր իրադարձությունները միահյուսվում են օդապարուկի մրցույթների և օդապարուկ կռվեցնելու հետ: Դրանք ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է տեղյակ լինել Աֆղանստանում օդապարուկ թռցնելու սովորույթներին:

Ուսումնասիրվող վեպը պատմում է Աֆղանստանի Քաբուլ քաղաքում ապրող Ամիր անունով մի տղայի և նրա ամենամտերիմ ընկերոջ՝ Հասանի մասին: Ամիրը մի ունևոր փաշտունի տղա էր, իսկ Հասանը՝ Ամիրի հոր ծառայի՝ Ալիի որդին: Տղաները ծնված օրվանից անբաժան են եղել և իրենց մանկության գրեթե յուրաքանչյուր պահը միասին են անցկացրել: Նրանց մանկության ամենակարևոր հիշողությունը օդապարուկ թռցնելը և օդապարուկ կռվեցնելու մրցույթներին մասնակցելն է:

*Every winter, districts in Kabul held a kite-fighting tournament. If you were a boy living in Kabul, the day of the tournament was undeniably the highlight of the cold season ... In Kabul, fighting kites was a little like going to war (Chapter 6).*

*Ամեն ձմեռ Քաբուլի թաղամասերում տեղի էր ունենում օդապարուկների մրցաշար: Եվ եթե դու Քաբուլում ապրող տղա ես, մրցաշարի օրն անհերքելիորեն քեզ համար ցուրտ սեզոնի գագաթնակետն է... Քաբուլում օդապարուկ կռվեցնելը մի քիչ նման էր պատերազմի գնալուն (Գլուխ 6):*

Տվյալ մշակույթում կարևոր է ոչ թե պարզապես օդապարուկ թռցնելը (flying kites), այլ օդապարուկների մրցույթում դրանք կռվեցնելը (fighting kites): Դա աֆղան տղաների և տղամարդկանց կյանքի ձևն է: Նրանց համար այդ հմտությունը թե՛ գիտություն է, թե՛ արվեստ: Ինչպես մի աֆղանացի է նշում՝ «ԱՄՆ-ում մարդիկ խուսափում են հակամարտությունից, իսկ աֆղանական մշակույթում ամեն ինչ կռվի



(պայքարի) մասին է»: (*The New York Times*, 14 Dec. 2007)  
Օդապարուկների մրցույթը հենց այդ կռվի խորհրդանիշն է:

*The **kite-fighting** tournament was an old winter tradition in Afghanistan.*

*It started early in the morning on the day of the contest and didn't end until only the winning **kite flew** in the sky-I remember one year the tournament outlasted daylight (Chapter 6).*

**Օդապարուկ թռցնելը** Աֆղանստանի հին ձմեռային ավանդույթ էր: Այն սկսվում էր վաղ առավոտյան և չէր ավարտվում, մինչև որ երկնքում **չսավառնի** վերջին հաղթած **օդապարուկը** (Գլուխ 6):

Ինչպես կարելի է տեսնել օրինակից, թարգմանիչը *kite-fighting* բառը թարգմանել է «օդապարուկ թռցնել», ինչը ընդունելի չէ, քանի որ փոխում է բնագրի իմաստը: Եթե օդապարուկ թռցնելը ազատություն գտնել է խորհրդանշում, ապա օդապարուկ կռվեցնելը՝ պայքար: Դրանք չեն կարող փոխարինաբար օգտագործվել:

Վեպի գլխավոր հերոսի՝ Ամիրի համար վեպում նկարագրվող օդապարուկ կռվեցնելու մրցաշարը խորհրդաշնում է նրա ներքին հակամարտությունը, հոր՝ Բաբայի ուշադրությունը գրավելու պայքարը, քանի որ հաղթանակի դեպքում նա կարժանանար վերջինիս գովասանքին: Հետաքրքիր է այն փաստը, որ օդապարուկը միակ ընդհանրությունն է Բաբայի և Ամիրի հետաքրքրությունների շրջանակում: Նրանց երազանքները, հույսերը և անձնային հատկանիշները շատ են տարբերվում միմյանցից, սակայն օդապարուկները նրանց աշխարհների միջև կապ էին ստեղծու:

*I kept stealing glances at Baba sitting with Rahim Khan on the roof, wondered what he was thinking. Was he cheering for me? Or did a part of him enjoy watching me fail? That was the thing about **kite flying**: Your mind drifted with the kite (Chapter 7).*

Ես շարունակ աչքս գցում էի Բաբային, որ Ռահիմ Խանի հետ նստած էր տանիքին. շատ կուզեի իմանալ, թե ինչ է մտածում: Ի՞նչ էր կրկնազուն է: Թե՞ ինչ-որ չափով ուրախ կլինեիր տեսնելու իմ անհաջողությունը: Այդպես է **օդապարուկ թռցնելը**. միտքդ հետը թռցնում է (Գլուխ 7):

Վերոնշյալ հատվածում հատկանշական է *your mind drifted with the kite* արտահայտությունը, որտեղ *drifted* բառը թարգմանվել է որպես «թռցնել»՝ «միտքդ էլ հետն է թռցնում»: Բնագրում տվյալ նախադասության ենթական օդապարուկը չէ, այլ հենց մարդու միտքը, հետևաբար, ավելի ընդունելի տարբերակ կլինի՝ «միտքդ էլ հետն է սավառնում»:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ օդապարուկի մրցույթը աֆղանացիների համար իրենց ռազմատենչ էներգիան ծախսելու միջոց է՝ առանց արյուն թափելու: Սակայն իրականում օդապարուկ կռվեցնելը այդքան էլ անմեղ ու անվտանգ զբաղմունք չէր:

*The streets filled with **kite fighters**, jerking and tugging on their lines, squinting up to the sky, tying to gain position to cut the opponent's line. Every **kite fighter** had an assistant- in my case, Hassan-who held the spool and fed the line (Chapter 6).*

Փողոցները լիքն էին **օդապարուկ կռվեցնողներով**, որոնք ձգում ու քաշում էին իրենց լարերը, աչքերը կկոցում երկինք նայելիս, փորձում այնպիսի դիրք բռնել, որ կտրեն մրցակցի լարը: Ամեն **օդապարուկ կռվեցնող** ուներ իր օգնականը, իմը Հասսանն էր. նա պահում էր կոճը և աստիճանաբար արձակում լարը(Գլուխ 6):

*By the time the snow melted and the rains of spring swept in, every boy in Kabul bore telltale horizontal gashes on his fingers from a whole winter of **fighting kites** (Chapter 6).*

Երբ ձյունը հալվում էր, ու սկսվում էին գարնանային անձրևները, Քաբուլի բոլոր տղաների մատներին ամբողջ ձմեռ **օդապարուկներ կռվեցնելը** մատնող հորիզոնական խոր վերքեր կային (Գլուխ 6):

Տվյալ հատվածը հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, որ Աֆղանստանում օդապարուկների լարին փշրած ապակի էին սոսնձում, որպեսզի օդապարուկ կռվեցնելիս կտրեն հակառակորդի լարը: Այստեղից էլ առաջանում էին նրանց ձեռքի վերքերը: (*The New York Times*, 14 Dec. 2007):

*One time, a bratty Hindi kid whose family had recently moved into the neighbourhood told us that in his hometown, **kite fighting** had strict rules and regulations. "You have to play in a boxed area and you have to stand at a right angle to the wind," he said proudly. "And you can't use aluminum to make your glass string." (Chapter 6)*

Մի անգամ մի լկտված հնդիկ երեխա, որի ընտանիքը վերջերս էր տեղափոխվել մեր թաղը, պատմեց մեզ, որ իր հայրենի քաղաքում **օդապարուկ կռվեցնում են** խիստ կարգ ու կանոնով: «Պետք է խաղալ փակ տարածքում և պետք է կանգնել քամու նկատմամբ ճիշտ անկյան տակ,-ասաց նա հպարտությամբ,-իսկ ապակեպար լարը այլուհի՞նով ծածկելն ընդհանրապես արգելված է»:

*Afghans cherish custom, but abhor rules. And so it was with **kite fighting**. The rules were simple: No rules. **Fly** your **kite**. Cut the opponents. Good luck (Chapter 6).*

Աֆղանները պաշտում են ավանդույթը, բայց զգվում են կանոններից : Այդպես էր նաև **օդապարուկ կռվեցնելու** գործում: Կանոնները պարզ են. դրանք չկան: **Թոցրու՛ օդապարուկը:** Կտրի՛ր հակառակորդի լարը: Հաջողություն՛ն քեզ (Գլուխ 6):

Այսպիսով, Աֆղանստանում օդապարուկ կռվեցնելու միակ կանոնը հաղթանակն էր, ինչը դարձյալ բնորոշում էր տվյալ մշակույթը: Այստեղ պարզ է դառնում, թե ինչու էր Ամիրն այդքան ուզում հաղթել:

Օդապարուկների մրցույթի կարևոր մաս է ընկնող՝ պարտված օդապարուկի հետևից վազելն ու դրան տիրանալը: Անգլերենում սա բնութագրվում է *to run the kite* արտահայտությամբ, որից էլ կազմվել է *kite-runner* բառը՝ մատնանշելու տվյալ գործողությունը կատարող անձին:

Անիրաժեշտ է նշել, որ ընկնող օդապարուկի հետևից վազում են հիմնականում աղքատ երեխաները, որոնք չեն կարող օդապարուկ գնել, և դա նրանց համար օդապարուկ ունենալու հնարավորություն է (*The New York Times*, 14 Dec. 2007): Բացի այդ, հաղթողի համար կարևոր է տուն տանել վերջին ընկած օդապարուկը՝ որպես ռազմական ավար, որպես իր հաղթանակի խորհրդանիշ: Տվյալ արտահայտությունը հայերեն կարող է թարգմանվել «օդապարուկի հետևից վազող» նկարագրական արտահայտությամբ, սակայն այն ամբողջությամբ չի փոխանցում բնագրի իմաստը, հետևաբար, չի կարող պահպանել տեքստի գործաբանական արժեքը ևս: Տվյալ երևույթի ամբողջական իմաստը կհաղորդեր «ընկնող օդապարուկի հետևից վազել՝ այն հափշտակելու համար» արտահայտությունը, որը չափազանց երկար է ընդունելի տարբերակ լինելու համար, սակայն նպատակահարմար կլիներ գոնե *to run the kite* արտահայտության առաջին կիրառության հատվածում նման կերպ թարգմանել՝ իմաստը հասկանալի դարձնելու համար:

*Never mind that we spent entire winters flying kites, running kites*  
**(Chapter 4).**

Հեթո ինչ, որ մենք ձմեռներ ենք անցկացրել **օդապարուկ թոցնելով ու օդապարուկի հետևից վազելով** (Գլուխ 4):

Տվյալ օրինակում առաջին անգամ է գործածված *to run kites* արտահայտությունը, հետևաբար կարելի է թարգմանել «ընկնող օդապարուկի հետևից վազելով»: Հետագայում արդեն համատեքստից հասկանալի է, որ երեխաները վազում են ընկնող օդապարուկի հետևից:

*They fell from the sky like shooting stars with brilliant, rippling tails, showering the neighbourhoods below with prizes for the kite runners*  
**(Chapter 7).**

Ծածանվող փայլուն օդապարուկները ասֆոլտի նման ընկնում էին երկնքից ու թափվում թաղերի վրա, դառնում **օդապարուկի հեփկից վազողների** համար մրցանակներ (Գլուխ 7):

*The real fun began when a kite was cut. That was where the **kite runners** came in, those kids who chased the windblown kite drifting through the neighborhoods until it came spiraling down in a field, dropping in someone's yard, on a tree, on a rooftop. The chase got pretty fierce; hordes of **kite runners** swarmed the streets, shoved past from each other like those people from Spain I'd read about once, the ones who ran from the bulls...And when a **kite runner** had his hands on a kite, no one could take it from him.*

*For **kite runners**, the most coveted prize was the last fallen kite of a winter tournament (Chapter 6).*

Իրական զվարճանքը սկսվում էր, երբ օդապարուկը կտրվում էր: Այդ ժամանակ խաղի մեջ էին մտնում **օդապարուկի հեփկից վազողները**՝ այն երեխաները, որոնք թաղերով վազելով հեփապանդում էին քամուց քշվող օդապարուկը, մինչև որ այն պարուրածն ներքև էր ընկնում որևէ դաշտի մեջ, մեկի բակում, ծառին կամ փանիքին: Հետապնդումը բավականին դաժան է. **օդապարուկի հեփկից վազողների** ամբոխը վխտում էր փողոցներում, հրում միմյանց, ինչպես Իսպանիայում ցուլերից փախչողները, որոնց մասին մի անգամ կարդացել էի: ...Եթե **օդապարուկի հեփկից վազողը** վերցնում էր օդապարուկը, ոչ ոք չէր կարող այն ձեռքից խլել:

**Օդապարուկի հեփկից վազողների** համար ամենաբաղձալի մրցանակը ձմեռային մրցաշարի վերջում ընկած օդապարուկն էր (Գլուխ 6):

Նշված վերջին հատվածի թարգմանության մեջ ուշադրության արժանի է հետևյալ հատվածը՝ “when a kite runner had his hands on a kite, no one could take it from him”, որ հայերեն թարգմանվել է «եթե օդապարուկի հեփկից վազողը վերցնում էր օդապարուկը, ոչ ոք չէր կարող այն ձեռքից խլել»:

Կարելի է պնդել, որ *վերցնել* բայը ամբողջովին չի փոխանցում բնագրի իմաստը, և հետևյալ թարգմանությունը «եթե օդապարուկի հեփկից վազողին վերջապես հաջողվում էր հափշտակել՝ «թոցնել» ընկած օդապարուկը, ոչ ոք չէր կարող այլևս այն իր ձեռքից խլել» ավելի ընդունելի կարող է լինել մի քանի առումով: Նախ այն ավելի ճիշտ կփոխանցի *to lay hands on* արտահայտության իմաստը, և երկրորդը, որն առավել կարևոր է, կօգնի լուծել վերնագրի խնդիրը, որը կենտրոնական է

վեպի ուղերձը հասկանալու համար: *Kite fighter, kite flyer* և *kite runner* տարբեր մարդիկ են, հետևաբար, դրանք չեն կարող նույն կերպ թարգմանվել: Վեպը վերնագրվել է “The Kite-Runner” խորհրդանշելու մարդուն, ով չի կարող մասնակցել բուն մրցությանը, նա դրա հանդիսատեսն է, բայց ցանկանում է ընկած օդապարուկը հափշտակելով դառնալ մրցույթի մասնիկը և արժանանալ հարգանքի ու սիրո: Վեպի սկզբում «օդապարուկի հետևից վազողը» Հասանն է, նա չի համարվում աֆղան հասարակության լիարժեք անդամ, բայց ամեն ինչի պատրաստ է Ամիրի սիրուն արժանանալու համար

(<https://freebooksummary.com/symbolism-of-the-kites-kite-runner-72925>):

Այսպիսով, վեպի հայերեն թարգմանվածքի վերնագիրը՝ «Օդապարուկ թռցնողը», առաջին հայացքից չի ապահովում համարժեքություն, քանի որ վերաբերում է *kite-flyer* բառին: Կարելի է ենթադրել, որ թարգմանիչը հենց դա էլ նկատի է ունեցել՝ մտածելով, որ «օդապարուկի հետևից վազողը» համապատասխան վերնագիր չէ: Սակայն, իրականում «օդապարուկ թռցնողը» հաջողված թարգմանություն կարելի է համարել, եթե այն դիտենք որպես բառախաղ և թռցնող բառը չակերտների մեջ դնենք::

Հայերենում «թռցնող» գոյականն ունի նաև «*հափշտակիչ, գող, փանող*» իմաստը, որ ավելի շատ բնորոշ է խոսակցական լեզվին: Օդապարուկի մրցարշավի ժամանակ կարևորվում էր կովեցնողների ճարակությունը՝ օդում հաղթանակ տանելուց հետո վազելու և օդապարուկը հափշտակելու համար: Մրցարշավի ժամանակ օդապարուկ կովեցնելուց առավել կարևոր էր օդապարուկ «թռցնելու» կարողությունը, քանզի դա էր խորհրդանշում վերջնական հաղթանակը:

Այսպիսով, այստեղ «թռցնող» բառը կարելի է ընկալել իր երկու իմաստով: Այնուամենայնիվ, որպեսզի ընթերցողը դա ըմբռնի, տեքստում անհրաժեշտ է որևէ կերպ դա ակնարկել, ինչն էլ առաջարկվել է վերը քննարկված օրինակում՝ «*երբ օդապարուկի հետևից վազողին հաջողվում է հափշտակել՝ «թռցնել» ընկած օդապարուկը...*»: Չակերտներով գրված տարբերակի մի քանի այլ հատվածներում կիրառումը ընթերցողին կօգնեք ճիշտ ընկալել «kite-runner» բառի, ինչպես նաև վեպի հայերեն վերնագրի իմաստը:

*Up and down the streets, kite runners were returning triumphantly, their captured kites held high (Chapter 7).*

*Փողոցներով հաղթական վերադառնում էին օդապարուկների հետևից վազողները՝ նվաճած օդապարուկները բարձր պահած (Գլուխ 7):*

Այս հատվածում «captured» բառի իմաստը փոխանցվել է դրա հայերեն «նվաճած» համարժեքով: Օդապարուկի մրցավազքում, ինչպես արդեն նշվել է, ամենակարևորը օդապարուկի կռվից հետո նրա հետևից վազելն ու «հափշտակելն է», ուստի ավելի ճիշտ կլինի թարգմանել *հափշտակած օդապարուկները*:

*Omar headed the ball to his brother. “I hear he’s a great **kite runner**.”*  
(Chapter 7)

*Օմարը գլխով պաս փվեց եղբորը:*

*-Լսել եմ, որ նա շատ լավ **օդապարուկի հեփուկից վազող է** (Գլուխ 7):*

Ինչպես նախորդ օրինակներում, այստեղ նույնպես «օդապարուկի հետևից վազող»-ը լիովին չի ներկայացնում *kite-runner* բառի իմաստը: Խոսքը Հասանի մասին է, ով Քարուլում հայտնի էր որպես թե՛ լավ օդապարուկ կռվեցնող, թե՛ «թոցնող»: Նա ստույգ գիտեր օդապարուկն ինչ ուղղությամբ է շարժվելու, երբ և որտեղ կիջնի, երբեմն անգամ նա չէր էլ վազում, այլ պարզապես գնում, նստում էր իր հաշվարկած վայրում և սպասում էր օդապարուկին: Ուստի կարող ենք ասել, որ Հասանը «թոցնող» էր: Այս իսկ պատճառով տվյալ դեպքում կարելի է առաջարկել հետևյալ տարբերակը՝ «Լսել եմ, նա արտակարգ օդապարուկ «թոցնող» է»:

*Over the years, I had seen a lot of guys **run kites**. But Hassan was by far the greatest **kite runner** I’d ever seen. It was downright eerie the way he always got the spot the kite would land before the kite did, as if he had some sort of inner compass (Chapter 6).*

*Տարիների ընթացքում ես **օդապարուկի հեփուկից վազող շատ փղանների եմ տեսել**, բայց Հասանը իմ տեսածներից լավագույնն էր: Շշմելու էր, ինչպես նա միշտ գիտեր օդապարուկի տեղը, նախքան այն կընկներ, կարծես ինչ-որ ներքին կողմնացույց ուներ (Գլուխ 6):*  
*He’d **run kites** and never look up at the sky, and people used to say he was chasing the kite’s shadow (Chapter 22).*

*Նա **վազում էր օդապարուկի հեփուկից**, բայց երբեք երկինք չէր նայում, և մարդիկ ասում էին, որ նա օդապարուկի ստվերն է հեփապնդում (Գլուխ 22):*

Հիշարժան է Հասանի վերջին պայքարը օդապարուկի համար: Նա խոստացել էր Ամիրին, որ այդ օդապարուկն իրենն է լինելու: Իրեն զոհաբերելով՝ Հասանը վերջին անգամ «հափշտակեց» օդապարուկը և բերեց Ամիրին:

*He’d kept his promise and **run** the last **kite** for me (Chapter 7).*

*Պահել է իր խոսքումը և վերջին **օդապարուկը բռնել է** ինձ համար (Գլուխ 7):*

Տվյալ օրինակում թարգմանիչը իմաստը ճիշտ է արտահայտել «բռնել» բայի միջոցով: Իմաստը ընդհանրական դարձնելու համար կարելի էր նաև տալ հետևյալ տարբերակը՝ «նա վազել ու ինձ համար «թոցրել» էր վերջին օդապարուկը»:

Երբ Հասանը բռնում է ընկնող օդապարուկը, նրա ճանապարհին կանգնում է փաշտուն Ասեֆը իր ավազակախմբի հետ և փորձում խլել այն:

*“Amir agha won the tournament and I ran this kite for him. I ran it fairly. This is his kite.” (Chapter 7)*

Ամիր աղան հաղթել է մրցաշարում, ես էլ նրա համար **վազել եմ** ու օդապարուկը բռնել: Արդար **վազել եմ**: Սա նրա օդապարուկն է (Գլուխ 7):

Վերոնշյալ օրինակում *“I ran it fairly”* հատվածի իմաստը կարելի է փոխանցել «ես արդար եմ պայքարել դրա համար» համատեքստային թարգմանության կամ «ես արդար եմ դրան տիրացել» տարբերակով, որտեղ «տիրացել» բայը տվյալ համատեքստում ավելի ճշգրիտ է փոխանցում to run the kite արտահայտության իմաստը՝ այն է՝ «վազել՝ պայքարելով՝ հափշտակելու ընկնող օդապարուկը»:

Հասանը հրաժարվում է զիջել և ավազակախումբը բռնաբարում է նրան: Ամիրը, տեսնելով Հասանին, հասկանում է եղելությունը, սակայն ոչինչ չի անում պաշտպանելու նրա պատիվը: Այդ դեպքը անջնջելի հետք է թողնում Ամիրի և երկու ընկերների հարաբերությունների վրա:

Այսպիսով, *kite runner*, *kite flyer* և *kite fighter* բառերն ունեն տարբեր իմաստներ և դրանք ցույց էին տալիս ոչ միայն մրցարշավում օդապարուկ թոցնելը կամ կովեցնելը, այլ պայքարն իրական կյանքում: Օդապարուկ թոցնելու իրավունք ունեին միայն հարուստները, քանզի միայն իրենք կարող էին իրենց թույլ տալ օդապարուկ գնել, իսկ մրցարշավն էլ հենց պայքարն էր խորհրդանշում հարուստների միջև, մինչդեռ օդապարուկ «թոցնողները» աղքատներն էին, հարուստ կովեցնողների ծառաները շատ հաճախ, ինչպես Հասանի դեպքում էր: Սա խորհրդանշում էր նաև նրանց պայքարը՝ ձգտելու դուրս գալ հասարակություն, դառնալու օդապարուկ «թոցնողից» օդապարուկ կովեցնող:

Հետագայում, Ամիրը այսպես է նկարագրում Հասանին նրա որդուն՝ Սոհրաբին:

*“Did I ever tell you your father was the best kite runner in Wazir Akbar Khan? (Chapter 24)*

-Ես երբևէ ասե՞լ եմ քեզ, որ հայրդ Վազիր Աքբար Խանի լավագույն **օդապարուկ վազեցնողն** էր (Գլուխ 24):

Այս համատեքստում էլ *kite runner* թարգմանվել է որպես «օդապարուկ վազեցնող», որը իմաստային փոփոխություն է առաջացնում. վեպի հիմքում ընկած գաղափարներից մեկն էլ հենց այն է, որ Հասանը չկարողացավ փոխել իր հասարակական դիրքը, նա միշտ մնաց «օդապարուկի հետևից վազող»:

Հետագայում Ամիրն ինքն է դառնում «ընկնող օդապարուկի հետևից վազող»՝ արժանանալու Սոհրաբի վստահությանն ու սիրուն: Հատկանշական է այն գաղափարը, որը դրված է Ամիրի՝ Հասանի որդուն ուղղված խոսքերում. վերջինս Սոհրաբին դիմում է այն նույն խոսքերով, որով ժամանակին Հասանն իրեն էր դիմում՝ ցույց տալով, որ պատրաստ է նրա հետևից վազել «թեկուզ հազար անգամ»: Վեպի սկզբում և վերջում օգտագործելով նույն խոսքերը՝ հեղինակը կրկնության միջոցով խորհրդանշային իմաստ է հաղորդել դրանց:

*“Do you want me to **run** that **kite** for you?”*

*His Adam’s apple rose and fell as he swallowed. The wind lifted his hair. I thought I saw him nod.*

*“For you, a thousand times over,” I heard myself sat.*

*Then I turned and ran. (Chapter 24)*

*-Ուզու՞մ ես՝ քեզ համար **վազեմ օդապարուկի հետևից**:*

*Նրա աղամախնձորը բարձրացավ ու իջավ կույ տալուց: Քամին բարձրացրեց մազերը: Ինձ թվաց՝ տեսա, որ նա գլխով արեց:*

*-Քեզ համար՝ թեկուզ հազար անգամ,- լսեցի սեփական ձայնս:*

*Հետո շրջվեցի ու վազեցի (Գլուխ 24):*

Ամփոփելով, կարելի է ասել, որ վեպում օդապարուկը մի քանի խորհրդանշային իմաստ ունի: Հասանի համար այն Ամիրի հանդեպ իր հավատարմության խորհրդանշան է: Օդապարուկը միաժամանակ խորհրդանշում է և՛ Ամիրի երջանկությունը, և՛ գործած մեղքը: Մանուկ հասակում նա ամենից շատ սիրում էր օդապարուկ կռվեցնել, քանի որ դա նրան իր հոր հետ միջոցն էր: Օդապարուկը մեկ այլ նշանակություն է ձեռք բերում, երբ Ամիրը թույլ է տալիս, որ Հասանին բռնաբարեն. վերջինս ուզում էր կապույտ օդապարուկը իրենց հաղթանակից հետո տալ Ամիրին, որպեսզի նա Բաբայի աչքին բարձրանա, սակայն հայտնվում է Ասեֆն իր ընկերների հետ: Այդ դեպքից հետո օդապարուկը վերաիմաստավորվում է՝ դառնալով Ամիրի՝ Հասանին դավաճանելու խորհրդանշանը: Մինչև վեպի ավարտն այլևս Ամիրին չենք տեսնում օդապարուկ թռցնելիս, մինչև վերջինս հանդիպում է Սոհրաբին՝ Հասանի որդուն, ով Ամիրի «փրկության» միակ ուղին էր և ում շնորհիվ օդապարուկն այլևս չի ներկայացնում Ամիրի մեղքերը, այլ հակառակը՝



նոր կյանքի սկիզբը (<https://www.litcharts.com/lit/the-kite-runner/symbols/kites>):

Այսպիսով, գրական երկում առկա խորհրդանիշերը ընկալելու և դրանց իմաստը թարգմանության մեջ ճիշտ փոխանցելու առաջնային նախապայմանը համապատասխան հենքային գիտելիքի ձեռքբերումն է, այնուհետև համապատասխան թարգմանական հնարի՝ բառացի, բացատրական կամ նկարագրական թարգմանության, կամ ծանոթագրության կիրառումը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հոսեյնի, Խալեդ. *Օդապարուկ թռցնողը (Թարգմանությունն անգլերենից՝ Մարիա Սադոյանի)*, Երևան, Զանգակ, 2017
2. Banks, J. A. & McGee, C. A. (Eds.). *Multicultural education: Issues and perspectives*. London and New York: Routledge, 1989
3. Bassnett S., *Translation studies*, Routledge, 2002.
4. Fadaee E. Symbols, metaphors and similes in literature: A case study of "Animal Farm". *Journal of English and Literature* Vol. 2(2), pp. 19-27, February 2011  
[http://www.academicjournals.org/article/article1379412793\\_Fadaee.pdf](http://www.academicjournals.org/article/article1379412793_Fadaee.pdf)
5. Hosseini, Khaled *The Kite Runner*, Bloomsbury 2013
6. [https://archive.org/stream/TheKiteRunnerPDF\\_201805/The%20Kite%20Runner%20PDF\\_djvu.txt](https://archive.org/stream/TheKiteRunnerPDF_201805/The%20Kite%20Runner%20PDF_djvu.txt)
7. Larson, M. L. *Meaning-based translation: A guide to cross-language equivalence*. Lanham, MD: University Press of America, 1984
8. Li, Peter S. "World Migration in the Age of Globalization: Policy Implications and Challenges". *New Zealand Population Review*, 33/34 (2008): 1-22
9. Pourjafari, Fatemeh and Vahidpour, Abdolali. "Migration Literature: A Theoretical Perspective". *The Dawn Journal* 3.1 (2014). 679-692.
10. Semple, Kirk. "For Afghan boys and men, kite-flying is a way of life". *The New York Times*, 14 Dec. 2007
11. Vlasta, Sandra. *Contemporary Migration Literature in German and English: A Comparative Study*. Brill, Leiden, 2015.

12. Walkowitz, Rebecca, ed. *Immigrant Fictions*. University of Wisconsin Press, Wisconsin, 2006.
13. <https://freebooksummary.com/symbolism-of-the-kites-kite-runner-72925>
14. <https://www.litcharts.com/lit/the-kite-runner/symbols/kites>

## REFERENCES

1. Hoseyni, Xaled O'daparowk t'r'cnoghy' (T'argmanowt'yownn anglerenic' Maria Sadoyani), Er&an, Zangak, 2017
2. Banks, J. A. & McGee, C. A. (Eds.). *Multicultural education: Issues and perspectives*. London and New York: Routledge, 1989
3. Bassnett S., *Translation studies*, Routledge, 2002.
4. Fadaee E. Symbols, metaphors and similes in literature: A case study of "Animal Farm". *Journal of English and Literature* Vol. 2(2), pp. 19-27, February 2011  
[http://www.academicjournals.org/article/article1379412793\\_Fadaee.pdf](http://www.academicjournals.org/article/article1379412793_Fadaee.pdf)
5. Hosseini, Khaled *The Kite Runner* , Bloomsbury 2013
6. [https://archive.org/stream/TheKiteRunnerPDF\\_201805/The%20Kite%20Runner%20PDF\\_djvu.txt](https://archive.org/stream/TheKiteRunnerPDF_201805/The%20Kite%20Runner%20PDF_djvu.txt)
7. Larson, M. L. *Meaning-based translation: A guide to cross-language equivalence*. Lanham, MD: University Press of America, 1984
8. Li, Peter S. "World Migration in the Age of Globalization: Policy Implications and Challenges". *New Zealand Population Review*, 33/34 (2008): 1-22
9. Pourjafari, Fatemeh and Vahidpour, Abdolali. "Migration Literature: A Theoretical Perspective". *The Dawn Journal* 3.1 (2014). 679-692.
10. Semple, Kirk. "For Afghan boys and men, kite-flying is a way of life". *The New York Times*, 14 Dec. 2007
11. Vlasta, Sandra. *Contemporary Migration Literature in German and English: A Comparative Study*. Brill, Leiden, 2015.
12. Walkowitz, Rebecca, ed. *Immigrant Fictions*. University of Wisconsin Press, Wisconsin, 2006.
13. <https://freebooksummary.com/symbolism-of-the-kites-kite-runner-72925>
14. <https://www.litcharts.com/lit/the-kite-runner/symbols/kites>

## ЛИЛИТ БАДАЛЯН – РОЛЬ ФОНОВЫХ ЗНАНИЙ В ВОСПРИЯТИИ СИМВОЛОВ В ЛИТЕРАТУРЕ И В ПРОЦЕССЕ ИХ ПЕРЕВОДА

**Ключевые слова:** *символ, «литература писателей-эмигрантов», «миграционная литература» базовые знания, способы перевода*

В статье подчеркивается важность фоновых знаний в восприятии символов в литературе, особенно в литературе *писателей-эмигрантов* (также известной как «*миграционная литература*»), и их последующем переводе. Важность фоновых знаний иллюстрируется посредством анализа символа воздушного змея в романе «Бегущий за ветром» афганско-американского писателя Халеда Хоссейни. Знание о соревновании воздушных змеев в афганской культуре является ключевым для понимания символики в романе, поскольку воздушные змеи символизируют чувство национальной гордости и независимости, борьбу и дух соперничества. Помимо вышеупомянутых символических значений, в исследуемом романе воздушные змеи имеют также иные значения для главных героев, и эти значения меняются с течением времени. Исследование также затрагивает проблемы перевода подобных символов и то, как фоновые знания служат полезным инструментом для их решения.

## LILIT BADALYAN – THE ROLE OF BACKGROUND KNOWLEDGE IN THE PERCEPTION OF SYMBOLS IN LITERATURE AND THEIR TRANSLATION

**Key Words:** *symbol, migration literature, background knowledge, translation techniques*

The paper highlights the importance of the background knowledge in the perception of symbols in literature, particularly “migration literature” and their subsequent translation. The point is illustrated by the analysis of the symbolism of *kites* in the novel “The Kite Runner” by Afghan-American author Khaled Hosseini. The knowledge of flying kites, fighting kites and running kites in Afgan culture is central to understanding the symbolism in the novel, for kites symbolize their national and personal pride, struggle, spirit of fighting, independence. Besides the above-mentioned symbolic meanings, in the novel under study the kites carry some other implications for the main characters and these implications change in the course of time. The study also focuses on the challenges of translating such symbols and how background knowledge can be a helpful tool for addressing them.

Ներկայացվել է՝ 04.02.2019  
Գրախոսվել է՝ 02.02.2019

**ԴԻՊԿԱԾԱԲԱՌԵՐԸ ԱՐԱ ԱԼՈՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ**

**ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ դիպվածաբառ, բանաստեղծական խոսք, պոեզիա, գեղարվեստական խոսք, ոճական կիրառություն, բարդ բառեր, նորաբանություններ, հոդակապով բառեր, անհոդակապ բառեր, ածանց*

Գեղարվեստական գրականության լեզուն համազգային լեզվի մշակման ու կատարելագործման կարևորագույն օղակներից է: Ուստի յուրաքանչյուր հեղինակ իր ստեղծագործություններով ստանձնում է պատասխանատու դեր՝ բերելով լեզվամտածողության իր որակը:

Արդի բանաստեղծական խոսքը հիշեցնում է լեզվական խճանկար, և յուրաքանչյուր հեղինակի մտահոգությունը պետք է լինի, չկորցնելով դարերի մշակած լեզվական դիմագիծը, յուրացնել նորը, կենսունակը:

Անկախ գեղարվեստական արժեքից՝ արդի բանաստեղծական խոսքը ուսումնասիրության և հետազոտության կարիք ունի: Այսօր մեզ առաջարկվող չափաձոն էապես տարբերվում է ավանդական պատկերացումներից: Այն իր ձևով, իմաստով, կառուցվածքով, բառապաշարով և ոճական միջոցներով ժամանակի պահանջից է բխում. այն այլ է, հաճախ ոչ կանոնիկ և խիստ տարբերվում է նախկինում եղածից: Պատճառներից մեկն էլ այն է, որ ժամանակակից պոեզիան, ինչպես մշակութային որևէ երևույթ, անմիջականորեն առնչվում է հասարակության մեջ ժամանակակից կյանքում տեղի ունեցող զարգացումներին: Այդտեղ տեղի ունեցող չափազանց արագ անցումները թողնում են իրենց դրոշմը նաև բանաստեղծական խոսքում:

Նկատելի է նաև այն միտումը, որ ժամանակակից պոեզիան, թեկուզ լեզվական առումով, հիմնականում ուսումնասիրության է ենթարկվում ճանաչում ու գնահատություն գտած հեղինակների գործերի շրջանակում: Մինչդեռ արդի հեղինակները, որոնք ճանաչում ու ընթերցողների բանակ ունեն նաև համացանցային տիրույթում (խոսքը հատկապես Facebook սոց. կայքի մասին է), ուշադրության քիչ են արժանանում կամ էլ քննվում են ընդհանուր գծերով՝ ավելի լայն համայնապատկերում՝ անտեսելով նրանց ստեղծագործական ու լեզվաոճական մի շարք առանձնահատկությունները, երբեմն նույնիսկ՝ համահավասարեցնելով:

Մեր աշխատանքում ուսումնասիրության նյութ են դարձել լրագրող, բանաստեղծ, երաժիշտ Արա Ալոյանի բանաստեղծական երկու ժողովածուներում (Ալոյան 2014) տեղ գտած նոր բառերը:

Որևէ հեղինակի բառապաշարը կարելի է քննել մի քանի տեսանկյունով: Առաջին հերթին ուշադրության են արժանանում ստեղծագործական մեթոդը, բառընտրությունը և նրա հարմարվողականությունը խոսքաշարին, բառի՝ գրողի միտքն ու ասելիքը լիովին արտահայտելը, հեղինակային լեզվի բերած նպաստը գրական խոսքին և այն նորություններին, որ յուրաքանչյուր ստեղծագործող բերում է:

Այս մոտեցմամբ քննելով Արա Ալոյանի պոեզիայի բառապաշարը՝ կարելի է նկատել, որ այն բավականին բազմազան է, ներառում է համաժողովրդական բառապաշարի գրեթե բոլոր շերտերը, ինչպես նաև այն, որ հեղինակը, եղած բառամթերքով չբավարարվելով, համարձակ քայլեր է կատարում և կերտում ու օգտագործում է նոր բառեր: Եվ պատահական չէ, որ հենց Արայի պոեզիան մեր ուսումնասիրության նյութը դարձավ: Քիչ են արդի պոեզիայում հեղինակները, որոնք նոր բառերով լեզուն հարստացնելու ու նորը ստեղծելու կարողությամբ են օժտված: Այս տեսանկյունով մոտ երեք տասնյակ հեղինակների ստեղծագործություններ են քննության ենթարկվել, սակայն պետք է նշել, որ ժամանակակից բանաստեղծության լեզուն ավելի շատ է խուսափում պոեզիային հարիր ոճից, երբեմն նույնիսկ բանաստեղծական կոչված խոսքից և գերադասում է իր պոեզիան ավելի մոտեցնել առօրյախոսակցական ոճին՝ նույնիսկ իջեցնելով այն բանավոր խոսակցական մակարդակի:

Արա Ալոյանի պոեզիայի բառապաշարի միջուկը կազմում են համագործածական բառերը, սակայն բառակազմական ներքին օրենքների ըմբռնման կարողությամբ, լավ ճաշակի ու լեզվագագացողության շնորհիվ նա ստեղծում է նոր բառեր, որոնք հեղինակի գեղարվեստական համակարգում ոճական արժեք են ձեռք բերում:

Առհասարակ հեղինակային նորաբանությունների ստեղծումը պայմանավորված է ստեղծագործական գործընթացում հեղինակին չբավարարող միջոցներով, և նա նոր ձև է փնտրում իր ասելիքն արտահայտելու համար: Ինչ խոսք, այդ բառերի մեծ մասը մնում է միայն այդ ստեղծագործության շրջանակներում, քանի որ հաճախ դրանք օտար են լեզվի բառակազմական օրինաչափություններին կամ զուրկ են ձևաբանական ճկունությունից, անբարեհունչ են և չունեն ոճական արժեք (Խլղաթյան 2009 : 210): Այս առումով հեղինակային նորաբանությունները չպիտի քննել իբրև սոսկ լեզվական իրողություններ: Այդպիսի մոտեցումը

սահմանափակ ու միակողմանի կլինի: Գիտական տեսանկյունից ավելի կարևոր է պարզել, թե նորաբանությունն ինչպես է շաղկապվում տվյալ թեմային, բովանդակությանը, այդ խոսքաշարում ինչ ոճական արժեք է ձեռք բերում, ինչ առավելություններ ունի հոմանշային շարքի անդամների համեմատ:

Արա Ալոյանը արդի պոեզիայի այն սակավաթիվ հեղինակներից է, որի բանաստեղծական խոսքում նորաբանությունները գերազանցում են հարյուրը՝ «Մի՛ լուսացիր» շուրջ (70), «Ուտնահետքեր ջրաներկով», (68):\* Այս հարյուրից դժվար է ասել՝ քանիսը քաղաքացիություն ձեռք կբերեն, քանի որ նմանատիպ բառերը հիմնականում մնում են տվյալ ստեղծագործության տիրույթում, այդ պատճառով էլ կոչվում են հեղինակային նորաբանություններ՝ դիպվածաբառեր:

Հեղինակը կարողացել է օգտվել հայերենի բառաստեղծական հնարավորություններից՝ կազմելով տարաբնույթ բառեր՝ հիմնականում հոդակապավոր բարդություններ: Աշխատանքի շրջանակներում նոր բառերը դիտարկելու ենք ըստ կազմության՝ ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր:

Քննելով Արա Ալոյանի նորակազմ բառերը՝ նկատում ենք, որ բանաստեղծը լավ է տիրապետում մայրենի լեզվի բառակազմական տեխնիկային՝ ծնունդ տալով ինքնաբուխ ու ոճական արժեք ունեցող հետաքրքիր բառերի:

Ասածներիս հաստատումն է «Լիլիթերգ» բանաստեղծությունը, որը, առաջին հայացքից աստվածաշնչյան և իսահակյանական Լիլիթի յուրովի մեկնաբանությունն է հեղինակի կողմից: Բանաստեղծությունը հեղինակի իսկ բնորոշմամբ Ադամերգ է՝ ձոնված հայտնի լեգենդի կնոջը, և շատերը կարող են նմանեցնել այն իսահակյանական արձակի՝ չափածոյով բառակերպմանը: Ընդհանրություններ կան, ինչ խոսք, բայց հենց այստեղ է, որ երևում են բանաստեղծի անհատականությունն ու նրա գրի յուրահատկությունը: Իսահակյանական Լիլիթի կանացի թուլանքն ու գեղեցկությունը, նրբությունն ու նազանքը, զգացմունքայնությունն ու սերը բանաստեղծն իրենն է դարձնում սեփական բառերի միջոցով և իր լեզվա- ոճական առանձնահատկությամբ:

Լեզուներից բոլոր ես սերտեցի այսպես

Սովորեցի խոսել... լիլիթերեն լեզվով,

Ու սեպեցի բառեր լիլիթային, կիզվող,

---

\* Այսուհետև հոդվածում մեջբերվող բանաստեղծությունների կողքին նշված (1) թիվը կնշանակի, որ բանաստեղծության նշված հատվածը «Մի՛ լուսացիր» ժողովածուից է, իսկ (2) թիվը՝ «Ուտնահետքեր ջրաներկով» ժողովածուից:

Եվ ճախրեցի դեպի լիլթաթև ավեր:

Ես գույներից բոլոր նախընտրեցի, գտա՛  
Լիլթագույնը ճոխ՝ հազար նրբերանգով.  
Համբույրների վրձնով անցա ներկից այն կողմ,  
Հոգու գույնիդ հասա իմ կիսավարտ կտավ:

Եվ երգերից բոլոր, նվագներից բազում,  
Ինձ գրավեց միայն լիլթաձայն նոտան,  
Ա՛խ, ինձ եղան բոլոր մեղեդիներն օտար,  
Աղամերգս եղավ՝ ներբող Լիլիթ աստծուն:

Լիլթաբույր գարուն, լիլթաշունչ ձմեռ,  
Լիլթաժամ օրեր, և մենություն և ցավ,  
Ես չգիտեմ, ինչո՞ւ կյանքս այսպես անցավ,  
Բայց ես գիտեմ, թե ինչ երջանիկ եմ ծնվել (83)2:

Բանաստեղծությունն ամբողջությամբ մեջբերված է ցույց տալու համար, թե որքան անբռնագրոսիկ է հեղինակը բառակազմական մի շարք հնարքներով մեկ ստեղծագործության շրջանակում ստեղծում ինքնաբերու ու անմիջական նորաբանություններ, որոնք մեծ մասամբ թերևս դիպվածաբառեր են, սակայն ասելիքի զգացմունքայնությունն ու անմիջականությունը հենց այդ բառերի միջոցով է իրականացվում: Բանաստեղծական պատկերը մի շարք զգացողություններ է արթնացնում: Ինչպես վերը նշվեց, այն ընդհանրություններ ունի Իսահակյանի համանուն լեգենդին, սակայն հերոսուհու կերպարում նկատելի են նաև մի շարք ընդհանրություններ անգլիացի նկարչ Դանթե Գաբրիելի Ռոսսետտիի «Լեդի Լիլիթ» կտավում, պատկերված տիկնոջը, և դարձյալ այդ ընդհանրությունները դիպվածային բառերով ձևակերպումներն են առաջ բերում<sup>3</sup>, որոնց միջոցով հեղինակը ամբողջացնում է կնոջ կերպարը: Կին, որ բանաստեղծի համար, ինչպես այդ կտավում և՛ մարդ է, և՛ կիսաստված , և՛ սրբացված է, և՛ միևնույն ժամանակ օժտված դիվական հատկանիշներով: Եվ այս ամենը բանաստեղծական խոսքում տեսանելի և ընկալելի է դառնում լեզվաոճական հատկանիշների շնորհիվ՝ ճիշտ

---

<sup>3</sup> Դանթե Գաբրիել Ռոսսետտիի (1828-1882) հայտնի կտավներից է «Լեդի Լիլիթ»-ը, որն այժմ գտնվում է ԱՄՆ Delaware Art Museum թանգարանում: Կտավում Նկարիչը Լիլիթին ներկայացնում է իբրև սիրուհի, գայթակղիչ կին և սրբապատկերային ամազոնուհի:

բառը նտրությամբ, հմուտ բառագործածությամբ ու նոր բառեր ստեղծելու կարողությամբ:

Վերադառնալով մեր ասելիքին՝ նշենք, թե ինչպիսի միջոցներ է կիրառում հեղինակն իր խոսքը մատուցելու համար: Հարկ է նշել, որ բառակազմական բոլոր միջոցներն էլ բանաստեղծը գործի է դնում: «Բոլոր ժամանակներում էլ բառապաշարի հիմնական ուղին եղել և մնում է ներքին՝ սեփական բառակազմական միջոցներով բառապաշարը հարստացնելու ուղին, նաև արտաքին՝ ուրիշ լեզուներից կատարվող փոխառությունները» (Մարության 1997: 112)

Ներքին միջոցներով լեզվի բառային կազմի համալրումը տեղի է ունենում լեզվի բառակազմական հիմնական և երկրորդական ձևայինների՝ արմատների կամ արմատների ու ածանցների միջոցով նորանոր բառեր կազմելով: Ս. Գալստյանի բնորոշմամբ՝ «Բարդ և ածանցավոր բառեր ունեցող լեզուների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ յուրաքանչյուր լեզվի բառակազմությունը ընդհանուր գծերով

արտացոլում է այդ լեզվի բառահարաբերությունները, և բարդ ու ածանցավոր բառերից շատերի մեջ այս կամ այն կերպ, հաճախ սաղմնային ձևով, արտահայտվում են երբեմնի առանձին բառերի զանազան կապակցությունները»: (Ս. Ա. Գալստյան 1978 :16)

Հայտնի է, որ բառաբարդումը արդի հայերենի բառակազմական տարածված, ճկուն և իշխող եղանակն է: Այդ պատճառով էլ դիպվածաբառերը հենց այս եղանակով են հիմնականում ստեղծվում: Հայերենին բնորոշ են բարդության ամենատարբեր տեսակները՝ համադրական և հարադրական, որն էլ հնարավորություն է տալիս ստեղծագործողներին, սեփական ոճի առանձնահատկություններից ելնելով, նոր բառ ի հայտ բերել: Սակայն նաև կարևոր է, որ նորաստեղծ բառը արհեստական չլինի, այլ ունենա հուզարտահայտչականություն ու պատեհություն: Արա Ալոյանի պոեզիայում հանդիպում ենք և՛ հողակապով, և՛ անհողակապ նորակազմ բառերի, բայց հեղինակի ստեղծագործություններում քանակապես գերակշռում են հողակապով բառերը:

Իմ սրբաձաղիկ, իմ սրտատրուփ,

իմաշրջանակ գունային գամմա,

Իմ նեկտարակաթ, իմ եռքը քամած –

Իմ նախահարձակ, իմ դիմադրող:(9) 2

Այս բանաստեղծության մեկ քառատողում երկու հողակապով և մեկ բարդաձանցավոր նորակազմություն է գործածվում՝ սրբաձաղիկ, իմաշրջանակ, նեկտարակաթ: Սիրելիին դիմելու համար բանաստեղծը



առանց ավելորդ ջանքերի նոր բառեր է ստեղծում, և կարևորն այն է, որ դրանք բանաստեղծական քուրայում ինքնաբուխ և անմիջական կերպով ստանում են որոշակի ոճական արժեք:

Նմանատիպ օրինակները շատ են: Հոդակապով նորակազմ բառերի մի քանի օրինակ բերենք՝ Տերևալացին իմ գրկում բեկ-բեկ/ Անորդի ցավով, մենությամբ ունայն(16)2, Եթե կարող ես վիրակապ հյուսիր /Արևաթեյից, որ հարկավոր է (124)2, Եվ մենավոր ճաքում է շուրթը գիշերայրբի, /Եվ մեղավոր սգում է շիշը գինու (73)2, Թեև մեր ձեռքին հետքեր են արյան,/Ու մենք՝ խավարի խաչաթելերում (8)2, Ես մերժում եմ բառերը՝ մարմին,/Բառախաղ, քոնաբառ, ծերացած (14)1, Ուզում եմ հայցել հարության հրաշք.../Գարունացավի աղերսներ ունեմ.../Քո արցունքներով անձրևաջրի (22)1, Երկնի գոլության աստիճանը նա՛/ Լոգանքից առաջ, անձրևածեսից... (29)1, Որտեղ չկան բոբիկ /Ոտքի ձայներ, խաղա՛ղ,/ Ձյունածաղիկ կոպին՝ /Սերե՛ր լուսաշաղախ (43)1 Եվ հիմա օրվա ոչնչաժամին,/ Երբ ո՛չ գիշեր է, ո՛չ էլ՝ առավոտ (63)1, Լուսնահաքը փնտրելիս՝ երկնադարակում / Խառնեմ աստղերը՝ հանց (76)1:

Պետք է նկատել, որ ի տարբերություն հոդակապավոր նորակազմությունների, որոնք մեր հաշվարկներով գերազանցում են վեց տասնյակը, անհոդակապ նորակազմությունները զգալիորեն քիչ են՝ մոտ երկու տասնյակ:

Մեզ եղեմներից այս տունն են քշել,/Ուրեմն իմ այս լուսներգը լսիր» (105)1, Կգամ՝ բառերդ փնջած,/Կգտնեմ սրտուղի վայրում (109)1, Իսկ Սե՛րը, Սե՛րը չունեցավ աչքեր, /Այլ տեսողությամբ սրտավիղ շոյեց (24)2, Որ ցուլա շուրթիդ սիրարկը տաք, /Որ մահվան դեմքին ժպտա մի ծաղիկ (13)2, Երջանկություն էր, բայց քեզնով տառապելին/ Եվ հիշվողը՝ քուրես, քրքուր ու քուրևել (37)2:

Բանաստեղծի պոեզիայում հաճախ ենք հանդիպում համագործածական բառապաշարին բնորոշ բառեր, որոնցից հեղինակը նետաքրքիր նորակազմություններ է ստեղծում: Օրինակ՝ ձյուն բառից ստեղծել է ձյունածաղիկ, ձյուներես, ձյունաքուր, ձյունալաց, ձյունահաչ բառերը: Դիմենք բնագրին՝ Ձյունահաչ քաղաք: Թափառող շներ, /Իսկ գուցե մարդիկ ու հակառա՛կը: (104)2 Ձմեռ է: Ձայնում եմ: Ձյունել ես:/ Ձյունանուշ: Ձյունաքուր: Ձյուներես (47)1:

Խոսուն, միակազմ նախադասություններով և դիպվածային բառերով բանաստեղծը մենախոսում է, դիմում իր սիրելիին, որը ձյունել է, ձյունանուշ է ու արդեն նույնիսկ դարձել է ձյունաքուր: Բանաստեղծական խոսքում ձյուն բառը խորհրդանիշ է և նախատրամադրվածություն է ստեղծում: Այն և՛ ճերմակ է ու անաղարտ, և՛ տրամադրություն է, և՛

փոխհարաբերություններ, որ արդեն ստեղծ են, և՛ բանաստեղծի ու իր սիրելիի հոգեվիճակը ընթերցողին պարզ դարձնելու միջոց է:

Հետաքրքիր ձևակերպումների ենք հանդիպում սեր բառով, ինչպես՝ սիրարև, սիրալաց, սիրամահ, սիրահնար, սիրաբառու, սիրացավ:

Գրելու համար ի՞նչ է գրիչը, /Գրիչը ճիչ է սիրահմա(69)1 /Մերթ լալագին ու մերթ էլ քրքիջ են /Եվ ամոքիչ են սիրահնար (69)1: /Սիրտն էլ արցունքի անսահման լիճ է, / Սերն Արարիչ է ու սիրամահ (69)1:

Յուրօրինակ դրսևորումներ է ստանում հեղինակի խոսքում աստղ բառը, ինչպես՝ աստղասերմ, աստղագրույց, աստղամանգաղ, աստղաշաքարափոշի:

Եթե սիրել ես, գիշերվա միայն աստղերը հիշիր, /Աստղագրույցը անթեղիր սրտիդ, ոչ հառաչանքը... (75)1, Եվ ձեռքերը դառնում են աստղամանգաղ, /Եվ աչքերը մեռնում են սիրացավից... (78)1

Նորակազմ բառեր հեղինակը կազմում է նաև համաբանությամբ: Օրինակ՝ սրտափ բառը, որը գեպափ, լողափ, ծովափ բառերի համաբանությամբ է ստեղծված, սրտուղի բառը, որը ծառուղի, ճեմուղի, գեպնուղի բառերի համաբանությամբ է, ձյուներես բառը, որը լուսերես ու վարդերես բառերից է, լուսներգ, որը սիրերգ, վիպերգ է:

Ինչպես հայտնի է, լեզվի բառապաշարի հարստացման մյուս կենսունակ միջոցը ածանցումն է: Ստորև կփորձենք ներկայացնել, թե ինչպիսի ածանցավոր նորակազմություններ կան բանաստեղծի պոեզիայում:

Ածանցավոր կազմություն ունեցող բառերը հանդես են գալիս տարբեր կաղապարներով: Դա պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ածանցները՝ որպես բառակազմական երկրորդական ձևույթներ, դրվում են արմատների կամ բառերի սկզբում կամ վերջում, այլև նրանով, որ տվյալ բաղադրության մեջ կարող են մտնել մեկից ավելի ածանցներ: Առանձին կաղապարներում ածանցները կարող են հանդես գալ հիմնական ձևույթների հետ և միասնաբար դառնալ բարդության բաղադրիչ:

Արդի հայերենը ժառանգել է լեզվի պատմական զարգացման ընթացքում ձևավորված ածանցների համակարգը, ածանցների գործառության մշակված, կայուն օրենքներն ու օրինաչափությունները և այժմ նորաբանություններ է կազմում հիմնականում եղած կենսունակ ածանցների միջոցով, թեպետ լեզվի զարգացման ներկա փուլում էլ ձևավորվում են նոր ածանցներ: Թեև յուրաքանչյուր ածանց ունի որոշակի վերացական իմաստ, սակայն ամեն մի նոր բաղադրության մեջ նրա իմաստը յուրովի է դրսևորվում: Արա Ալոյանի պոեզիայում բարդությունների համեմատ ածանցավոր նորակազմությունների քանակը

քիչ, է և դրանք հիմնականում չունեն նույն դերն ու ոճական արժեքը, մյուս նորակազմ բառերի համեմատ: Դրանք ևս հեղինակի կողմից բառակազմորեն ճիշտ են համադրվում, սակայն որևէ նպաստ չեն բերում հեղինակի լեզվի արտահայտչական համակարգին: Ածանցավոր նոր բառեր կերտելիս հեղինակը օգտվում է և՛ նախածանցներից, և՛ վերջածանցներից: Փորձենք ներկայացնել, թե ինչպիսի ածանցավոր նորակազմություններ ունի հեղինակը: Նախածանցներից հեղինակը հիմնականում կիրառում է ժխտական ան- և չ-, սակայն նույնիսկ այս կենսունակ ածանցներով կազմված նորակազմ բառերը դժվար թե այս տեքստից դուրս կիրառություն ունենան, քանի որ դրանք առավելապես իրավիճակային նշանակություն ունեն: Օրինակ՝ «Մի՛ լուսացիր» ժողովածուում տեղ գտած մի բանաստեղծություն վերնագրված է «Ձեռնարկ չերջանիկների համար»(44)1, մինչդեռ այս բառն ունի դժբախտ, անբախտ, ապաբախտ, ապերջանիկ հոմանիշները: Այս պարագայում չերջանիկը ոճական նպատակով է կիրառվել՝ կազմելով հակակշիռ երջանիկ բառին: Կամ օրինակ՝ Ո՛չ երանի եմ ուզում, ո՛չ երնեկ, /Մի սեր տուր ինձ՝ չեղած չսարվող (23)1, Դերասան, /Հաշտվիր ձեռքերիս անծախ,/ Դրանք կգրեն քեզ համար նոր դեր...(42)1, Բայց ինչ էլ լինի՝ Սերն անապել է, / Սերը անթել է և չի կտրվում (47) 1, Բայց նա էլ գնաց՝ իր արցունքն ուսին, / Բերելով ունայն, աննա լուսադեմ (63) 1, Մահը կնստի ծնկներիս վրա՝ որպես հեշտ տրվող, անհող պոռնիկ(32)2, Եվ մենք սրբեր ենք ձևանում արդեն/ Անմարմինային հեռավորության վրա (11)2:

Բառակազմական ակտիվությամբ այնքան էլ աչքի չընկնող -երեն, -եղեն, վերջածանցները և դրանց համեմատ ակտիվ -ական, -ություն վերջածանցները, հեղինակը դարձյալ կիրառում է միայն ոճական նպատակով՝ Դու ամեն օր... ապացուցում ես /Մահկանացու լինելս/ Կամ կարողությունս մեռնելու, /Մինչդեռ ես քեզ ապացուցում եմ /Իմ արայական հարության առասպելը՝ /Շամիրամյան շրթագրով... (12)1, Եվ միակ լեզուն՝ սրպերենը հենց, /Որով երգել եմ նույնիսկ բաղաձայն... (12)1, Քանզի չունենք սիրեղեն վայրեր, /Քանզի սիրելու ծվեն չթողինք...(99)1, Թանաքելով՝ որպես սիրո և ապրումի /Առհավատչյա գալիքական... (10)2:

Հետաքրքիր վերջածանցավոր կազմությունների ենք հանդիպում նաև դերանուններով կազմված՝ Ուրիշությունս, ա՛յլս, տարբե՛րս, /Չհոմանիշվող դու իմ լուրջուն(19)2, Եվ իմությունս, խորքս տաճարե- /Հոլովվող կարո՛տ, պատվիրան վերջին(19)2:

Հանդիպում ենք նաև բարդածանցավոր մի շարք կազմություններ:

Այսպես՝ աննախշանկար, ցերեկափոեկ, անունանցիկ, թաքնա-տեսական, չօրայրվող, մարմնամթերք, բառանկարչություն,

եղեմադարածք, հիսուսահեղք, հիշողափոփոց, գեղեցկահյուծանք, երեքադազադ, արցունքասեր, հարութենակերպ և այլն:

Իսկ մենք դեռ այսպես կույր խարխափում ենք/ Ցերեկատել պայծառ օրերում (7)2, Ձայնագուրկ քաղաք, մարմնամթերք/ Տունդ ո՛վ խուժեց ցեխոտ ոտքերով (58)2, Իմ անունանցիկ, վերնագիր իմո, /Իմ հասունություն, իմ ջղե սոսափ... (9) 2, Գալիս են առանց լրուրևառության, /Որպես հերթական թափառաշրջիկ... (39)1, Շուրթերդ՝ հոսուն, քաղցր մեղրագետ, /Եվ մարմինդ՝ ձույլ եղեմադարածք (16)1:

Նկատենք նաև, որ այս բառերը, ինչպես ցանկացած նորակազմ բառ, բառային միավոր, կայուն կապակցություն, մտնելով լեզվի մեջ, միանգամից չեն հաստատվում, և ժամանակն է ճշտում լեզվական իրողությունների տեղը:

Այսպիսով, ուսումնասիրելով Արա Ալոյանի երկու ժողովածուները, կարող ենք ասել, որ նրա խոսքում ծնունդ առած նորակերտ բառերը հիմնականում ընդունելի ձևեր են և համապատասխանում են հայերենի բառակազմական նորմերին ու օրինաչափություններին: Նրբաճաշակ, լեզվի մաքրությանն ու գեղեցկությանը նախանձախնդիր բանաստեղծը դեռ շատ ասելիք ունի և շատ բառեր դեռ կարարի, որոնց մեծ մասը գուցե համալրեն մեր լեզուն և տեղ գտնեն մեր խոսքում, բառապաշարում և բառարաններում:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Ալոյան Ա., Մի լուսացի՛ր, Ե., 2014, Ուտնահետքեր ջրաներկով Ե., 2014:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
3. Գալստյան Ս., Ածանցումն ու ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1974:
4. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Ե., 2006:
5. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980:
7. Խլղաթյան Ֆ., Նոր բառեր և իմաստներ բառարան-տեղեկատու, Ե., 1982:
8. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Ե., 2000:

9. Մարության Ա., Բառային փոփոխությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ, ՊԲՀ, Ե., 1997, N 2:
10. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984:
11. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի հիմունքներ, գիրք առաջին, Ե., 1990:
12. Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Ե., 1982:

## REFERENCES

1. Aloyan A., Mi lowsaci'r, E., 2014, Otnahetqer jranerkov E., 2014:
2. Aghayan E', Ardi hayereni bacatrakan bar'aran, E., 1976:
3. Galstyan S., Ac'ancowmn ow ac'ancnery' jhamanakakic hayerenowm, E., 1974:
4. Ezekyan L., Otwaigitowt'yown, E., 2006:
5. E'loyan S., Jhamanakakic hayereni bar'ayin otwabanowt'yown, E., 1989:
6. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran, h. 1-4, E., 1969-1980:
7. Xlghat'yan F., Nor bar'er & imastner bar'aran-teghekatow, E., 1982:
8. Xlghat'yan F., Otwabanakan bar'aran, E., 2000:
9. Marowt'yan A., Bar'ayin p'op'oxowt'yownneri & lezvi maqrowt'yan harci showrj, PBH, E., 1997, N 2:
10. Melqonyan S., Aknarkner hayoc lezvi otwabanowt'yan, E., 1984:
11. Poghosyan P., Xosqi mshakowyt'i himownqner, girq ar'ajin, E., 1990:
12. O'hanyan H., Jhamanakakic hayoc lezvi bar'apashary' & nra harstacman mijocnery', E., 1982:

## ЛИЛИТ ГЕВОРГЯН - ОККАЗИОНАЛЬНЫЕ СЛОВА В ПОЭТИЧЕСКОЙ РЕЧИ АРА АЛОЯНА

**Ключевые слова:** Слова-окказионализмы, поэтическая речь, поэзия, художественная речь, стилистические применения, сложные слова, неологизмы, сложные слова с соединительным гласным, сложные слова без соединительного гласного, аффикс.

Предметом данного исследования в стали две книги стихов современного автора, журналиста Ара Алояна, «Акварельные следы» и «Не светись». В статье предпринята попытка охватить неологизмы, используемые в данных книгах, рассматривая их как успешные попытки словотворчества в современной поэтической речи и языковой сфере.

## LILIT GEVORGYAN - OCCASIONAL WORDS IN ARA ALOYAN'S POETIC SPEECH

**Keywords:** Occasional words, poetic speech, poetry, artistic speech, stylistic application, compound words, neologisms, words with connective vowel, words without connective vowel, affix.

Two books of poems by modern author, journalist Ara Aloyan, "The Footprints with Watercolor" and "Do Not Lighten" have become the subject of the current study. In the article an effort has been made to cover the neologisms used in these books viewing them as successful attempts in the modern poetic speech and language domain.

Ներկայացվել է՝ 19.06.2019  
Գրախոսվել է՝ 18.06.2019


**ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՔՍՏԻ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՔԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ  
ԳՈՀԱՐ ՓԵԼՈՇՅԱՆ**


*Հիմնաբառեր՝ մեքենական համակարգ, մեքենական թարգմանություն, բնական լեզվի մշակում, տեքստի զգացմունքայնություն*

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը խթանեց համակարգչային լեզվաբանության և դրա ոլորտ հանդիսացող բնական լեզվի մշակման ձևավորումը, որոնց նպատակն է կադապարել հաղորդակցման գործընթացը և իրականացնել բնական լեզվով մարդ-համակարգիչ համագործակցությունը: Համացանցում հրապարակվող տեղեկատվության աճի հետ զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ նաև ստեղծել համակարգեր, որոնք կկարողանան գործ ունենալ նման հսկայածավալ տվյալների հետ:

Բնական լեզվի մշակումը (ԲԼՄ) վերջերս արժանացել է մեծ ուշադրության՝ «հաղորդակցության լեզուն համակարգչային տեսանկյունից վերլուծելու և ներկայացնելու հատկանիշի առկայության համար»: (Liddy 2001: 2-4) Թեև ոլորտն ամբողջությամբ կոչվում է բնական լեզվի մշակում, դրա առանձին ճյուղերը երեքն են՝ լեզվի մշակում, լեզվի ստեղծում և լեզվի ընկալում:



$$FLU = FLQ + FLU$$



Տեքստային տեղեկատվության ավտոմատ մշակման հիմնախնդիրներից է տեքստի զգացմունքայնության վերլուծությունը: Այն «բնական լեզվի մշակման և համակարգչային լեզվաբանության բնագավառ է, որի նպատակն է գտնել տեքստում սուբյեկտիվ տեղեկատվություն, դասակարգել այն դրական, բացասական կամ չեզոք խմբերում և այդպիսով որոշել հեղինակի վերաբերմունքը տվյալ երևույթի կամ առարկայի վերաբերյալ»: (Pang and Lee 2008: 37-43)

Զգացմունքայնության վերլուծության մեջ կիրառվող տեխնիկաների տեսանկյունից կարելի է տարբերակել վերլուծության երեք հիմնական մեթոդ՝

1. **Բառային վերլուծություն**, որն իրականացվում է բառարանի կիրառման օգնությամբ, որտեղ զետեղված բառերն ունեն նախապես առանձնացված զգացմունքային բևեռայնություն:
2. **Մեքենական ուսուցման վրա հիմնված վերլուծություն**՝ այս տեխնիկան հնարավորություն է տալիս համակարգչին փորձնական տվյալների հիման վրա վերլուծել այն, ինչը բացահայտ ծրագրավորած չէ: Մեքենայական ուսուցման մեջ վերլուծական ծառերն (parse tree) ամենատարածված ալգորիթմներից են:
3. **Հիբրիդային կամ համակցված վերլուծություն**, որը բառային և մեքենայական ուսուցման մեթոդների ամբողջությունն է:

Բնական լեզուն պատկանում է այնպիսի բարդ համակարգերի թվին, որոնց ոսումնասիրության համար կադապարների կառուցումը խիստ անհրաժեշտ է: Այսպիսով, տեքստի ավտոմատ ճանաչման գործընթացի հիմքում ընկած են հետևյալ լեզվաբանական մակարդակները՝



- Հնչյունական՝ մարդկային լեզվի նյութական կողմը, այսինքն՝ այն բոլոր արտասանական միջոցները, որոնցով կազմավորվում է խոսքը:
- Ձևաբանական՝ տեքստի միավորների ձևաբանական ճանաչում:
- Շարահյուսական՝ նախադասության բառային միավորների միջև շարահյուսական հարաբերությունների հաստատում:
- Իմաստաբանական՝ տեքստային միավորների իմաստային բնութագրերի սահմանում:

Զգացմունքայնության վերլուծության համակարգերում բնագրի տեքստը կարող է ենթարկվել վերլուծության՝ նշված մակարդակներից յուրաքանչյուրում: (Liddy 2003)

Հնչյունաբանությունը դուրս է այս աշխատանքի ուսումնասիրության շրջանակից և հաջորդ մակարդակն է *ձևաբանությունը*, որի հիմնական տարրերն են ձևայինները՝ լեզվում իմաստ արտահայտող նվազագույն միավորները, որոնցից կազմվում են բառերը: «Այս ձևայիններից յուրաքանչյուրը ապահովում է բառիմաստի հաղորդումը»: (Taboada 2016: 325-333)

Որոշ դեպքերում ժխտական մասնիկը և ժխտմանը ենթարկված բառը միավորված են մեկ բառում, օրինակ՝ endless, impolite, dishonest, non-cooperative և այլն: Ժխտման այս տեսակը կոչվում է ձևաբանական ժխտում, որը ձևավորվում է նշված ինը նախածանցներից (de-, dis-, il-, im-, in-, ir-, mis-, non-, un-) կամ մեկ վերջածանցից (-less):

Լեզվաբանական վերլուծության «շարահյուսական մակարդակի ուսումնասիրության առարկան բառակապակցություններն ու նախադասություններն են, որոնք արտահայտում են մեկ ամբողջական միտք: Այս մակարդակում որոշվում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, դրանց միջև առկա հարաբերությունները»: (Ուոուտյան 2004: 26-44)

Շարահյուսական կախումների ձևային քերականության համար հիմք է ծառայում նախադասության մեջ բառերի անմիջական կախման առկայությունը: Օրինակ, ընդունված է, որ նախադասության մեջ ենթական շարահյուսորեն անմիջական կախման մեջ է գտնվում ստորոգյալից, խնդիրներն ու պարագաները՝ ստորոգյալից (անմիջապես կամ կապի միջոցով), ենթակայի լրացումը ենթակայից և այլն:

Շաղկապների վերլուծությունը կարևոր դեր է կատարում տեքստի զգացմունքայնության մեջ, քանի որ այն ճկուն կերպով հայտնաբերում է բարդ նախադասության մեջ ժխտման շրջանակը: Թեպետ անգլիական համապատասխան գրականության մեջ առանձնացվում է շաղկապների երեք տեսակ՝ համադասական (coordinating), ստորադասական

(subordinating) և հարաբերական (correlative) (Ritesh, et. al 2008), նախադասության վերլուծության ժամանակ միայն երկու հիմնական տեսակ է օգտագործվում: Այն շաղկապները, որոնք նախադասության զգացմունքայնությունը փոխում են, պատկանում են առաջին տեսակին, (ինչպես օրինակ՝ բայց (but), այնուամենայնիվ (however), իսկ այն շաղկապները, որոնք էլ ավելի են ուժգնացնում արտահայտված զգացմունքայնությունը, պատկանում են երկրորդ տեսակին (ինչպես օրինակ՝ և (and), բացի այդ (in addition):

Նարանայան և մի շարք այլ հայտնի տեսաբաններ կատարել են էլեկտրոնային գրառումներում հանդիպող շաղկապների ուսումնասիրություն և եզրակացությունների հիման վրա առանձնացրել հավելական, համեմատական նմանություն արտահայտող և հակադրական շաղկապները՝ որպես գրառումներում ամենից շատ հանդիպող տեսակներ:(Narayanan, et.al. 2009)

Հավելական (and, moreover, also, as well as) և համեմատական (similarly, equally, likewise, or) հարաբերություններ արտահայտող շաղկապները թույլ են տալիս արտահայտել մտքեր, ուստի, օգտագործվում են զգացմունքայնություն ունեցող նախադասություններ միավորելու համար:

Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հավելական շաղկապները չեն փոխում նախադասությունների բևեռայնությունը: Հետևաբար հավելական և համեմատական /նմանություն արտահայտող/ շաղկապներ պարունակող նախադասությունների համար կարող ենք ներկայացնել հետևյալ կաղապարը՝


Եթե (Շաղկապ= հավելական շաղկապ ԵՎ Դիրք=սկզբում/Միջանկյալ) Նախադասության բևեռայնությունը = բևեռայնություն (աջակողմյան արտահայտություն) + բևեռայնություն (ձախակողմյան արտահայտություն)
--

Հակադրական շաղկապները (but, however, in contrast, alternatively և այլն) թերևս ամենամեծ խնդիրն են վերլուծական համակարգերի համար: Դրանց կիրառման արդյունքում ամբողջապես կարող է փոխվել նախադասության բևեռայնությունը: Հակադրական շաղկապներով կառույցի դեպքում ճշգրիտ արդյունք է ներկայացնում հետևյալ կաղապարը՝



Եթե (Շաղկապ= հակադրական շաղկապ և Դիրք=Միջանկյալ)  
 Եթե (ծախակողմյան արտահայտություն = NP = գոյականական  
 արտահայտություն && աջակողմյան արտահայտություն =  
 գոյականական արտահայտություն), ապա նախադասության  
 բևեռայնություն = բևեռայնություն (աջակողմյան արտահայտություն)

Հաճախ իրենց հրապարակումներում մարդիկ դիմում են նաև մի  
 շարք ճարտասանական հնարների օգնության՝ միտքն առավել  
 իմաստալից և արտահայտիչ դարձնելու նպատակով: Ճարտասանական  
 հնարքներից մեկն է կրկնակի ժխտումը, որին անգլերենում տվել են litotes  
 անվանումը: «Եղանակն այսօր լավն է» ասելու փոխարեն, օրինակ,  
 կարելի է դիմել կրկնակի ժխտման (litotes)՝ «Եղանակն այսօր վատը չէ»:  
 Կրկնակի ժխտման դեպքում զգացմունքայնություն ունեցող  
 արտահայտությունն ի սկզբանե ժխտական է, և հենց որ այն ժխտվում է,  
 ամբողջ արտահայտությունը դառնում է դրական:

Մեկ այլ ոճական հնար է օքսիմորոնը (հուն. oxy- սուր և moros –  
 անմիտ, հիմար), երբ հակադիր իմաստ արտահայտող բառերը հանդես  
 են գալիս որպես մեկ ամբողջական լեզվական միավոր և օգտագործվում  
 ընդգծված ազդեցություն ունենալու նպատակով:



Օքսիմորոնները հատուկ ուշադրության չարժանացնելու և որևէ  
 կաղապար չմշակելու դեպքում դրանց կիրառության բոլոր դեպքերում,  
 ինչպես պայմանականորեն ներկայացված է նկարում, կունենանք չեզոք  
 ազդեցություն, մինչդեռ դրանք օգտագործվում են բացասական կամ  
 դրական իմաստը սաստկացնելու համար: Կարող ենք եզրակացնել, որ  
 օքսիմորոնի բաղադրիչներից գլխաբառ է համարվում երկրորդ  
 բաղադրիչը և ողջ նախադասությունը ստանում է հենց այդ գլխաբառի  
 կրող զգացմունքային բևեռայնությունը: Այսինքն, ստանում ենք նման  
 եզրակացություն՝



Բացասական

Դրական

Մեր օրերում գոյություն ունեն բազմաթիվ բնական լեզվի մշակմամբ զբաղվող համակարգեր: Թեև դրանց բոլորի հիմքում կարող են լինել տարբեր կաղապարներ և ալգորիթմներ, համակարգերի գործընթացը տեղի է ունենում հետևյալ փուլերով՝



**Բուլցմանի Էնտրոպիայի ալգորիթմը որպես համատեքստի զգացմունքայնության դասակարգման հիմք**

Ս.Առաքելյանը և Է. Հայկազյանը իրենց <<Գործոնային վերլուծությունը գիտելիքի գնահատման գործընթացում>> հոդվածում նշում են, որ Շեննոնը տեղեկատվությունն ընկալում էր որպես օգտվողին անհրաժեշտ օգտակար ազդանշանների հատկացում: Նա հանդես էր գալիս հաղորդագրություններում ֆունկցիոնալ կապերի առկայության հետևորդների դիրքերից: Եթե ելքային ինֆորմացիան ամբողջությամբ

մուտքային ինֆորմացիայի պատճեն է, ապա չկա անորոշություն: Լ. Բրիլլուէնը քանակական տեսանկյունից ստացել էր անորոշությունը և տեղեկատվությունը կապող հետևյալ բանաձևը՝

$$H + I = 1, \quad (1)$$

որտեղ  $H$ -ը անորոշությունն է, իսկ  $I$ -ն տեղեկատվությունը:

Անորոշությունը հաշվարկելու համար Շեննոնն առաջարկել է Բոլցմանի կողմից հայտնաբերված դասական արտահայտությունը՝ էնտրոպիան

$$H = -\sum_{i=1}^n p_i \log_2 p_i, \quad (2)$$

որտեղ  $H$ -ը Շեննոնի անորոշությունն է,  $p_i$ -ն  $i$ -րդ հաղորդակցության հանդես գալու հավանականությունը:

Շեննոնը իր հետևորդներին զգուշացնում էր, որ ապագայում հնարավոր է հայտնվի անորոշության մեկ այլ սահմանում և չպետք է հրապուրվել ներկայացված անորոշության սահմանումով ու այն օգտագործել խիստ հիմնավորմամբ:

Դիցուք՝ իրականացվում է որոշակի հետազոտություն: Ընդ որում հայտնի է, որ  $A$  իրադարձությունը կարող է կատարվել 0.98 հավանականությամբ: Այդ դեպքում բնական է համարել, որ  $A$  իրադարձությունը շատ տեղեկատվություն չի պարունակում: Ընդհակառակը,  $A$  իրադարձության ժխտումը  $\bar{A}$ ՝ ավելի շատ տեղեկատվություն է պարունակում: Ասինքն, չսպասվող իրադարձությունից ավելի շատ տեղեկություն կարելի է քաղել, քան սպասվողից: (Առաքելյան, Հայկազյան 2018:70-83)

**Սահմանում 1.**  $A$  իրադարձության հաղորդագրությունում  $B$  իրադարձության վերաբերյալ տեղեկատվության քանակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$I(A/B) = \log_2 \frac{P(A/B)}{P(A)}: \quad (3)$$

$B$  իրադարձության հանդես գալը կարելի է մեկնաբանել ինչպես  $A$  իրադարձության կատարումը: Այդ դեպքում  $A$  իրադարձության

տեղեկատվության քանակը  $I(A/A) = I(A)$  : Որովհետև  $P(A/A) = 1$  , կատացվի

$$I(A/A) = I(A) = \log_2 \frac{p(A/A)}{p(A)} = \log_2 \frac{1}{p(A)} = -\log_2 p(A):$$

(4)

Այս հավասարումից հետևում է, որքան մեծ է  $A$  իրադարձության հավանականությունը, այնքան փոքր է  $I(A)$  տեղեկատվությունը: Իրադարձության վերաբերյալ տեղեկատվությունը ընդունում է երկու արժեք՝ “ճիշտ” կամ “Սխալ”: Արդյունքում, որպես կանոն, տեղեկատվության քանակի սահմանումում օգտագործվում է 2 հիմքով լոգարիթմը: (Առաքելյան Ս., Հայկազյան Է, 2019)

Եթե  $A$  և  $B$  իրադարձությանները անկախ են, ապա  $I(A/B) = 0$ : Սա նշանակում է, որ  $B$  իրադարձությանը իր մեջ ոչ մի տեղեկություն չի պարունակում  $A$  իրադարձության վերաբերյալ: Նշենք, որ բոլոր դեպքերում տեղի ունի  $I(A/B) = I(B/A)$  հավասարությունը:

Անկախ իրադարձությանների համար տեղի ունի հետևյալ հավասարությունը՝

$$I(AB) = I(A) + I(b):$$


Ստացվում է  $A$  իրադարձության մաս առ մաս հաղորդման տեղեկատվության քանակը հավասար է ամբողջական իրադարձության հաղորդման տեղեկատվության քանակին:

Հետագրտման էնտրոպիան որոշակի իմաստով անորոշության չափանիշն է: Եթե փորձարկումը ունի երկու ելք համապատասխան  $p$  և  $q = 1 - p$  հավանականություններով, ապա նրա էնտրոպիան հավասար է՝

$$H_p = -p \log_2 p - (1 - p) \log_2 (1 - p):$$

(6)

Նկարում պատկերված է էնտրոպիայի գրաֆիկը:



Նկ. 1 Երկու ելքով փորձարկման էնտրոպիայի գրաֆիկը

Էնտրոպիայի հատկությունները՝

1.  $H(G) = 0$  միայն  $n$  միայն այն դեպքում, եթե գոյություն ունի այնպիսի  $j$ , որի դեպքում  $p_j = P(E_j) = 1$ :
2.  $H(G)$  -ն ընդունում է առավելագույն արժեք, եթե բոլոր  $j$  -րի դեպքում  $p_j = 1/n$ :
3. Երկու անկախ փորձարկումից ստացված էնտրոպիան հավասար է առանձին փորձարկումներից ստացված էնտրոպիաների գումարին՝  
 $H(G) = H(G_1) + H(G_2)$ :
4. Երկու կախյալ փորձարկումից ստացված էնտրոպիան չի գերազանցում առանձին փորձարկումներից ստացված էնտրոպիաների գումարին՝  
 $H(G) = H(G_1) + H(G_2/G_1)$ ,  $H(G) \leq H(G_1) + H(G_2)$ :
5.  $G_1$  անկախ փորձարկումների  $n$  -պատիկ կրկնության ժամանակ, ըստ մեծ թվերի օրենքի, էնտրոպիայի քանակը էական փոփոխություն չի կրում: Այսինքն, երբ  $n \rightarrow \infty$ ,  $I(G_1)/n \rightarrow H(G_1)$ :

Նախադասությունում զգացմունքայնությունը գնահատելու համար անհրաժեշտ է եռաստիճան համակարգում, մուտքագրել երեք փոփոխականներ,  $p$ ,  $q$  և  $r = 1 - (p + q)$  հավանականություններով: Երկու ելքով հետազոտման էնտրոպիայի ֆունկցիան ունի հետևյալ տեսքը՝

$$H = -p * \log_2 p - q * \log_2 q - r * \log_2 r:$$

Այժմ կիրառենք այս ալգորիթմը որոշակի համատեքստի համար և որոշենք դրա զգացմունքայնության գնահատականը: Հետազոտության

համար անհրաժեշտ կլինի կիրառել ալգորիթմը հետևյալ հաջորդականությամբ՝

1. Որոշենք գործակիցները, որտեղ մասնակից են դրական, բացասական և չեզոք տեսակները: Այս քայլի ընթացքում պետք է զգացողությունների ազդեցությունը գնահատել և վերջնական ազդեցություն հաղորդող նախադասությունների գնահատականները համարել առաջնային: Այսինքն, այստեղ հիմք է պարբերության վերջնական նախադասությունը:
2. Այս փուլում որոշում ենք պարբերության վերջնական գնահատականը:

*Պարբերություն 1*

Պարբերություն	Նախադասություն	Դրական	Բացասական	չեզոք	
1	1			0	Ընդհանրականը
	2			0	
	3			0	
	4		-1		
	5		-1		
Ընդամենը		0	-2	0	-2

Amazon has changed in the past few years. It seems that Prime prices are increased just enough to cover shipping. I've ordered from Amazon for years and the change in rates/shipping/ etc. is obvious. I'm **greatly disappointed** in the change. I always felt secure and protected with Amazon, but now I feel **they are becoming suspect in fair pricing and presentation of products.**

Աղյուսակում բերված է առաջին պարբերության զգացմունքայնության հաշվարկը – նշանով մեծությունը, որը ցույց է տալիս բացասական էմոցիաների քանակը, որտեղ ստացել ենք -2, ինչը նշանակում է, որ այդ պարբերությունը բացասական է:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ս., Հայկազյան Է.Մ. Գործոնային վերլուծությունը գիտելիքի գնահատման գործընթացում: Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ԲԱՆԲԵՐ 1(44), Երևան, ԼԻՆԳՎԱ հրատ., 2018թ., 70-83 էջ:
2. Ուռուտյան Ռ., «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը լեզվաբանության մեջ», Երևան, «Գ.Ա.Մ» հրատ., 2004թ., 26-44 էջ:
3. Pang B., Lee L. Opinion mining and sentiment analysis, Foundations and trends in information retrieval, vol. 2, 2008, pp. 97.
4. Liddy, E. Natural Language Processing. In Encyclopedia of Library and Information Science, 2nd Ed. NY. Marcel Decker, Inc., 2001, pp. 2-4.
5. Taboada M. Sentiment Analysis: An Overview from Linguistics. Annual Review of Linguistics, Vol. 2, Issue 1, Simon Fraser University (SFU). Department of Linguistics ,15 March. 2016, pp. 325-347.
6. Narayanan R., Bing, L., Alok C. Sentiment analysis of conditional sentences. Proceedings of EMNLP. 2009, pp.28–39.

## REFERENCES

1. Ar'aqelyan S., Haykazyan E'.M. Gorc'onayin verlowc'owt'yowny' giteliqi gnhatman gorc'y'nt'acowm: Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsarani BANBER 1(44), Er&an, LINGVA hrat., 2018t'., 70-83 e'j:
2. Owr'owtyan R', «Informacion texnologianeri kirar'owmy' lezvabanowt'yan mej», Er&an, «G.A.M» hrat., 2004t'., 26-44 e'j:
3. Pang B., Lee L. Opinion mining and sentiment analysis, Foundations and trends in information retrieval, vol. 2, 2008, pp. 97.

4. Liddy, E. Natural Language Processing. In Encyclopedia of Library and Information Science, 2nd Ed. NY. Marcel Decker, Inc., 2001, pp. 2-4.
5. Taboada M. Sentiment Analysis: An Overview from Linguistics. Annual Review of Linguistics, Vol. 2, Issue 1, Simon Fraser University (SFU). Department of Linguistics ,15 March. 2016, pp. 325-347.
6. Narayanan R., Bing, L., Alok C. Sentiment analysis of conditional sentences. Proceedings of EMNLP. 2009, pp.28–39.

#### **ГАЯНЕ ЕГИАЗАРЯН, ГОАР ПЕЛОШЯН - АНАЛИЗ ЭМОТИВНОСТИ АНГЛИЙСКОГО ТЕКСТА В РАМКАХ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ**

***Ключевые слова:** машинная система, обработка естественного языка, анализ эмотивности текста*

Развитие информационных технологий в XXI веке способствовало развитию компьютерной лингвистики и интенсификации исследований, связанных с обработкой информации на естественном языке и направленных на формирование взаимодействия и коммуникации на естественном языке между человеком и компьютером. Параллельно росту объемов данных, хранящихся в интернете, возникла необходимость в разработке систем, способных обрабатывать такое количество информации. Одна из задач, подлежащих решению в рамках компьютерной лингвистики, заключалась в анализе эмотивной составляющей содержательной стороны языка. Таким образом сформировалось отдельное направление, основная цель которого сводится к выявлению субъективной информации в тексте, ее классификации в качестве позитивно, нейтрально или отрицательно маркированной, а также экспликации отношения автора текста к тем или иным отдельно взятым явлениям, упомянутым в тексте. Основная цель настоящей статьи – анализ эмоционального аспекта текста посредством применения трех основных упомянутых в статье методов.

#### **GAYANE YEGHIAZARYAN, GOHAR PELOSHYAN - SENTIMENT ANALYSIS OF THE ENGLISH TEXT THROUGH INFORMATION TECHNOLOGIES**

***Keywords:** machine system, natural language processing, sentiment analysis of the text*

In the 21<sup>st</sup> century, the development of information technology has contributed to the development of computer linguistics and natural language processing, which aims to mold the communication process and implement human-computer cooperation in the natural language. With the growth of the information published on the Internet, there was a need to create systems that would be able to deal with such huge amounts of data. One of the problems of automatic text processing is to analyze the emotional aspect of the text. It is a field of natural language processing and computer linguistics that aims to find subjective information in the text, classify it in positive, negative or neutral groups, and thus determine the author's attitude to the particular phenomenon or subject. The article is aimed at text's emotional aspect analysis from the point of view of the techniques used. And three basic methods of analysis can be distinguished.

**Ներկայացվել է՝ 03.04.2019**  
**Գրախոսվել է՝ 02.04.2019**

I VALORI PRAGMATICI DELL'USO DEL MODO IMPERATIVO IN ITALIANO  
ED IN ARMENO

FRUNZE HOVHANNISYAN

**Parole chiave:** modo imperativo, valore pragmatico, sfumature di significato, enunciati direttivi, frasi pseudo-imperative, forma esplicita, esortazione, significato lessicale, forme marcate, marcatezza pragmatica

La presente ricerca affronta il tema dell'impiego del modo verbale dell'imperativo nella lingua italiana paragonando in chiave contrastiva con tutti i mezzi di espressione che adotta la lingua armena per esprimere le nozioni e significati che in italiano vengono espressi mediante il modo imperativo. Tale forma nella lingua armena, facendo parte delle lingue indoeuropee è del tutto esistente, per cui lo scopo principale del presente elaborato è il comparare i due sistemi linguistici in contesto, soffermandosi sull'impiego del modo imperativo nelle diverse frasi con le rispettive traduzioni nella lingua armena. Con questa concisa elaborazione si intende stimolare l'attenzione su alcuni tratti particolari della linguistica contrastiva che hanno rilevanza assai notevole nell'insegnamento delle lingue straniere. L'analisi riguarda gli apprendenti armeni per i quali l'italiano (identificato come LS non è un sistema linguistico affine). L'attività di mettere a confronto due o anche più lingue ha lo scopo di evidenziare somiglianze o differenze tra esse e anche per esprimere valutazioni. Tale metodo viene largamente applicato per capire meglio l'oggetto di studio riguardo alle varietà di obiettivi da realizzare. Nell'apprendimento e perfezionamento dell'italiano nell'ambito armeno la conoscenza delle nuove strategie migliora l'efficienza e promuove la possibilità di acquisire competenze linguistiche considerabili sia da discenti che insegnanti. È ovvio che la didattica di lingue non affini, appartenenti ad altri gruppi linguistici, implica una serie di difficoltà e di errori, causati dalle differenze tra loro. La ricerca volta a individuare le discrepanze tra le lingue porta a un confronto contrastivo che agevola l'analisi del modo imperativo in italiano ed armeno.

Inoltre, sempre dal punto di vista contrastivo, abbiamo affrontato le due lingue delineandone i tratti distintivi. La presente ricerca contrastiva si basa sulle teorie di diversi linguisti italiani ed armeni come *Dardano*, *Trifone*, *Renzi*, *Serianni*. *Asatryan*, *Abrahamyan*, *Khlgatyan* ecc. L'analisi, dunque,

si propone di mettere a confronto le caratteristiche semantico-funzionali del modo imperativo in Italiano ed Armeno individuate nel testo italiano ed armeno identificando tutte le varianti espressive che adoperano italiano ed armeno.

L'imperativo è un modo verbale che arricchisce nostre possibilità espressive, consentendo di esprimere particolari sfumature di significato. Certamente, si è sicuro della crisi nel registro informale, dove esso, anche a causa della scarsa padronanza della lingua, è costituito dall'indicativo, il modo della certezza e dell'oggettività.

Il presente elaborato si propone di presentare l'analisi di un aspetto sintattico e morfologico della lingua italiana e della lingua armena, trattando l'impiego del modo imperativo, e di vari mezzi di espressione che usano le due lingue per esprimere diversi significati del modo imperativo.

Ci soffermiamo sull'uso del modo imperativo nelle proposizioni indipendenti in italiano che verranno messe a confronto con le relative traduzioni in armeno. Pertanto, la ricerca non è soltanto un riassunto complessivo delle caratteristiche semantico-funzionali del modo imperativo ma mira anche ad illustrare in maniera contrastiva quali sono i mezzi di espressione del modo imperativo nelle due lingue sopracitate rivelando anche i valori pragmatici dell'uso del modo imperativo in italiano ed armeno.

La tipologia è uno dei settori di ricerca più vivaci della linguistica contemporanea. La tipologia linguistica si occupa essenzialmente dello studio della variazione interlinguistica. Come sappiamo le lingue del mondo sono diverse tra di loro, e questa variazione non è frutto del caso, ma obbedisce a principi generali. La tipologia linguistica ambisce in sostanza ad individuare proprio questi principi, esclude la componente tempo, considera le lingue a prescindere dalla famiglia di appartenenza e dell'epoca di attestazione, classifica le lingue in base ad analogie e divergenze sistematiche a livello strutturale.

Il verbo è la parte variabile del discorso che, da sola o insieme ad altri elementi, fornisce, collocandole nel tempo, informazioni circa il soggetto della frase. Il termine "verbo" deriva dal latino *verbum* "parola" (Sensini 1997: 233). Il verbo occupa un ruolo specifico tra le parti variabili del discorso, grazie alla varietà delle sue forme, alla ricchezza, delle categorie grammaticali e al ruolo fondamentale nella formazione del discorso. (Asatryan, 1983:205). Il verbo possiede un organico e complesso sistema di forme per esprimere le categorie del modo, del tempo, della persona, del numero: tale sistema prende il nome di coniugazione. (Dardano, 1997: 311).

Le forme dell'imperativo morfologico e quelle considerate imperativo sintattico, assumono, nell'ambito degli enunciati direttivi, diverse funzioni pragmatiche. Da una parte, secondo gli schemi tradizionali, sono state chiamate e considerate come imperative tutte le frasi contenenti il verbo all'imperativo morfologico, vale a dire frasi imperative dal punto di vista della forma verbale, anche se la funzione pragmatica non aveva a che fare con l'enunciato direttivo. Dall'altra parte, nonostante la loro funzione pragmatica, non sono state considerate come imperative le frasi con una struttura o sintetica o analitica, diversa dall'imperativo morfologico, cioè le frasi costruite con imperativo sintattico.

Per effetto di quest'impostazione dovrebbe essere considerata come direttiva, per esempio la frase "*Dormi bene, Maria...*", ma dovrebbe esserlo la frase "*Mi darai una mano, vero*". Dunque a decidere della forza illocutoria dell'enunciato saranno, oltre alla forma della frase, tutti costituenti della situazione comunicativa che sono decisivi sia per la formazione dell'enunciato che per la sua interpretazione. In altre parole "la forza illocutoria è risultato dell'interazione tra indicazione linguistica e informazione contestuale". Se ne deduce che, in dipendenza dei partecipanti alla situazione comunicativa e del loro rapporto dell'ambiente in cui la comunicazione si svolge, l'enunciato sarà formulato ed interpretato rispetto alla sua funzione comunicativa.

Per la distinzione tra l'imperativo direttivo e l'imperativo non direttivo il discriminante è l'intenzione del parlante: l'imperativo funge nella sua funzione primaria quando l'intenzione del parlante è indurre l'ascoltatore al compimento del contenuto proposizionale. Usando l'imperativo direttivo il parlante dice:

*Voglio che tu faccia questa causa.*

Da cui deriva anche la definizione dell'enunciato direttivo come enunciato con la funzione pragmatica di indurre l'allocutore a menzionata nell'enunciato, mentre il costrutto imperativo ovvero la forma è canonica degli enunciati direttivi non veicola necessariamente contenuto pragmatico direttivo. Semplicemente con tutte le frasi imperative sono direttive e non tutti gli enunciati direttivi contengono il verbo all'imperativo.

Le frasi con le quali il parlante si rivolge alla persona presente nella situazione comunicativa con o scopo di indurla a compiere un'azione, appartengono, a livello pragmatico, agli enunciati direttivi e svolgono la funzione pragmatica di **ordine** e **divieto** i direttivi esprimono anche *preghiera, consiglio, invito* e *permesso*. Il modo verbale associato a queste funzioni è l'imperativo e il congiuntivo nell'italiano e l'imperativo in armeno.

*A ogni calico mi pareva che la porta cedesse leggermente: si vedeva un filo di luce per la lunghezza del battente. Jill gridava,-“Smettila”. Io gridavo, “Vieni qui”.* (1) (De Carlo, 1997: 92)

-Երգեք,-հրամայում է մեծ մայրիկը, ու բացվում են քարացած շուրթերը, ջուր առած բերանները, սառած աչքերը: Թավն է թնդում, թավիշն է ծորում, երգում են բոլորը՝ ավագ ու կրտսեր, տղա ու աղջիկ, մանուկ ու ծծկեր: (1) (Ղազանյան, 2003:187)

*La madre quasi subito si è messa a gridare, “ Corrette a mettervi il costume e fate un salo in piscina.”* Indicava l’acqua, che rifletteva attorno reticoli di luce. (2) (De Carlo, 1997:128)

-Չարկեք, հարսներ, զարկեք թոռներ,- գոռում էր դիրքապահը,- նոնակները շարտեք, եղեգները կրակ տվեք...,-հրամանատարի ձայնը լսվում էր ամենուրեք, բոլորին էր հասնում նրա ոգևորող խոսքը: (2) (Ղազանյան, 2003: 219)

*“ Sempre capricci. Ecco, apro l’acqua fredda. Prova, prova con un piede. E iepida. Calati. Adesso chinati in avanti, che ti insapono. Ma che fai? Stai fermo se no, ti va il sapone in bocca”.* (3) (Maraini, 1996: 30)

Մի կրակեք,Մի կրակեք: Հեղ գնա, Մոսես,որ շատ լինենք մեկն ու մեկիս կղիպչի գնա: (3) (Սարգսյան, 2009: 77)

Negli esempi è stata usata un’unica forma del verbo, però con funzioni pragmatiche diverse. Gli esempi (1) e (2) rappresentano un ordine, l’esempio (3) un divieto. Nella lingua parlata la funzione dell’enunciato sarebbe caratterizzata dall’intonazione discendente più marcata rispetto all’intonazione dell’asserzione.

Il contesto e il rapporto tra il parlante e l’ascoltatore ovvero esecutore dell’azione servono da segnali della differenza tra i direttivi con la funzione d’ordine e quelli con la funzione di consiglio.

*E meglio che lei non parli .* (5) (Moravia, 2001:42)

-Ժամանակն է, որ հեռանաս իմ տնից, Մերուժանի որդի, ես հայոց պատմություն պիտի գրեմ, Սահակ Բագրատունի ասպետն այդպիսի խնդրանք է ուղարկել ինձ: (5)(Սարգսյան, 2009: 143)

*Non ti togliere il soprabito?* (6) (Moravia, 2001:32)

Չվերցնես այդ գումարը: Կարծում եմ, որ դա է ամենալավ ելքը: (6)

Nell’esempio (5) la funzione del consiglio è indicata dal predicato valutativo della reggente. Il consiglio dell’esempio (6) assume la forma di una frase interrogativa. In italiano l’uso del congiuntivo è spiegabile con il funzionamento degli aspetti pragmatici. Il parlante, per esprimere il suo distacco sociale dell’ascoltatore, adopera la forma meno diretta rispetto a quella dell’imperativo ed adopera il congiuntivo come forma di cortesia:

*...Poi dopo un minuto che il sarto era rimasto quasi mortificato a guardarlo, si voltò con più affabile:-Mi dia il suo sacco! (7) (Romano, 1975:11)*

L'esempio (7), rispetto al contesto in cui la frase è stata pronunciata, rappresenta una preghiera e corrisponde alla struttura Prego/ Spero/ Credo/ Che Mi dia il suo sacco. Le frasi ilussive, con le quali il parlante si rivolge alla persona presente nella situazione comunicativa con lo scopo di indurla a compiere oppure a non compiere un'azione, appartengono, a livello pragmatico, agli enunciati direttivi e svolgono la funzione pragmatica di ordine e divieto. Tuttavia, secondo la classificazione proposta da Stati, i direttivi espletano anche preghiera, consiglio, invito e permesso. Il modo verbale associato a queste funzioni è l'imperativo o il congiuntivo:

*Vieni qui Carla, mettiti qui!*

*Dunque, tu Carla, di' la verità.*

*'Tu non dir nulla,' ordinò la madre.*

*Siediti qui, Anna !*

Negli esempi è stata usata un'unica forma del verbo, però con funzioni pragmatiche diverse. Gli esempi 1 e 2 rappresentano un ordine. Il termine enunciato direttivo è stato usato da Searle nella sua tassonomia degli atti linguistici. Nella lingua parlata la funzione dell'enunciato sarebbe caratterizzata dall'intonazione discendente più marcata rispetto all'intonazione dell'asserzione. Inoltre l'ordine può essere espresso esplicitamente nella struttura con il verbo performativo, come risulta dall'esempio successivo:

*Ti ordino di fargli delle scuse ...*

In certe situazioni non è sempre facile distinguere tra l'ordine e la preghiera.

Il criterio distintivo sarà quello dettato dalla sociolinguistica:

*E ora, parlami della tua famiglia.*

*Credimi Carla, ...*

*Ci conceda una proroga ...*

Nella preghiera il parlante assume la posizione di uguaglianza di inferiorità a differenza dell'ordine quando il parlante assume la posizione di superiorità. La funzione pragmatica di preghiera può essere indicata anche dal significato lessicale del verbo. Inoltre si tratta di preghiera quando il parlante esprime il suo coinvolgimento emotivo. Il contesto ed il rapporto tra il parlante e l'ascoltatore ovvero esecutore dell'azione servono da segnali della differenza tra i direttivi con la funzione d'ordine e quelli con la funzione di consiglio:

*Fai come me.*

*È meglio che lei non parli.*



*Non ti toglia il soprabito?*

Nel primo esempio il parlante, adoperando l'imperativo, pone il suo comportamento come modello da imitare, nel secondo esempio la funzione del consiglio è indicata dal predicato valutativo della reggente. Il consiglio del terzo esempio assume la forma di una frase interrogativa. Gli enunciati con il verbo al congiuntivo esprimono l'ordine rispetto a Lei, Loro. Tuttavia, l'uso del congiuntivo come imperativo sintattico è spiegabile con il funzionamento degli aspetti pragmatici. Il parlante, per esprimere il suo distacco sociale dall'ascoltatore, adopera la forma meno diretta rispetto a quella dell'imperativo e adopera il congiuntivo come forma di cortesia.

La frase iussiva (Treccani 2017 :187) con il verbo al congiuntivo, che serve soprattutto nelle frasi dipendenti per esprimere la dipendenza (non solo quella sintattica ma anche quella semantica) è considerabile come frase ellittica:

*Lei ci dia questa proroga, ...*

L'esempio rispetto al contesto in cui la frase è stata pronunciata, rappresenta una preghiera e corrisponde alla struttura

*Prego/Spero/Credo/ che Lei ci dia questa proroga.*

Oltre alla funzione direttiva una frase con il verbo all'imperativo, può essere non direttiva. Queste frasi sono considerate come pseudo-imperative, a differenza delle frasi direttive, non sono sostituibili dalla forma con il verbo performativo o con un'altra forma esplicita che abbia lo stesso significato.

*Fallo.=Voglio/ Ordino/ Prego/ Raccomando che tu lo faccia.*

Le frasi pseudo-imperative possono essere di diversi tipi:

- La prima sottoclasse delle pseudo-imperative comprende gli usi in cui la funzione pragmatica è quella del mettersi in contatto con l'ascoltatore e mantenere la sua attenzione: (*fra i viventi commenti e le risate degli altri*). *Oh, senti, senti!* (Pirandello, 1989: 39)

*Լսիր, չիհնի, թե դու էս փանն ապրել ես, էնքան հեշտ ես ճամփան գտնում,- գարմացալ Ահմադը:* (Ղազանյան, 2003: 174)

Il verbo è del tutto privo del suo significato lessicale: Il parlante naturalmente, non aspetta il compimento dell'azione espresso da esso. Queste frasi, infatti, rappresentano la fase preparatoria dell'enunciato successivo e hanno lo scopo di attirare la partecipazione o solidarietà dell'ascoltatore. A questo tipo appartengono le frasi che esprimono **sorpresa** o **esortazione** con la funzione fatica. Il verbo, anche in questo caso, perde il suo significato lessicale:

*Posso sedermi? – Figurati!// Si figurati!*

*Dai! Ma dai!*

“Zitto, male. Fatti lavorare bene. Adesso voltati, che ti insaponano il petto e i fianchi”. (Maraini, 1996:30)

Կրակ, աղեղաբաթուկ,- հնչեց հրամանը, որ ասես, ժայռերի կարարներից արձագանք առավ ու ռումբի պես պայթեց ծովակի կապուրակ ջրերի վրա: (Ղազանջյան, 2003: 192)

L'imperativo è sostituibile con una struttura non verbale: *Figurati!* / *Si figuri!* / *Certo!* / *Naturalmene!* / *Dai!* / *Forza!* / *Avanti!* / *Ma dai!* / *Davvero!?*.

Gli equivalenti armeni sono molto simili: իրոք, առաջ և այլն:

• Al secondo tipo appartengono le frasi all'imperativo sostituibile con una fra condizionale: *Di una parola e sei un uomo morto!* (Moravia, 2001:51)

Եվս մեկ քայլ արա և դու դիակ ես:

L'interpretazione della funzione pragmatica di questo tipo frase potrebbe essere equivoca. Infatti, sembra che esistono due possibilità: il significato della frase può essere: *Non dire una parola, o sei un uomo morto*, vale a dire funzione direttiva, o *Se dici una parola sei un uomo morto*, cioè funzione assertiva. Tuttavia, rispetto alla seconda parte del periodo, in entrambi i casi, la funzione pragmatica è **avvertimento** o **minaccia**.

• Il terzo tipo delle frasi pseudo-imperative è rappresentato dalle frasi con le quali il parlante vuole esprimere qualcosa di positivo rispetto all'ascoltatore.

*Ma ogni volta che io posso aiutarti, giovanotto, fammelo sapere, e ti restirò il favore meglio che posso! Nossignore, la prudenza non è mai troppa in questa maledetta fabbrica quando capita che qualche donna venga a far una visita*

-*Tutto va bene, divertiti pure!* (Caldwell, 1959: 42)

Հիմա փակիր աչքերդ ու լսիր էն ծայնը, որ մենակ քեզ համար է հնչելու, որը խաղաղություն է բերելու հոգուդ, ուժ է տալու մարմնիդ, որ կարողանաս ապրել, քո զավակների ու մարդի համար: (Սարգսյան, 2009: 31)

*Se vieni a Los Angeles cerca bene tra i voli charter perché si risparmia quasi la metà e gli aerei sono identici a honolulu ci sono un sacco di agenzie che fanno sconti basta cercare un pò. Stai bene e facci sapere qualcosa se decidi di venire, manda un telegramma.* (De Carlo, 1997:23)

La loro funzione non direttiva si spiega col fatto che esse non assumono il verbo performativo utilizzabile con gli enunciati direttivi (*Ti ordino di farmi sapere.*-*Ti ordino di divertirti*). Si tratta delle frasi in cui il parlante esprime, rispetto all'ascoltatore, il suo desiderio che gli accada qualcosa di buono. Questo tipo di frase si distingue, sia per la forma sia per la funzione pragmatica, dalle frasi ottative in cui si usa il congiuntivo imperfetto e che

esprimono un desiderio a favore del parlante stesso (*Venisse Carlo! Sarei felice*), ed anche dalle augurative in cui è presupposto l'intervento dà qualche forza esterna e soprannaturale (*Che Dio benedica.*). Il verbo performativo sarebbe *Ti/vi auguro...* e la funzione pragmatica è quindi quella dell'*augurio*. Questo tipo di enunciato non direttivo è sostituibile con la forma non verbale. Così, di solito si propongono gli auguri come *Buon divertimento! Buon appetito! Buon viaggio= Vi/ti auguro buon divertimento/ appetito/ viaggio.*

**Atento!**-State attenti: usato con valore esclamativo, per avvertire di un pericolo o esortare all'attenzione.

**Basta!**- Non parlate più!, Finitela!: esclamazione che sprime la richiesta che un'azione venga interrotta.

**Buon Dio!**-Aiutami Dio mio!: espressione tipica delle preghiere, ma anche esclamazione che esprime impazienza, sconforto e simile.

**Fermo!**- Fermati!:sospendere un'attività, lo svolgimento di qualcosa.

**Fuori!**- esci fuori!

**In alto i cuori!** -Sii coraggioso!

**Mani in alto!**-Alzate le mani:Si dice puntando un'arma.

**Punto!**- Ferma!: segno che indica l' fine di un periodo.

**Vai con Dio!**- benedizione con cui si accompagna la partenza di qd.

**Vietato fumare!**-Non fumate!-proibire, non permettere, impedire a qd, di fare qc.

Auguri tipici anche nella lingua armena . Infatti, questi auguri rappresentano frasi ellittiche (*Vi/ti auguro buon divertimento/viaggio*), come del resto conferma la forma accusativa dell'aggettivo e quella del sostantivo negli auguri di questo tipo in armeno.

Adesso possiamo fare degli esempi anche per la lingua armena, che sono delle frasi pseudo-imperative, cioè la forma delle frasi non è imperativa, ma il significato lo è.

Դու՛րս- դո՛ւրս գնա:

Զգու՛յշ- զգույշ եղի՛ր:

Աստված քեզ հետ- բարեմաղթանք, որպեսզի ամեն ինչ լավ լինի:

Զծխե՛լ- մի՛ ծխեք:

Ուշադրությո՛ւն- ուշադիր եղե՛ք:

Ձեռքերը վե՛ր - Ձեռքերը վեր բարձացրո՛ւ:(Է.Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան»)

L'idea dell'imperativo è basata su un ordine, un consiglio, una raccomandazione, di fare qualcosa, di aggire o non aggire in alcun modo.

L'idea dell'imperativo può essere espresso tramite un'enunciato, nelle

istruzioni di prodotti commerciali, di apparecchi, di macchine, di segnaletica stradale, è può anche essere accompagnato da un'immagine corrispondente.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Moretti, G.B. L'italiano Come Seconda Lingua nella Varietà del suo Repertorio Scritto e Parlato. Perugia: Guerra Edizioni, 1993.
2. Silvestrini, M., Bura C., Chiacchella E., Giunti Armanni V., Pavese R. L'italiano e L'italia. Perugia: Guerra Edizioni, 1995.
3. Sensini, M. La Grammatica della Lingua Italiana. Milano: Arnoldo Mondadori Editore, 1997.
4. Seriani, L. Italiano; Grammatica, Sintassi, Dubbi. Torino: Garzanti Editore, 2003.
5. Serianni, L., Castelvechi A. Grammatica Italiana; Italiano Comune e Lingua Letteraria. Torino: UTET, 1991.
6. Dardano, M., Trifone P. Grammatica italiana con nozioni di linguistica. Bologna: Zanichelli Editore, 2009.
7. Alisova, T. Strutture semantiche e sintattiche della proposizione semplice in italiano. Firenze: SGI, 1972.
8. Rezni, L., Salvi G., Cardinetti A. Grande Grammatica Italiana di Consultazione, voll. III. Milano: Mulino, 1991.
9. Stati, S. Il dialogo. Considerazioni di Linguistica Pragmatica. Napoli: Liguori, 1982.
10. Bertuccelli, P. M. Che Cos'è la Pragmatica. Milano: Bompiani, 1993.
11. Ascoli, C. Some pseudo-imperatives and their communicative function in English. Folia Linguistica XII, 1978.
12. Austin, J. L. Come agire con le parole. Tre aspetti dell'atto linguistico. : Sbità. 1978.
13. Graffi G., "Sintassi", Bologna, Mulino,1994.
14. Katerin katerinov, La Lingua Italiana Per Stranieri, Guerra Edizione,Perugia,2005.
15. Lakoff,R., La logica della cortesia; ovvero bada a come parli,Sbisa 1978.
16. Treccani, Dizionario della Lingua Italiana.Giunti T.V.P. Editore 2017.

17. Ասատրյան, Մ. Ժամանակակից հայոց լեզու. Երևան: Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1983.
18. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան 1973
19. Ավետիսյան Յ., Զաքարյան Հ. Ձևաբանություն. Երևան: Զանգակ-97 Հրատարակչություն, 2008
20. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք1, Երևան, 1962
21. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Լույս հրատարակչություն, Երևան, 1975.
22. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, 1976 Երևան Հայաստան Հրատարակչություն, 1/11 հատորներ.
23. Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, դասագիրք Երևան 1997.
24. Աղայան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան 1976 Երևան Հայաստան Հրատարակչություն, 1/11 հատորներ.
25. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, 4.6 Երևան 1971.

## REFERENCES

1. Moretti, G.B. L'italiano Come Seconda Lingua nella Varietà del suo Repertorio Scritto e Parlato. Perugia: Guerra Edizioni, 1993.
2. Silvestrini, M., Bura C., Chiacchella E., Giunti Armanni V., Pavese R. L'italiano e L'italia. Perugia: Guerra Edizioni, 1995.
3. Sensini, M. La Grammatica della Lingua Italiana. Milano: Arnoldo Mondadori Editore, 1997.
4. Seriani, L. Italiano; Grammatica, Sintassi, Dubbi. Torino: Garzanti Editore, 2003.
5. Serianni, L., Castelvechi A. Grammatica Itliana; Italiano Comune e Lingua Letteraria. Torino: UTET, 1991.
6. Dardano, M., Trifone P. Grammatica italiana con nozioni di linguistica. Bologna: Zanicchelli Editore, 2009.
7. Alisova, T. Strutture semantiche e sintattiche della proposizione semplice in italiano. Firenze: SGI, 1972.

8. Rezni, L., Salvi G., Cardinetti A. Grande Grammatica Italiana di Consultazione, voll. III. Milano: Mulino, 1991.
9. Stati, S. Il dialogo. Considerazioni di Linguistica Pragmatica. Napoli: Liguori, 1982.
10. Bertucelli, P. M. Che Cos'è la Pragmatica. Milano: Bompiani, 1993.
11. Ascoli, C. Some pseudo-imperatives and their communicative function in English. *Folia Linguistica* XII, 1978.
12. Austin, J. L. Come agire con le parole. Tre aspetti dell'atto linguistico. : Sbità. 1978.
13. Graffi G., "Sintassi", Bologna, Mulino,1994.
14. Katerin katerinov, La Lingua Italiana Per Stranieri, Guerra Edizione,Perugia,2005.
15. Lakoff,R., La logica della cortesia; ovvero bada a come parli,Sbisa 1978.
16. Treccani, Dizionario della Lingua Italiana.Giunti T.V.P. Editore 2017.
17. Asatryan, M. Jhamanakakic hayoc lezow. Er&an: Er&ani Hamalsarani Hratarakchowl'yown, 1983.
18. Asatryan M. Jhamanakakic hayoc lezvi d'&abanowl'yan harcer,Er&an 1973
19. Avetisyan Y., Zaqaryan H. D'&abanowl'yown. Er&an: Zangak-97 Hratarakchowl'yown, 2008
20. Abrahamyan A., Bayy' jhamanakakic hayerenowm, girq1,Er&an,1962
21. Abrahamyan S. G., Jhamanakakic hayereni qerakanowl'yown, Lowys hratarakchowl'yown, Er&an,1975.
22. Aghayan E'. B., Ardi hayereni bacatrankan baoaran, 1976 Er&an Hayastan Hratarakchowl'yown, 1/11 hatorner.
23. Aghayan E'. Barseghyan H., Hayoc lezow, dasagirq Er&an 1997.
24. Aghayan E'. B. Ardi hayereni bacatrankan bar'aran 1976 Er&an Hayastan Hratarakchowl'yown,1/11 hatorner.
25. Atwar'yan H., Liakatar qerakanowl'yown hayoc lezvi, 4.6 Er&an 1971.

**ՖՐՈՒՆԶԵ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐՆՈՒՄ**

*Հիմնաբառեր՝ հրամայական եղանակ, գործաբանական արժեք, իմաստային նրբերանգներ, բառային իմաստ, նշույթավորված միավորներ, գործաբանական նշույթավորում:*

Հոդվածում ներկայացվում է հրամայական եղանակի կիրառման գործաբանական առանձնահատկությունները ժամանակակից իտալերենում և արդի արևելահայերանում: Հեղինակը փորձում է ոչ միայն վերհանել նկատվող ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն երկու լեզուների միջև, այլև բացահայտել հրամայական եղանակի կիրառման գործաբանական առանձնահատկությունները:

**ФРУНЗЕ ОГАНЕСЯН – ПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В СОВРЕМЕННОМ ИТАЛЬЯНСКОМ И ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКАХ**

*Ключевые слова: семантическая окраска, прагматическое значение, стилистически маркированные формы, лексическое значение, прагматические особенности, повелительное наклонение*

В статье рассмотрены прагматические особенности использования повелительного наклонения в итальянском и восточноармянском языках. Автор статьи делает попытку не только выявить существующие сходства и различия между двумя языками, но и раскрыть прагматические особенности использования повелительного наклонения.

**FRUNZE HOVHANNISYAN - PRAGMATIC VALUES OF THE USE OF THE IMPERATIVE MOOD IN ITALIAN AND ARMENIAN**

*Keywords: Imperative Mood, Pragmatic Value, Lexical Meaning, Marked Forms, Semantic Colourings.*

The article touches upon the pragmatic values of the use of the Imperative Mood in modern Italian and Armenian. The article makes an attempt to reveal pragmatic similarities and differences of the use of the Imperative Mood in the above mentioned languages.

Ներկայացվել է՝ 25.06.2019

Գրախոսվել է՝ 25.06.2019

*Հիմնաբառեր՝ մեդիախոսույթ, ներակա իմաստ, ասություն, իլլոկուտիվ արժեք, խոսույթի սուբյեկտիվություն/օբյեկտիվություն*

20-րդ դարի երկրորդ կեսին, երբ գործաբանական լեզվաբանության զարգացումը նոր թափ ստացավ, շատ լեզվաբաններ լեզվական ներակայման ելակետային դրույթ ընդունեցին «անուղղակի խոսքային ակտերը»՝ դիտարկելով դրանք որպես անուղղակի գործողությունների միջոցով իրականացվող խոսքային ակտեր (Maingueneau 1990):

Խոսքային ակտերի տեսության վերաբերյալ աշխատությունները շարունակում են զարգացնել Օստինի (Austin 1970) և Սերլի (Searle 1972) կողմից առաջ քաշված դրույթները և ընդգծում են հատկապես այն հիմնական վարկածը, որ խոսել նշանակում է իրականացնել տեղեկատվության փոխանակում, և ինչպես հավելում է Կերբրատ-Օրեշիոնին «իրականացնել խոսքային մի ակտ, որը ենթարկվում է հստակ կանոնների և, որը հավակնում է ազդել տեղեկատվությունն ընդունող օբյեկտի վրա ու փոխել նրա վերաբերմունքը, իսկ ընկալել ասույթը նշանակում է բացի տեղեկատվության բովանդակությունից, ըմբռնել նաև այդ ասույթի գործաբանական նպատակը, այսինքն, դրա իլլոկուտիվ ուժը և արժեքը» (Kerbrat-Orecchioni 1999): Այս դեպքում խիստ կարևորվում է ասույթի «հաջողության պայմաններ» հասկացությունը, համաձայն որի որոշակի պայմաններ նպաստում են ասույթի իլլոկուտիվ արժեքի ուժգնացմանը՝ մեծացնելով ասույթի պերլոկուտիվ ազդեցության հնարավորությունը:

Իհարկե, ցանկացած տեքստ ունի իր առանձնահատկությունը՝ շնորհիվ լեզվական միավորների նպատակային ընտրության և, յուրաքանչյուր տեքստ իր մեջ կրում է որևէ միտում, ինտենցիա՝ ձգտելով ազդել իր հասցեատիրոջ վրա, և միայն այդ տեքստի շրջանակներում է, որ կարելի է դուրս բերել այդ միտումը, որը մեծ մասամբ արտահայտված է ներակայորեն: Նույնիսկ պարզ, սովորական տեղեկատվությունները չեն սահմանափակվում միայն տեղեկություն հաղորդելով և հասցեատերերին ներկայացնելով սոսկ փաստերն ու իրադարձությունները, այլ միտված են նաև ազդել նրանց վրա՝ այդ փաստերն ու իրադարձությունները դիտարկելու այս կամ այն կերպ: Օ. Դյուկրոն այսպես է



արտահայտվում այդ մասին. « Որևէ ասույթ, որն արտահայտում է ինչ-որ մի փաստի, երևույթի հաստատում, ենթադրում է, որ այդ ասույթի հեղինակը ներակայորեն ստիպում է հաղորդակցության հասցեատիրոջը հավատալ տեղեկատվության ճշմարտացիությանը» (Ducrot 1980): Այլ կերպ ասած՝ անուղղակի խոսքային ակտի ժամանակ տեղեկատվության արտակա մակարդակում արտահայտված իմաստին, խիստ որոշակի խոսքային իրավիճակում հավելվում է ներակա իմաստ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ցանկացած տեղեկատվություն օժտված է թույլ կամ ուժեղ արտահայտված գործաբանական նշանակությամբ, որը կարող է լինել թաքնված կամ շատ թե քիչ բացահայտ, ուստի և այդ տեղեկատվության բովանդակությունը կրում է տարբեր բնույթի իլլուկուտիվ արժեք: Հետևաբար, լրագրողական խոսույթը անհրաժեշտ է դիտարկել խոսքային միկրո ակտ, որն իր մեջ ընդգրկում է ամենատարբեր խոսքային ակտեր՝ խոստանալ, հարցնել, ողջունել, շնորհակալություն հայտնել և այլն, և որտեղ ներակայումը կազմում է դրա անքակտելի բաղադրիչը:

Հարկ է նշել, որ «ներակա իմաստ» հասկացությունը կարևորագույն տեղ է զբաղեցնում մեդիա հաղորդակցության մեջ: Այս խնդրի հետազոտությամբ զբաղվողներից մեծ մասը, ինչպիսիք օրինակ Ժ.Պ. Դեզոլնիեն և Ն. Մարտինոն, Պ. Բոն, Պ.Բուրդիեն նշում են, որ ներգործող ձևերը այնքան են զարգացել և հղկվել ժամանակի ընթացքում, որ լրագրողական լեզվում դրանք բացահայտ չեն երևում և արտահայտված են ներակա մակարդակում:

Ներակա բովանդակության տարբերակները խիստ բազմազան են և ստացել են տարբեր անվանումներ, ինչպես օրինակ ակնարկ, որը կարող է լինել չարամիտ կամ շողոքորթ, եզրակացություն, հետևություն, առնչակցություն և այլն: Ըստ Կերբրա-Օրեշիոնիի (Kerbrat-Orecchioni 1986) ասույթները, մեծամասամբ, բացի իերնց արտակա բովանդակությունից արտահայտում են նաև մեկ կամ բազում ներակա իմաստներ, և եթե համատեքստը ունի բազում ներակա իմաստներ, ապա արտակա բովանդակությունը դուրս է մղվում՝ շեղելով ողջ համատեքստի բովանդակությունը: Օրինակ, եթե որևէ մեկը ջեռուցման մարտկոց ունեցող սենյակում ասում է «j'ai froid» (ես մրսում եմ), ապա այս ասույթը կարող է ընկալվել ավելի շուտ որպես խնդրանք՝ ուղղված տանտիրոջը, բարձրացնելու ջերմաստիճանը, քան տեղեկատվություն իր մրսկան լինելու վերաբերյալ:

Օ. Դյուկրոն գտնում է, որ կանխենթադրույթը և ենթադրյալը (présupposé et sous-entendu) ներակայության երկու բովանդակություններն են, որոնք հակադրվում են արտակա բովանդակությանը: Եվ քանի որ

իմաստի ներակայությունը կարող է շատ ավելի խոր թաքնված լինել, ապա դրա վեր հանման համար հարկ է լինում կատարել տեքստի համակողմանի վերլուծություն և դիմել ավելի լայն համատեքստի (Ducrot 1980 p.173):

Այսպես օրինակ,

- *Enfin décidé à accomplir son devoir de citoyen, Hamide ira voter*

Այս ասույթի արտակա իմաստն է « Hamide vote désormais (Համիդը այսուհետ քվեարկում է), իսկ կանխենթադրույթն է «Hamide ne votait pas auparavant»(Համիդը նախկինում չէր քվեարկում), որը բացահայտում է enfin (վերջապես) մակբայ-ցուցիչը :

Toi téléspectateur, tu ferais bien de voter aussi ասույթի (Հեռուստադիտող, ճիշտ կլիներ, որ դու նույնպես քվեարկեիր) ենթադրյալը այն հետևությունն է, որը բխում է ավելի լայն համատեքստից, որն այստեղ եվրոպական սահմանադրության հանրաքվեն է, և որը այս ասույթում առկայանում է հաղորդակցական առանձնահատուկ հանգամանքներում, այն է՝ երիտասարդ Համիդի քվեարկության օրինակով լրագրողները հրավիրում են մյուս բոլոր երիտասարդներին կատարելու իրենց քաղաքացիական պարտքը:

Ըստ Դյուկրոյի, կանխենթադրույթները պետք է ուսումնասիրել լեզվաբանական բաղադրիչների շրջանակներում, առանց հաշվի առնելու ասույթի գործածության պայմանները, իսկ ենթադրյալի ուսումնասիրությունը պահանջում է ուսումնասիրել ասույթան այն բոլոր պայմաններն ու հանգամանքները, որտեղ կարևորվում են գործող անձանց զգացմունքները, միտումներն ու պահանջները: Ըստ լեզվաբանի ներակա իմաստների ձևավորման մեջ կարևոր դեր է խաղում հոգեբանական գործոնը, և այս դեպքում ներակայումը կախված է տեղեկատվությունը հաղորդողի մտադրությունից և խոսակցի կամ տեղեկատվության հասցեատիրոջ անձնական մեկնաբանությունից:( 7, O. Ducrot)

Ասվածը առավել հստակ լուսաբանելու համար անդրադառնանք 2005թ. եվրոպական սահմանադրության քվեարկության քարոզարշավի ժամանակ լրագրողների կողմից այս հարցի կապակցությամբ հնչեցված ելույթների վերլուծություններին: Ստորև ներկայացնում ենք երկու ելույթ, որոնցից առաջինը ֆրանսիացի հայտնի լրագրող Գի Լագաշի վերլուծությունն է քննարկվող հարցի շուրջ, իսկ երկրորդը՝ France 3 ալիքի հայտնի լրագրող Ֆրանսուա Պուլե-Մաթիսինը.

- *C'est le débat le plus sensible aujourd'hui du débat entre les partisans du oui et les partisans du non. Alors la nouvelle constitution est-elle plutôt sociale ou libérale ? Eh bien ! Jugez par vous-même ! L'article 3 par*

*exemple parle d'une économie sociale de marché hautement compétitive qui tend au plein emploi et au progrès social. Plus loin l'article 117 parle d'une promotion d'un niveau d'emploi élevé, de la garantie d'une protection sociale adéquate, de la lutte contre l'exclusion sociale. Alors pour les partisans du non, ces articles sont trop généraux, trop vagues ; il n'y a aucune obligation de résultats. Les tenants du oui, eux, soulignent que la protection sociale est clairement inscrite dans la constitution, ce qui n'était pas le cas jusqu'à présent dans les précédents traités européens.* (Lagache, M6)

Այսօր սա ամենասակնառու բանավեճն է, որ ընթանում է «այո»-ի և «ոչ»-ի կողմնակիցների միջև: Այսպիսով, նոր սահմանադրությունը ավելի շուտ սոցիալական բնույթ կրում, թե՛ լիբերալ: Դատելք ինքներդ: Օրինակ, 3-րդ հոդվածը վերաբերում է բարձր մրցունակություն ունեցող սոցիալական փնտեսությանը, որը ձգտում է աշխատանքի լիարժեք ապահովման և սոցիալական առաջընթացի: Իսկ 117 հոդվածում խոսվում է աշխատատեղերի մակարդակի բարձրացման, համարժեք սոցիալական պաշտպանվածության երաշխավորման, սոցիալական դուրս մղման դեմ պայքարի մասին: Այսպիսով, «ոչ»-ի կողմնակիցների համար այս հոդվածները չափազանց ընդհանրական են և անորոշ, և չկա արդյունքների երաշխավորման որևէ պարտավորություն: «Այո»-ի կողմնակիցները ընդգծում են այն միտքը, որ սոցիալական պաշտպանվածությունը հստակորեն ամրագրված է սահմանադրության մեջ, մի բան, որ մինչ այժմ չի եղել եվրոպական նախկին պայմանագրերում:

Իրականում, այս վերլուծության սուբյեկտիվությունը արտահայտված է ներակայորեն, և ելույթի կանխենթադրույթն է «քվեարկեք «այո» եվրոպական ընդհանուր սահմանադրությանը»: Գի Լագաշի փաստարկները հիմնավորված են 3-րդ և 117-րդ հոդվածների հղումով, որտեղ խոսվում է մրցունակ և ուժեղ շուկայական տնտեսության առաջընթացի (*économie sociale de marché hautement compétitive qui tend au plein emploi et au progrès social*), ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման և աշխատավորության իրավունքների պաշտպանություն մասին (*protection sociale adéquate, de la lutte contre l'exclusion sociale*), որոնք հնչում են որպես բավական համոզիչ փաստարկ արդարացնելու համար «այո» քվեարկողների դիրքորոշումը: Ինչ վերաբերում է «ոչ»-ի կողմնակիցների դիրքորոշմանը, լրագրողը, կարծես թե խուսափում է մանրամասնել և հստակեցնել այն (*alors pour les partisans du non, ces articles sont trop généraux, trop vagues, il n'y a aucune obligation de résultats*- «ոչ»-ի կողմնակիցների համար այս հոդվածները չափազանց

ընդհանրական են և անորոշ և չկա արդյունքների երաշխավորման որևէ պարտավորություն):

Երկրորդ վերլուծությունը, ինչպես արդեն ասացինք, կատարված է Ֆրանսուա Պուլե-Մաթիսի կողմից.

*Libérale ou sociale ?*

*- Le marché où la concurrence est libre et non faussée est depuis 1957 un principe fondateur de la construction européenne. La constitution n'apporte rien de neuf sur ce point. Elle insiste néanmoins sur le caractère hautement compétitif de cette économie. Pourquoi ? Son ambition est la reprise textuelle de l'engagement pris par les chefs d'Etat et de gouvernement à Lisbonne en mars 2000 : celle de faire de l'Europe l'économie la plus compétitive du monde. Choix entériné à l'époque par tous les gouvernements qu'ils soient de droite ou de gauche. La constitution ajoute des exigences sociales : la recherche d'un niveau d'emploi élevé et un haut degré de protection sociale et cela à chaque fois que des politiques européennes doivent être mises en oeuvre.*

Սոցիալական, թե՛ լիբերալ,

«Դեռևս 1957 թվականից, Եվրոպական կառույցի հիմնարար սկզբունքն է իրական և ազատ մրցակցություն ունեցող շուկայի ստեղծումը: Այս առումով Եվրոպական սահմանադրությունը ոչ մի նոր բան չի առաջարկում: Այնուամենայնիվ նա հիմնական շեշտը դնում է տնտեսության բարձր մրցակցային բնույթի վրա: Ինչու՞: Նա ձգտում է 2000թվականի մարտ ամսին Լիսաբոնում երկրների և կառավարությունների ղեկավարների կողմից ընդունված պարտականությունները ամրագրել համապատասխան օերնքներով և հողվածներով և Եվրոպայի տնտեսությունը դարձնել ամենամրցունակը աշխարհում: Այդ ժամանակ բոլոր կառավարությունների կողմից, լինեն աջ, թե՛ ձախ, կատարված ընտրությունը վավերացվել է: Սահմանադրությունը ավելացնում է սոցիալական պահանջները; աշխատատեղերի ընդլայնման բարձր մակարդակի և սոցիալական պաշտպանվածության բարձր աստիճանի ձգտում, և Եվրոպական քաղաքականությունը պետք է մշտապես որդեգրի այս ուղղությունը» (Lagache, M6 ):

Եվ այն պահին, երբ լրագրողը խոսում է, էկրանին երևում է Եվրոպայի դրոշը, որը կարծես ընդգծում է լրագրողի հարցադրումը՝ *Europe libérale ou Europe sociale* (լիբերալ Եվրոպա, թե՛ սոցիալական Եվրոպա) և թվում է, թե տեսախցիկի առջև արտասանված այս մենախոսությունը արտահայտում է լրագրողի անկողմնակալ դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ:

Սակայն պետք է ասել, որ այս երկու ելույթներում արտահայտված է մեկ ընդհանուր մոտեցում, երկուսն էլ խուսափում են փաստարկել «ոչ»-ի կողմնակիցների դիրքորոշումը: Եվ կարծես այն տպավորությունն է, որ «ոչ» -ը չունի արժեքավոր որևէ փաստարկ, ուստի և առաջնային ու կարևոր նշանակություն են ստանում միայն «այո»-ի փաստարկները: Նույն տրամաբանությամբ, Ֆրանսուա Պուլե-Մաթիսը ընդգծում է «այո»-ի համախոհների փաստարկները (*La constitution ajoute des exigences sociales : la recherche d'un niveau d'emploi élève et un haut degré de protection sociale*) և գնալով ավելի հեռու, իր ուշադրությունը կենտրոնացնում է դեռևս 1957թվականից եվրոպական կառույցի հիմնարար սկզբունքի վրա (*l'engagement pris par les chefs d'Etat et de gouvernement à Lisbonne en mars 2000*). Հիմնավորումը թվում է շատ պարզ և կարծես համահունչ է լրագրողի սեփական կարծիքին, այն է՝ պետք է սատարել եվրոպական ընդհանուր սահմանադրությանը, քանի որ այն եվրոպական ընդհանուր մի կառույցի ստեղծման ջանքերը ավարտին հասնելու լրացուցիչ մի փուլ է, որը միշտ եղել է բոլոր կառավարությունների, անկախ նրանց ուղղվածության, փոխհամաձայնության և ուշադրության կենտրոնում (*qu'ils soient de droite ou de gauche*): Այնուհետև լրագրողը թվարկում է այն դրական միտումները, որոնց ձգտում է եվրոպական սահմանադրությունը՝ «աշխատատեղերի, ընդլայնում, սոցիալական պաշտպանվածության բարձր աստիճան և, որ եվրոպական քաղաքականությունը պետք է որդեգրի այս ուղղությունը» (*la recherche d'un niveau d'emploi élève et un haut degré de protection sociale cela à chaque fois que des politiques européennes doivent être mises en oeuvre*):

Ինչպես տեսնում ենք «ոչ»-ի համախոհների փաստարկները բացակայում են այս ելույթներում: Դժվար է այս ելույթները գնահատել օբյեկտիվ, քանի, որ լրագրողների կողմից ամենաչնչին ջանքեր անգամ չեն կիրառվում հավասարակշռված դիրքորոշում ցուցաբերելու ներկայացված փաստերի իրենց վերլուծություններում:

Իհարկե, նրանք կարող էին խոսել այն մասին, որ «ոչ»-ի կողմնակիցները քննադատում են «niveau d'emploi élevé» (աշխատատեղերի ընդլայնման բարձր մակարդակ) ձևակերպումը, որն այնքան հուսադրող չէ, որքան «plein emploi» (աշխատանքի լիարժեք ապահովում) ձևակերպումը: Նույն տրամաբանությամբ «ոչ»-ի կողմնակիցները քննադատում են նաև Ֆրանսիայի սահմանադրությամբ ամրագրված «droit d'obtenir un emploi» (աշխատանք ձեռք բերելու իրավունք) ձևակերպման փոխարինումը եվրոպական սահմանադրության մեջ «droit de travailler» (աշխատելու իրավունք) ձևակերպումով, որը ըստ

նրանց միանշանակ չէ, և որ աշխատելու իրավունքը դեռևս չի ենթադրում աշխատանքով ապահոված լինելու երաշխավորություն, և այս ձևակերպումն ավելի շուտ իր մեջ ամփոփում է անկայունության գաղափար: Ավելացնենք, որ լրագրողների կողմից կատարված վերլուծությունները առանց համապատասխան համատեքստի, ակնհայտորեն կարելի է գնահատել սուբյեկտիվ, և այդ սուբյեկտիվությունը արտահայտված է ներակայորեն:

Շատ հաճախ ներակա հավելումներն ունենում են հուզա-գնահատողական բնույթ՝ արտահայտելով հաղորդակցության մասնակիցների դեպքերի և իրադարձությունների գնահատականը, նրանց հույզերն ու զգացմունքները: Այս դեպքում ներակայությունը դուրս է բերվում բառային միավորների կրկնության, ժեստերի միջոցով:

Այսպես օրինակ, Ֆրանսուա Միտերանի հեռուստատեսային ելույթը 1965թ. ներկայացնում է իր հակառակորդի, Գեներալ Դը Գոլի կողմից պաշտպանված դրոյթների միմիանց զուգորդված չորս հերքում.

*Non ce n'est pas vrai, vous n'aurez pas à choisir dimanche entre la IV République et la V République ...*

*Non ! Ce n'est pas vrai, vous n'aurez pas à choisir dimanche entre le soldat qui incarna l'honneur de la patrie le 18 juin 1940 et une génération qui aurait manqué à ses devoirs...*

*Non ! Ce n'est pas vrai, vous n'aurez pas à choisir dimanche entre le désordre et la stabilité...*

*Non ! Ce n'est pas vrai, vous n'aurez pas à choisir dimanche entre le régime actuel et celui des partis.* (<https://www.cairn.info/revue-parlements1-2005-2-page-149.htm>)

Զախերի թեկնածուն 4 անգամ կրկնում է «*Non ! Ce n'est pas vrai, vous n'aurez pas à choisir*» (Ոչ, դուք չեք կարող ընտրություն կատարել...) ասույթը, վստահ լինելով, որ Ֆրանսիացի ժողովուրդը չի կարող սխալ ընտրություն կատարել անկարգության և կայունության միջև, պատերազմում Ֆրանսիայի ազատագրական պայքարին մասնակցած զինվորների և իրենց հայրենասիրական պարտքից խուսափող այսօրվա սերունդի միջև, վերջապես այսօրվա վարչակարգի և բազմակուսակցության միջև: Սակայն այս ելույթի հիմնական գաղափարը արտահայտված է ներակայորեն, այն է՝ համոզել ընտրողներին, որ իր հակառակորդի կողմից ներկայացված գաղափարները անհիմն են, նույնիսկ սուտ, և որ նա արժանի չէ ընտրվելու Ֆրանսիայի նախագահ: Հետևաբար, այս ելույթի կանխենթադրույթն է՝ «Քվեարկեք ինձ համար»:

Ընդհանրապես տեղեկատվության ներակայությունը օրգանապես առկա է ասույթի կառուցվածքում և եզրահանգումը դուրս է բերվում բուն

իմաստից, միաժամանակ հանդես չգալով որպես հաղորդակցության շոշափելի օբյեկտ, և այս ներակա տեղեկատվությունն է, որ բնութագրվում է որպես «կանխենթադրոյթ»։ Կանխենթադրոյթները և արտակա արտահայտված իմաստները հավասարապես ապահովում են խոսքային կապակցվածություն։ Ըստ Տ.Նիկոլանայի, ասույթը կարող է ընդգրկել մի շարք տարաբնույթ կանխենթադրոյթներ, որոնք ելակետային դրոյթներ են, իսկ հետևությունները՝ լրացուցիչ տեղեկություն։ Հետևությունները կանխենթադրոյթներից տարբերվում են վերջիններիս անփոփոխությամբ՝ անկախ լինելով համատեքստից: (Николаева М.1985; 3-е изд.2005)

Օրինակ, գովազդների տեքստերը, որոնք միտված են գայթակղելու սպառողներին և համոզելու նրանց որևէ ապրանք գնելու համար, միշտ չէ, որ համարժեքորեն են ընկալվում և ապակողավորվում հասցեատերերի կողմից, ուստի շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում հիմնական ասույթից հերթագայորեն դուրս բերել այն կանխենթադրոյթները, որոնք թաքնված են տեքստում :

*Il y a une vie après le repas. (Vittel)* օրինակում, Վիտել հանքային ջրի դրական հատկանիշը մարսողությունը կարգավորելու մասին արտահայտված է ներակայորեն և այն հասկանալու համար հարկավոր է ասույթից դուրս բերել տրամաբանորեն միմյանց փոխկապակցված հետևյալ մտքերը.

Հիմնական ասույթ - *Il y a une vie après le repas.*

Կանխենթադրոյթ - *Vittel facilite la digestion.*

Հետևություն - *Buvez Vittel (pour vivre après le repas).*

Հարկ է նշել, որ հաճախ ներակա տեղեկատվությունն օգտագործվում է հաղորդագրության գայթակղությունը բարձրացնելու համար, որովհետև սուբյեկտիվորեն հասցեատերը առավել շատ հետաքրքրվում է թաքնված տեղեկատվության ապակողավորմամբ՝ մասնակցելով հաղորդագրության ստեղծմանը: Տեղեկատվությունը իր իմաստը ձեռք է բերում միջսուբյեկտային համընդհանուր մի գործընթացում, որտեղ տեղեկատվության հասցեատերը առավելագույնս է ընդգրկված հաղորդակցությունում: (11, D. Wolton)

Իվ Լավուանը նշում է, որ այսօր հատկապես ամսագրերի հոդվածների վերնագրերը հիմնվում են ճարտասանական հաղորդակցության վրա՝ կիրառելով գովազդային հնարները և ուղղակիորեն դիմելով ընթերցողներին: Նույն երևույթը նկատվում է հեռուստատեսությունում, երբ խոսքը վերաբերում է խորհուրդներ տալուն՝ առողջությանը վտանգ սպառնացող երևույթները կամ ճանապարհային վտանգները կանխելու համար ( Lavoine 1997):

Չնայած, որ «Les antibiotiques, c'est pas automatique» կամ «Le respect, ça change l'école» գովազդ-վերնագրերում բացակայում են անձ մատնանշող ցուցիչները, այնուամենայնիվ դրանց անմիջական հասցեատերերը հեռուստադիտողներն են, որոնց մի կողմից զգուշացվում է խուսափել չափազանց շատ դեղամիջոցների օգտագործումից, մյուս կողմից՝ հորդորում է հարգանք, կասեցնելու համար բռնությունը դպրոցներում: Ըստ «միտված ազդեցություն/թողնված ազդեցություն» տեսության հեռուստատեսային լրատվության վերնագրերի արտակա և ներակա իմաստները կազմում են խոսքային ակտ՝ ուղղված հեռուստադիտողին, և կարող է թողնել տարբեր ազդեցություններ՝ ըստ հասցեատիրոջ ընկալման աստիճանի, և, որ համարժեք ընկալման ու մեկնաբանման համար հեռուստատեսությունը ունի տեքստերի ապակողավորման իր առանձնահատուկ միջոցները, ինչպիսիք են վերնագրերը, պատկերները, հեռուստալրագրողի ձայնի տոնայնությունը, դիմախաղը և այլն:

Ինչպես նշում է Ժ.Օթիե-Ռեվյուն, մետա-հաղորդակցական «մատչելիությունը» հաղորդագրության սոսկ զարդարանքը չէ, այլ այն «երաժշտությունն է», որ ստանում է հաղորդակցության հասցեատերը: Եվ հաղորդակցության սուբյեկտը քայլ առ քայլ առաջ շարժվելով, գիտակցաբար թե անգիտակցաբար արտահայտում է իր սուբյեկտիվությունը, նույնիսկ, եթե նրա նպատակն է հնարավորինս այն սահանափակել՝ առավելագույնս ընտրելով օբյեկտիվ իրականությունը ներկայացնող բառապաշար, և այնուամենայնիվ այդ սուբյեկտիվությունը առկա է նրա խոսքում, ու շատ հաճախ այն դրսևորվում է ներակայորեն» (Authier-Revuz [www.marges-linguistiques.com](http://www.marges-linguistiques.com)), n° 7 mai 2004):

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. D. Maingueneau, Pragmatique pour le discours littéraire. Paris, Bordas, 1990
2. J. L. Austin, Quand dire, c'est faire, Paris, Seuil, 1970
3. J. R. Searle, Les Actes de langage, Essai de philosophie du langage, Paris, Hermann, 1972
4. C. Kerbrat-Orecchioni, L'enonciation. De la subjectivité dans le langage, Paris, Armand Colin, 1999
5. O. Ducrot, Les Mots du discours, Paris, Minuit, 1980
6. C. Kerbrat-Orecchioni, L'implicite, Paris, Armand Colin, 1986
7. O. Ducrot, Dire et ne pas dire, op. cit., pp. 173



8. Guy Lagache, M6. <https://www.ojim.fr/information-presse-medias/france-2/page/3/>
9. <https://www.cairn.info/revue-parlements1-2005-2-page-149.htm>
10. Т. Николаева, «Функции частиц в высказывании (на материале славянских языков)», М.1985; 3-е изд. 2005
11. D. Wolton, Information: une victoire-problème, *Le Debat*, n° 66, septembre 1991
12. Y. Lavoine, Le Langage des medias, Grenoble, PUG, 1997
13. J. Authier-Revuz, Musiques meta-enonciatives ([www.marges-linguistiques.com](http://www.marges-linguistiques.com)), n° 7 mai 2004.

#### REFERENCES

1. D. Maingueneau, Pragmatique pour le discours littéraire. Paris, Bordas, 1990
2. J. L. Austin, Quand dire, c'est faire, Paris, Seuil, 1970
3. J. R. Searle, Les Actes de langage, Essai de philosophie du langage, Paris, Hermann, 1972
4. C. Kerbrat-Orecchioni, L'enonciation. De la subjectivité dans le langage, Paris, Armand Colin, 1999
5. O. Ducrot, Les Mots du discours, Paris, Minuit, 1980
6. C. Kerbrat-Orecchioni, L'implicite, Paris, Armand Colin, 1986
7. O. Ducrot, Dire et ne pas dire, op. cit., pp. 173
8. Guy Lagache, M6 . <https://www.ojim.fr/information-presse-medias/france-2/page/3/>
9. <https://www.cairn.info/revue-parlements1-2005-2-page-149.htm>
10. Т. Nikolaeva, «Funkcii chastic v vyskazyvanii (na materiale slavjanskih jazykov)», М.1985; 3-е изд.2005
11. D. Wolton, Information: une victoire-problème , *Le Debat*, n° 66, septembre 1991
12. Y. Lavoine, Le Langage des medias, Grenoble, PUG, 1997
13. J. Authier-Revuz, Musiques meta-enonciatives ([www.marges-linguistiques.com](http://www.marges-linguistiques.com)), n° 7 mai 2004.

**ДОНАРА КАЗАРЯН, АННА МЕЛКОНЯН - ИМПЛИЦИТНЫЕ ВОЗМОЖНОСТИ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ В МЕДИАРЕЧИ**

*Ключевые слова:* медиа-дискурс, имплицитный смысл, высказывание, иллюкативное значение, субъективность / объективность дискурса

Спецификой любого текста является выбор языковых средств в соответствии с целью высказывания, и каждый текст содержит в себе какое-то намерение, интенцию, для воздействия на адресата, и только в пределах данного текста можно выявить это намерение, которое в большинстве случаев бывает заложено в нём имплицитно. Иными словами, при косвенном речевом акте к эксплицитно выраженному смыслу в строго определённой речевой ситуации добавляется имплицитный смысл. Следует отметить, что выражение «имплицитный смысл» имеет очень большое значение в медиакоммуникации.

Большинство лингвистов, занимающихся исследованием этой проблемы, таких как Ж. П. Дезолье, Н. Мартино, П. Бо, П. Бурдьё, отмечают, что со временем виды воздействия развились и отточились настолько, что в журналистской речи выражаются не явно, а на имплицитном уровне. И поскольку имплицитность смысла может быть заложена намного глубже, то для его выявления возникает необходимость всестороннего анализа текста, а иногда и привлечения более широкого контекста.

#### **DONARA GHAZARYAN, ANNA MELKONYAN - IMPLICIT FEATURES OF LANGUAGE UNITS IN MEDIA SPEECHES**

**Keywords:** *media discourse, implicit meaning, utterance, illocutive value, subjectivity / objectivity of speech*

The specificity of any text is the choice of language means in accordance with the purpose of the utterance, and each text contains an intention to influence the addressee. Only within the certain text this intention can be revealed, which in most cases can be found in it implicitly. In other words, in the case of an indirect speech act, an implicit meaning is added to an explicitly expressed meaning in a strictly defined speech situation. It should be noted that the expression “implicit meaning” is very important in media communication. Most linguists, who study this problem, such as J. P. Dezolieu, N. Martino, P. Bo, P. Bourdieu, note that over time, the cases of impact developed and were refined so much that in journalistic speech they are expressed not explicitly, but on an implicit level. And since the implication of meaning can be laid much deeper, in order to identify it, there is a need for a more comprehensive analysis of the text, and sometimes in involving a wider context.

**Ներկայացվել է՝ 25.06.2019**  
**Գրախոսվել է՝ 25.06.2019**

## LA COMMUNICATION INTERCULTURELLE À TRAVERS LES TRADUCTIONS LITTÉRAIRES

DONARA GHAZARYAN

**Mots-clés:** *communication interculturelle, pont culturel, patrimoine culturel, enrichissement mutuel des cultures, traduction littéraire, langue connotative, métaphore poétique, intention de l'auteur*

*Le rôle de la traduction comme moyen de la communication interculturelle est connu de tous, mais il est exceptionnel dans les processus contemporains de la mondialisation. La formation du monde monopolaire menace de son uniformisation monolingue et monoculturelle. Et cette menace peut être levée par le biais de la traduction car c'est aux traducteurs et aux interprètes qu'incombe la tâche de création d'un pont culturel dans le besoin d'enrichissement mutuel des peuples, ce qui est devenu l'impératif de notre époque. Les rencontres officielles des représentants des pays, leur travail commun dans les cadres des organisations internationales, les contacts de plus en plus étroits des peuples; soit la diplomatie populaire, les systèmes de l'enseignement des langues étrangères et d'autres faits du monde contemporain deviennent unimaginables sans traductions et sans activité quotidienne de la grande armée des traducteurs et des interprètes.*

Les anciens manuscrits historiques témoignent de la contribution considérable des traducteurs. Mais surtout c'est au 20-ième siècle, après la seconde guerre mondiale que les traductions ont subi un changement quantitatif et qualitatif sans précédent. Le rôle socio-culturel de la traduction est connu des Arméniens depuis longtemps. Le mouvement de la traduction en Arménie a pris naissance au 5-ième siècle et avec celui-ci les Arméniens ont pris connaissance des cultures progressives de l'époque enrichissant à la fois leur propre patrimoine culturel. La traduction arménienne de la Bible, la reine des traductions, hautement appréciée par les étrangers, en témoigne.

En parlant du rôle important de la culture arménienne dans le développement des contacts avec le monde extérieur et du rattachement à la culture mondiale, Nikoraios Mar a signalé l'importance particulière de la double mission des traducteurs arméniens: «Suite aux événements politiques et économiques ce peuple vigoureusement doué d'art et de lettres était obligé

de vagabonder d'un pays à l'autre, du sud au nord et partout il a pris une part active aux mouvements littéraires»(N.Mar 1989, p.18)

Dans la réalité arménienne c'est le grand poète et écrivain Hovhanness Toumanyanyan qui a abordé les problèmes scientifiques fondamentaux de l'art de traduction. Son travail monumental en a fait «l'un des fondateurs de la théorie scientifique en traductologie arménienne»( Kh. Gulnazaryan 1994).

Pour H.Toumanyanyan la traduction est une source de l'enrichissement mutuel des cultures, est un moyen du rapprochement des peuples, un moyen de mieux se connaître. Il attachait une importance particulière à la traduction des chefs-d'oeuvres littéraires étrangers vers l'arménien. En valorisant l'importance des traductions littéraires il a exprimé son admiration vraiment exceptionnelle à l'égard de Shakespeare. Quand la traduction de la tragédie «Hamlet» faite par H. Massehyan a vu jour, la joie de Toumanyanyan était si grande qu'il a écrit: «Ce n'est pas seulement la joie de l'homme de lettres, mais c'est aussi celle d'une perception culturelle plus large de cet événement. Shakespeare est devenu un baromètre pour mesurer le niveau du développement de l'esprit des nations». En continuant son idée le grand poète disait: «Si un peuple ne le traduit pas cela veut dire qu'il est illettré, s'il ne le comprend pas cela veut dire qu'il est stupide, si une langue n'a pas assez de ressources cela veut dire qu'elle est chétive».

(H.Toumanyanyan 1994, p. 53).

D'autre part le grand poète attachait une grande importance culturelle à la traduction des oeuvres littéraires arméniennes vers les langues étrangères. A cet égard il a formulé un impératif irréfutable: présenter au monde les valeurs culturelles arméniennes et se faire connaître, se faire apprécier dignement. A cette époque il écrivait avec amertume: «Nous avons eu ce certificat attestant notre grandeur, mais ce certificat est resté dans notre poche, personne ne l'a lu, c'est pourquoi nous n'avons pas ce lien avec les autres peuples. Nous seuls, nous avons aimé et nous nous sommes liés d'amitié avec les autres peuples tandis que le génie de notre peuple était méconnu, c'est pour cela que nous n'avons pas été apprécié à notre juste valeur et qu'aucun peuple ne s'est lié d'âme et d'esprit avec nous»( H.Toumanyanyan 1994, p. 204).

La préoccupation esthétique du grand poète trouve son fondement dans les subtilités de l'art de la traduction littéraire. Et il a formulé cette méfiance quant à la possibilité de la traduction des textes littéraires par une définition expressive: «La traduction est une rose étalée sous le verre; sa beauté est évidente, mais il est impossible de sentir son parfum et son charme». En disant le parfum et le charme le grand écrivain faisait allusion

premièrement aux attentes culturelles car la traduction des textes littéraires ce n'est pas seulement le transfert de l'information d'une langue vers l'autre, mais elle est plutôt un processus interculturel. La valeur culturelle transférée dans ce nouveau milieu linguistique et culturel sous la forme d'une traduction retrouve des nouveaux destinataires qui cherchent d'abord à trouver dans cette traduction les mêmes émotions, les mêmes idées, bref, la même intention que l'auteur du texte original a voulu passer à son lecteur.

Voilà ce que Georges Mounin a dit à ce propos :

*« Une langue nous oblige à voir le monde d'une certaine manière. Au lieu de dire, comme les anciens praticiens de la traduction, que la traduction est toujours possible ou toujours impossible, toujours totale ou toujours incomplète, la linguistique contemporaine aboutit à définir la traduction comme une opération relative dans son succès, variable dans les niveaux de la communication qu'elle atteint »(Mounin 1963.,).*

On admet qu'il y a des cultures ou des civilisations profondément différentes qui constituent des mondes réels différents. Et de là il devient presque impossible de répondre à la question comment ces mondes profondément hétérogènes peuvent se comprendre et aussi se traduire, si chaque civilisation est impénétrable en profondeur pour l'étranger .

En valorisant les traductions russes des œuvres de Koutchak et de Sayat-Nova H.Toumanyane a remarqué : « Valéry Brussov a fait une traduction brillante et il a cherché à franchir même les obstacles infranchissables » (Toumanyane 1994, p. 203).

Et il est à noter que surtout la traduction des textes poétiques suscite beaucoup de débats chez les linguistes et les philosophes. Lors de la traduction le traducteur rencontre plusieurs obstacles, comme dit Georges Mounin « plusieurs pièges et entre tous ses pièges, pièges des civilisations, pièges des cultures » (Mounin 1963, p. 59) et il est rejeté de l'outrecuidance (tout peut se traduire) au désespoir (rien ne peut se traduire). Or, pour pouvoir répondre à la question quelle est la source de l'intraductibilité poétique, il faut distinguer la forme et la substance du contenu. La substance du contenu c'est la signification, la forme c'est le style.

La substance, c'est la réalité, mentale ou ontologique ; la forme c'est cette même réalité telle qu'elle est structurée par l'expression. Un mot prend son sens que par le jeu de ses rapports d'oppositions avec les autres mots de la langue. Quant à la forme, le texte poétique se distingue par sa valeur musicale. Il y a une musique<sup>!</sup> du vers qui plaît pour elle-même, comme le montre le plaisir que l'on peut éprouver à écouter des vers dans une langue

inconnue. En ce qui concerne le sens du poème, ce sens il faut savoir lequel il est.

Dans ce vers suivant de Valéry : « Ce toit tranquille où marchent des colombes », il serait difficile de comprendre que le « toit » désigne la mer et « colombes » des navires, mais le fait que « des navires voguent sur une mer paisible », n'a rien de poétique en lui-même. Or, le fait poétique commence à partir du moment où la mer est appelée toit<sup>1</sup> et les navires les colombes. (Cohen 1966, p. 43). Il y a une violation du code du langage, un écart linguistique que l'on peut appeler „figure de style,,. Or, ces figures jouent un rôle de première importance dans la poésie. Et si la rime est un opérateur phonique, alors la métaphore est un opérateur sémantique. La métaphore est le but de la figure. La métaphore poétique n'est pas simple changement de sens, elle est changement de type ou de nature de sens, passage du sens notionnel au sens émotionnel, c'est à dire la métaphore poétique est passage de la langue dénotative à la langue connotative. En fin de compte, la notion de connotation pose à la traduction le problème, soit de la possibilité, soit les limites de la communication interpersonnelle, intersubjective.

Dans son poème « Tristesse » Alfred de Musset évoque le désir éternel de l'homme qui pendant toute son existence cherche à trouver la Vérité et le sens de la vie. Toute la poésie repose sur les métaphores et elle est pleine de charge émotionnelle exprimant la mélancolie, la nostalgie, le profond désespoir.

J'ai perdu ma force et ma vie,  
Et mes amis et ma gaîté ;  
J'ai perdu jusqu'à la fierté  
Qui faisait croire à mon génie.

Quand j'ai connu la Vérité,  
J'ai cru que c'était une amie,  
Quand je l'ai comprise et sentie,  
J'en étais déjà dégoûté.

Et pourtant elle est éternelle,  
Et ceux qui se sont passés d'elle  
Ici-bas ont tout ignoré.

Ce sont les unités sémantiques « perdre », « dégoûter », « pleurer » qui portent essentiellement ces charges sur lesquelles est construite la figure

poétique. Il est à noter que ces unités lexicales assurent à la fois la progression thématique et la cohésion intertextuelle.

L'analyse du champs sémantique du mot « Vérité » nous permet de relever les sèmes suivants : la vie, le sens de vie et le poète après avoir connu la Vérité, est tombé dans un profond désespoir. Il a perdu ses amis, sa gaieté, son amour, bref, tout ce qui donne la motivation de vivre. L'analyse sémiotique du poème nous permet aussi de relever la fonction poétique cognitive à travers les unités « connaître et comprendre ». Après avoir connu la nature humaine, il a pu pénétrer dans la profondeur de l'âme humaine, dans son monde d'inconscience et a abouti à la conclusion que tout est éphémère et que chercher le sens de vie est une tâche inutile.

Connaître la Vérité → Connaître la vie → le sens de la vie

La Vérité → la vie → le sens de la vie

L'unité « sentir » mène le lecteur au champs émotionnel.

Sentir la Vérité → sentir → les sentiments → amour, gaieté, désamour, déception - tristesse

L'analyse du champs sémantique du groupe de mot « Vérité éternelle » englobe deux champs sémantiques complètement opposés

Vérité terrestre → Vérité éphémère,

Vérité céleste → Vérité éternelle

Le poète fait allusion à l'idée qu'outre la vérité terrestre, c'est-à-dire outre la vie terrestre et les plaisirs terrestres qui sont éphémères, il existe aussi la vérité céleste qui est éternelle et ceux qui n'ont pas connu, à qui n'a pas été révélée cette vérité si simple, restent dans l'ignorance.

La dernière strophe du poème exprime la fonction poétique communicationnelle, une communication avec la vérité suprême, avec Dieu.

Dieu parle, il faut qu'on lui réponde.

Le seul bien qui me reste au monde

Est d'avoir quelquefois pleuré.

La traduction arménienne du poème faite par H.Toumanyane a gardé le sens (dans sa substance) sans perdre la forme.

Ճշմարտությանն հանդիպելով,

Թվաց՝ գտա իմ տիրուհուն:

Երբ հասկացա հոգին իր բուն,

Հոգիս լցվեց խոր հափրանքով:

Ես կորցրի կյանք ու կորով

Եվ ընկերներ ու խնդրություն,  
Մինչև անգամ՝ հպարտություն,  
Որ օրորեց ինձ հանճարով:  
Հավերժական է նա սակայն:  
Եվ ով որ զանց առավ նրան,  
Մնաց անգետ ու շվարուն:

Տերն է խոսում, տանք պատասխան:  
Միակ շահս այս աշխարհում՝  
Մերթ լաց եղա, այդ է միայն:

Valéry Brussov en évoquant le problème de l'intraductibilité des textes poétiques a trouvé une solution magnifique dans cette formule encourageante : « Il est impossible de transmettre les créations poétiques d'une langue vers une autre, cela reste un rêve, mais il est également impossible de renoncer à ce rêve » .(Brussov 1999, p.76)

En rendant hommage à nos poètes-traducteurs nous pouvons constater aujourd'hui qu'ils n'ont jamais renoncé à ce beau rêve, sinon le trésor du patrimoine arménien ne se serait jamais enrichi des précieux diamants de l'art poétique français qui l'ont rendu encore plus brillant.

## RÉFÉRENCES BIBLIOGRAPHIQUES

1. Մառ Ն., Հայկական մշակույթը: Նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվաբանության, “Հայաստան”, 1989
2. Գյուլնազարյան Խ., Թումանյանի քննադատական և հրապարակախոսական ժառանգությունը// Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ.6, Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1994
3. Թումանյան Հ. “Համլետ”, ողբերգություն Շեքսպիրի: Անգլերենից թարգմանեց Հովհաննես խան Մասեհյան// Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ.6, Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1994
4. Թումանյան Հ., Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ուսերեն թարգմանությունների առիթով// Հովհաննես



- Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ.6, Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1994,
5. Mounin G., Les problèmes théoriques de la traduction, Editions Gallimard,1963
  6. Թումանյան Հ., Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ուսերեն թարգմանությունների առիթով// Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ.6, Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1994
  7. Mounin G., Les problèmes théoriques de la traduction, Editions Gallimard,1963
  8. Cohen J., Structure du langage poétique, Flammarion, 1966
  9. Брюсов В.Я.// Хрестоматия по теории перевода. Ереван: Ереванский государственный институт иностранных языков им. В.Брюсова, 1999.

### SOURCES LITTÉRAIRES

1. Musset A., Tristesse // Le livre d'or de la poésie française des origines à 1940, Paris : Marabout, 1972, 202
2. Մյուսե Ա., Տխրություն // Ֆրանսիական պոեզիա, Եր. Երևանի համալսարան, 1984, էջ 225-226

### REFERENCES

1. Mar' N., Haykakan mshakowyt'y': Nra armatnery' & naxapatmakan kapery' y'st lezvabanowt'yan, "Hayastan", 1989
2. Gyowlnazaryan X., T'owmanyani qnnadatakan & hraparakaxosakan jhar'angowt'yowny'// Hovhannes T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow, hat.6, Er. : HH GAA hrat., 1994
3. T'owmanyanyan H. "Hamlet", oghbergowt'yown Sheqspiri: Anglerenic t'argmanec Hovhannes xan Masehyan// Hovhannes T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow, hat.6, Er. : HH GAA hrat., 1994
4. T'owmanyanyan H., Qowchak Nahapeti & Sayat'-Novayi r'owseren t'argmanowt'yownneri ar'it'ov// Hovhannes T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow, hat.6, Er. : HH GAA hrat., 1994,

5. Mounin G., Les problèmes théoriques de la traduction, Editions Gallimard,1963
6. T'owmanyanyan H., Qowchak Nahapeti & Sayat'-Novayi r'owseren t'argmanowt'yownneri ar'it'ov// Hovhannes T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow, hat.6, Er. : HH GAA hrat., 1994
7. Mounin G., Les problèmes théoriques de la traduction, Editions Gallimard,1963
8. Cohen J., Structure du langage poétique, Flammarion, 1966
9. Брюсов В.Я.,// Хрестоматия по теории перевода. Ереван: Ереванский государственный институт иностранных языков им. В.Брюсова, 1999
10. Musset A., Tristesse // Le livre d'or de la poésie française des origines à 1940, Paris : Marabout, 1972, 202
11. Myowse A., Txrowt'yown // Fransiakan poezia, Er. Er&ani hamalsaran, 1984, e'j 225-226

**ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ – ԳՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ՄԻՋՄՇԱԿԱՌԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

*Հիմնաբառեր՝ միջմշակութային հաղորդակցություն, մշակույթների մեջձեցում, հոգևոր արժեքների փոխհարստացում, գրական թարգմանություն, հեղինակի մտադրություն, բանաստեղծական փոխաբերություն, հիմնանշանակային և հարանշանակային իմաստ, նույնարժեքություն*

Մշակույթների մերձեցումն ու փոխհարստացումը մարդկության գոյության հրամայականն է դարձել և միջմշակութային հաղորդակցության համատեքստում թարգմանությունը բացառիկ կարևոր դեր է խաղում ազգային մշակույթների պահպանման ու զարգացման գործում՝ կամրջելով մշակույթներն ու դրանք փոխհարստացնելով:

Թարգմանության մշակութային-քաղաքակրթական դերը վաղուց է հայտնի մեզ՝ հայերիս: Տակավին V դարից ծնունդ է առել թարգմանչաց շարժումը, որի շնորհիվ հայերը ծանոթացել են ժամանակի առաջադեմ մշակույթներին՝ հարստացնելով սեփական մշակութային արժեքները:

Հայ իրականության մեջ թարգմանության արվեստի ու գիտության խորքային հիմնադրույթներին անդրադարձել է հայ մեծանուն բանաստեղծ և գրող Հովհաննես Թումանյանը, որի համար թարգմանչությունը ժողովուրդների հոգևոր փոխհարստացման,

շաղկապման, փոխադարձորեն միմյանց ճանաչելու բացառիկ կարևորություն ունեցող միջոց է:

### **DONARA GHAZARYAN- LITERARY TEXT. TRANSLATION AS A MEANS OF CROSS-CULTURAL COMMUNICATION**

**Keywords:** *cross-cultural communication, contrastive linguistics, translation equivalents, poetic metaphors, connotation, denotation, equivalence*

The view of translation as a means of intercultural communication follows from the idea of language as a culture component, and culture - as an aggregate of material and spiritual achievements of the society, including all the varied historical, social and psychological features of the ethnos, its traditions, views, values, institutions, behavior, living conditions – in short, all the sides of its life and consciousness, including language . The notion of culture is essential for considering the implications in translation. Language is a reflexion of an ethnic group’s culture, a means of transmitting cultural values through generations and the major tool of cognition. Problematic aspects of intercultural communication are considered in the context of cultural and linguistic barriers encountered in translations from French into Armenian and vice versa.

The paper illustrates the pitfalls of translation and underpins the importance of the knowledge of culture with which one is attempting to communicate. The analytic framework is grounded in critical linguistic approach to concrete translators' mistakes and the challenges of some lexical issues in the translation process .

The art of translation has flourished in Armenia for centuries. Thus, in a country where for centuries the art of translation has played an important role in the development of arts, science and education, this tradition is being carried on. According to Armenian prominent writer Hovhannes Tumanyan Translators’ Day pays tribute to one of the most significant fields of human activity, which helps people of different nations and religions better understand each other and become acquainted with each other’s history and culture.

Ներկայացվել է՝ 25.06.2019  
Գրախոսվել է՝ 25.06.2019

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱԳՈՒՍ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ  
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ**

**ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ բառապաշար, հնդեվրոպական լեզու, բնիկ հայերեն, բառեր, փոխառություններ, ծագումնաբանություն, ստուգաբանություն, հազուստ, ստացվածքային բառեր*

Ժամանակակից հայերենն ունի շատ հարուստ բառապաշար: Այն իր մեջ ներառում է զարգացման բոլոր փուլերի՝ և՛ գրաբարի և՛ միջին հայերենի, և՛ աշխարհաբարի բառերը: Ըստ ծագման հայերենի բառապաշարը բաժանվում է երեք խմբի՝ բնիկ հայերեն բառեր, ստացվածքային կամ ժառանգորդական բառեր և փոխառություններ: Հայերենի բառապաշարում հիմնաշերտը կազմում են բնիկ հայերեն բառերը: Հր. Աճառյանն առանձնացնում է բնիկ հայերեն բառերի 22 իմաստային դաշտ, որոնց մեջ մտնում են նաև հազուստ անվանող բառերը:

Ըստ Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ի՝ հազուստ բառը գործածվում է երեք իմաստով.

1. Վրան միաժամանակ կրելու շորերի ամբողջությունը: 2. Զգեստների ամբողջությունը.հազուստեղեն: 3. Հազած զգեստը (Աղայան 1976):

Այս հոդվածում **հազուստ** բառը լայն իմաստով ենք գործածել. այդ անվան տակ ներառել ենք նաև հազուստի բաղադրիչ մասեր, գլխարկեղեն և կոշիկեղեն անվանող բառերը:

Սույն հոդվածը շարադրելիս հիմք ենք ընդունել հատկապես Հր. Աճառյանի (Աճառյան 1940-1951, 1979) և Գ. Զահուկյանի (Զահուկյան 1987, 2010) գիտական հետազոտությունները, քանզի նրանք ոչ միայն ի մի են բերել նախորդ գիտնականների նվաճումները, այլև նոր փաստերով հարստացրել հայ և օտարազգի գիտնականների կողմից ճանաչված բնիկ հայերեն (հ-ե) և փոխառյալ արմատների և արմատական բառերի ցանկը:

Գիտական քննության ենթարկելով հին, մասամբ միջին հայերենի գրավոր հուշարձանները՝ Հր.Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ արձանագրել է 11000 արմատներ ու արմատական բառեր:

Սակայն գիտական միտքը շարունակ փոփոխվում է,զարգանում,վերանայվում են և՛ Աճառյանի, և՛ այլ լեզվաբանների կատարած որոշ ստուգաբանություններ, ճշգրտվում կասկածելի, ոչ

հավաստի մեկնաբանություններ, բացահայտվում չստուգաբանված մի շարք արմատների ծագումը: Այս գործում մեծ ավանդ ունի անվանի լեզվաբան Գ.Ջահուկյանը:

Առաջնորդվելով համեմատական լեզվաբանության արտաքին համեմատությունների մեթոդով՝ Գ. Ջահուկյանը հասավ առավելագույն արդյունքների, որոնց վկան է նրա «Հայերեն ստուգաբանական բառարանը»: (Ջահուկյան 2010) Նա հայերեն 11000 արմատների թիվը հասցրեց 12000-ի՝ այս թվաքանակի մեջ ներառելով XX դարի վերջի և XXI դարի սկզբի ստուգաբանությունները, ինչպես նաև **կեղծ**, սխալագիր, միայն **մեկ անգամ** գործածված արմատները: Եթե վերոհիշյալները հանենք, կմնա 9000 բառ-արմատ: Աճառյանի ստուգաբանած բնիկ հայերեն 713 (աճանցական ձևերի հետ՝ 916) արմատների թիվը Ջահուկյանը հասցրեց 1500-ի, ընդարձակեց փոխառությունների թիվը՝ հասցնելով 5000-ի. 2500 արմատներ մնացին չստուգաբանված:

Եվ՝ բնիկ, և՛ փոխառյալ արմատների վերոհիշյալ թվաքանակից Աճառյանի և Ջահուկյանի ստուգաբանական բառարաններից դուրս ենք գրել **հագուստ** և **նրա բաղադրիչ** մաս անվանող բառաշերտը և պարզել ենք, որ այդ բառաշերտի արմատների մի մասը գրաբարի և միջին հայերենի միջոցով բնականաբար փոխանցվել է աշխարհաբարին, իսկ մի մասն էլ հիշատակվել է հին լեզվի գրավոր հուշարձաններում և նույնիսկ գրաբարում լայն գործածություն չի ունեցել: Շատ հավանական է, որ այդ բառերը կամ դրանց մի մասը պահպանված լինի հայերենի բարբառներում, բայց նման հանգամանալից քննությունը դուրս է մեր ուսումնասիրության նպատակից:

Մեր խնդիրն է ներկայացնել աշխարհաբարին անցած բառաշերտը. դրանց մի մասը դարձել է հնաբանություններ, իսկ մյուսը ընդգրկվել է գրական լեզվի համագործածական բառաշերտի մեջ:

Ըստ ծագման՝ հագուստի անվանումները բաժանվում են երկու խմբի՝ բնիկ հայերեն (հնդեվրոպական) բառեր և փոխառություններ:

### **1. Բնիկ հայերեն (հնդեվրոպական) արմատներ**

Թեև Գ.Ջահուկյանը ստուգաբանել է բնիկ հայերեն կամ հնդեվրոպական (այսուհետ՝ հ-ե) 1500 արմատներ և արմատական բառեր, սակայն աշխարհաբար գրական լեզվում հագուստ, նրա բաղադրիչ մասեր անվանող ստուգաբանված արմատների թիվը համեմատաբար սակավ է, ավելին՝ դրանցից մի քանիսի հնդեվրոպական ծագումը կասկած է հարուցում:

Ստորև ներկայացնենք այն արմատներն ու արմատական բառերը, որոնք լեզվաբանների կողմից հ-ե են համարվել:

**Բոկ** «բոբիկ, ոտքը մերկ»: Աճառյանը բառի արմատը բխեցնում է հ-

ե Բհոսո ձևից, որը կա բազմաթիվ հ-ե լեզուներում: Հայերենում այս արմատը նախ ստացել է բո, ապա կ-ի հավելմամբ՝ բոկ ձևը, գավառականներում նոր մասնիկի հավելմամբ բոկ-ը դարձել է բոկիկ, ապա առնմանության օրենքով՝ բոբիկ: Բոկ արմատի բառաբաղադրությամբ հայերենում ունենք **բոկոպիկ** բառը: Զահուկյանը վերանայում է հ-ե հիմքի կազմությունը՝ նախաձև համարելով Բհոսո-գո ձևի Բհոսո հիմքը. հմմտ. հ.վ.գերմ. bar «մերկ», լիտվ. basas ,հ.սլ. bosu «բոբիկ» ևն:

**Գոպի** (գաւտի): Ըստ Աճառյանի՝ բառը բաղադրված է **գաւ** և **պի** արմատներից. **տի-ն** հ-ե **dē** 'կապել' բայի արմատն է, անձանոթ է գաւ արմատը: Աճառյանը ենթադրում է, որ գաւ պիտի նշանակի «մեջք», քանի որ հայոց բարբառներում կա մեջկապ բառը: Զահուկյանը հավանական է համարում բառի հ-ե ծագումը, սակայն նախաձև է դնում **uābh-dē** կազմությունը՝ բաղադրված **uebh** «հյուսել, գործել» և **dē** «կապել» ( **dē** հայ. **պի** ) արմատից («հյուսկապ»):

Լեզվի զարգացման ընթացքում գոտի բառից առաջացել են գոտեզարդ, գոտեկապ, գոտկածալ, գոտկակալ, գոտկատակ, գոտկատեղ և այլ բառեր:

**եզր** «եզր,սահման»: Բնիկ հ-ե **egher (o),egh**: Հմմտ. լիտվ. **ėžra**, լատվ. **ezers**, հ.սլ. **ezero**, ռուս. **ozepo** (Զահուկյան):

**եզր** բառից առաջացել են եզրագոտի, եզրազարդ, եզրաժապավեն, եզրակար և այլ բառեր ևս:

**երիզ** «երկար և նեղ կտորի շերտ իբրև կապ»: Արդի հայերենում ունի **ժապավեն** իմաստը: Աճառյանը հ-ե նախաձև դնում է wreig'ha արմատը, բայց wr > եր ձևափոխությունը կասկածում է: Զահուկյանը թերևս բնիկ հ-ե նախաձև կարծում է **rei-g** «կապել» բայի զուգահեռ ձևը՝ reigh արմատը, որում **gh**-ն համարում է աճական: Այս **rei-g** արմատը առկա է կելտ. և գերմ. լեզուներում, ինչպես մ.վ. գերմ. **ric** «կապ»:

**երիզ** արմատից առաջացել են երիզագոտի, երիզազարդ, երիզաթել, երիզաժապավեն ևն:

**Ջգեսոյ** «հագուստ»: Աճառյանը բառի ծագումը ստուգաբանում է հետևյալ կերպ: Այն կապում չ գենուլ (հագնել) բայի արմատին, որի սկզբնաղբյուրն է հ-ե ves ձևը: Հայերենում բառասկզբի v-ն տվել է գ, վերջին s -ն ընկել է՝ գե , ապա ստ մասնիկով դարձել գեստ, իսկ գ նախդիրով՝ զգեստ: ՀՄԲ-ում Զահուկյանը կատարում է ճշգրտում՝ հիմքի սկզբնաձևը վերականգնելով: Ըստ նրա՝ հ-ե ues-նու նախաձևի ues հիմքի ձևափոխությունից առաջացել են լատ. vestis «զգեստ», հ.հնդ. vastē, խեթ. ues, uaš «հագցնել»: Բարբառներում կա առանց գ-ի ձևը:

**Ջգեսոյ** արմատից առաջացել են թավշազգեստ, լողազգեստ,

գիշերազգեստ, զգեստապահարան են:

**Թել** «դերձան»: Լեզվաբան Մորթմանը այս արմատը ցեղակից է համարում թրք. *tel* -ին: Չհամաձայնելով վերոնշյալին՝ Հ.Աճառյանը հավանական է համարում Պետերսենի այն կարծիքը, որ *h-tenslō* բառի *ten* «լարել,քաշել» պարզ արմատից զանազան ձևափոխություններով առաջացել են ինչպես սանս. *tanti* «թել», լատ. *tēl*, հուն. *taivia*, այնպես էլ հայ **թել** բառերը: Աճառյանը կարծում է, որ հայերենից են փոխառնված պ. *tēla* «թել, առասան» և թրք. **Tel** «թել, լար, առասան» բառերը: «**Թել**» արմատը ստուգաբանելիս Ջահուկյանը աշխատում է ճշգրտել *h-t* նախածնը, որը *h-t tek-lo* կազմության **tek** «գործել, հյուսել» արմատն է: Նա իբրև ապացույց բերում է հ.վ.գերմ. օրինակը՝ **that** «պատրույգ, քուր, թել»:

**Թել** արմատից առաջացել են թելակար, ժապավենաթել, մանրաթել, մետաքսաթել, ոսկեթել, պղնձաթել են:

**Կաճյակ** «թաղիքե հողաթափ»: Կազմված է կաճ արմատից և յակ ածանցով: Որոշ լեզվաբաններ այս արմատը կապում են պրս. *kaj* կամ *kač* ձևին, իսկ ՆՀԲ-ն՝ թրք. **քեչե** արմատին: Ըստ Գ.Ջահուկյանի՝ ծագումն անհայտ է: Հազիվ թե կապ ունենա հնդեվրոպական *gag* - «կլոր բան, գունդ» արմատի հետ կամ փոխառություն լինի իրանական աղբյուրից:

**Կապ** «կապ,վանկ»: Ջ.Ջահուկյանը բառը կապում է *h-t ghabh* «բռնել, վերցնել», արմատի հնարավոր տարբերակից՝ **kap**, համիմաստ արմատի կողքին, հմմտ. լատ. **habēnā** «փոկ,սանձ»:

**Կապ** արմատից առաջացել են բերանակապ, գլխակապ, գոտեկապ, երիզակապ, ժապավենակապ են:

**Կար** «թոկ, լար, հողակցում, կար, կարել»<sup>Է</sup> Գ.Ջահուկյանը հավանական է համարում *h-t* ծագումը՝ **goro'ger** «միավորել, հավաքել» ձևից, հմմտ. հուն. **αγειρω** «հավաքել», լատ. **grex, gis** «հոտ, կապոց,տրցակ», լիտվ. **gurgulas** «հանգույց» են:

**Կար** արմատից առաջացել են գրակակար, դարձակար, դիպակակար, եզրակար են:

**Կոճակ** «գնդաձև փոքրիկ իր զգեստի համար»<sup>Է</sup> Որոշ լեզվաբաններ այն կապում են պրս. **gož** արմատին և Աճառյանը **gož** և **կոճակ** բառերի նմանությունը պատահականություն է համարում: Ջահուկյանը նշված բառի արմատը՝ **կոճ** կապում է *h-t goudi նախաձևի geu* «ծռել, թեքել» արմատին՝ - **d** աճականով, հմմտ. հ. ֆրիզ. **kāte** «կոճ», նշվ. գերմ. **kot e, kōte** «կոճ», նույն արմատից է **կոճղ** բառը:

**Շերպ** «երկար և տափակ կտոր»: Ջահուկյանը բառը բխեցնում է բնիկ *h-t sked-ri*՝ **(s)k(h)ed** «ճեղքել, ցրել» արմատից, հմմտ. հ. հնդկ. **Skhadatē** «ճեղքել», լիտվ. **skedēns** «կտոր, տաշեղ» (Պոկորնի): Աճառյանն այս ստուգաբանությունը համարում է կասկածելի: Մինչդեռ ավելի քիչ

հավանական է բխեցնել *skerd* «կտրել» արմատից, ինչպես կարծում է Աճառյանը:

**Շոր** «հագուստ»՝ Աճառյանը բառի ծագման մասին ոչինչ չի արձանագրում: Ջահուկյանը քիչ հավանական է համարում հ-ե *skhor*, (*s*) *ker* «կտրել» արմատներից առաջացած լինելը, հմմտ. հ. իսլ. *horr* «վշա հագուստ», լատ. *corium* «կաշի, մորթ»:

**Վերարկու բառը** բաղադրված է **վեր** և արկ (արկանել) բաղադրիչներից: *Վեր-ը* հ-ե *uper* արմատն է, որը դարձել է ու-եր, որից էլ՝ վեր: Հնում վերարկու բառն ունեցել է մի շարք իմաստներ, բայց աշխատառարում գործածվում է «վրան առնել, շոր առնել» իմաստներով:

**Տեռ** «շղարշ»՝ Աճառյանը և Ջահուկյանը բառի սկզբնաղբյուրն են համարում հ-ե *der* «քերթել, ճեղքել»:

**Տուր(ն)** «ծայր, պոչ»: Ե՛վ Աճառյանը, և՛ Ջահուկյանը հավանական են համարում բառի բնիկ հ-ե ծագումը *dud* արմատից, հմմտ. մ. անգլ. *tote* «ծայր», իսլ. *toti* «ծայր»:

**Փերթ** «կտոր, պատռո, ծվեն»: Բառը ծագել է բնիկ հ-ե *spher* «ճեղքել, պատռել, կիսել» արմատից - *թ* աճականով: Աճառյանի ստուգաբանությանը համաձայն է նաև Ջահուկյանը:

**Օթոց** «ա) անկողնի ծածկոց, կապերտ, բ) վերարկու, զգեստ, կրկնոց»: Առաջացած է *evō*, *δόν* «հագնիմ» բառից՝ - *ti* աճականով:

**Օծի(ք)** «պարանոցը կապող զգեստաշերտ»: Բառի սկզբնաղբյուրն է հ-ե *augħa*-ի *augħ* «պարանոց, վզնոց» արմատը, հմմտ. հ. հնդ. *usniha* (*ugh-s-ighā*):

**Օծի(ք)** բառից առաջացել են *օծիքածալ*, *օծիքակալ*, *օծիքակար*, *օծիքաշոր* և *օծիքատակ* բառերը:

Ինչպես տեսնում ենք հնդեվրոպական լեզվից ժառանգած հագուստ անվանող բառերի շարքը համալրվել է լեզվի ներքին օրինաչափություններով կազմված բառերով:

Նորագույն լեզվաբանական գրականության տվյալներով՝ հայերենի և այլ լեզուների միջև կան զուգադիպություններ և ընդհանրություններ, որոնք արդյունք են 1. տարրական ցեղակցության, 2. նոստրատիկ արմատների, 3. լեզվաընտանիքների՝ միմյանցից կատարած փոխառությունների, 4. ստացվածքային կամ ենթաշերտային տարրերի և 5. տարբեր լեզուների՝ միմյանցից կատարած փոխառությունների:

Հայերենի և մի շարք լեզուների բառային ընդհանրությունների հետևանքով առաջացել է *ստացվածքային* կամ *ենթաշերտային* բառապաշար: Լեզվաբանները *ստացվածքային* կամ *ենթաշերտային* են համարում *ուրարտական*, *խուռիտական*, *խեթական*, *միջերկրական* կամ *էգեյան*, *բալկանյան*, անգամ *թրակո-փոուգիական*



փոխառությունները: Այդ ժողովուրդների մեծ մասի պատմական ասպարեզից հեռանալուց հետո նրանց լեզվի բառապաշարի որոշ մասն անցել է հայերենին իբրև ժառանգություն: Ստացվածքային ենթաշերտից, մասնավորապես խալդերենից անցած բառերի քանակի մասին Հր.Աճառյանը գրում է. «Եթե հայոց լեզվից դուրս հանենք բոլոր բնիկ (հ-ե) բառերը,ինչպես նաև ծանոթ լեզուներից փոխառյալ բառերը (պարսկերեն, հունարեն, ասորերեն ևն), մնացյալը կլինի Փոքր Ասիո ոչ հնդեվրոպական լեզուներից, խալդերենից փոխառյալ բառերի հանրագումար» (Աճառյան 1940: 181):

Ըստ Հր.Աճառյանի՝ այդ հանրագումարը բաղկացած է 5572 բառերից, որոնց մեծ մասը պետք է խալդերենից ժառանգություն ստացած լինի:

## **2. Հնագույն և հին փոխառություններ**

Հնդեվրոպական լեզվից ժառանգած հագուստ անվանող բառերի շարքը համալրվել է տարբեր լեզուներից և լեզվաընտանիքներից (իրանական, հունական, ասորական, արաբական, վրացական, թուրքական) կատարված փոխառություններով:

Փոխառությունների հարցում Գ.Ջահուկյանը խիստ կարևորում է տարածական գործոնը և լեզվի շրջանաբաժանումը: Մասնավորապես իրանական փոխառությունները քննելիս նա աշխատում է պարզել, թե հայերենը տարածական առումով իրանական որ բարբառների ու լեզուների հետ է շփվել և լեզվական վիճակի տեսակետից իրանական լեզուների զարգացման ո՛ր շրջանին է վերաբերում (Ջահուկյան 1987: 549):

Ելնելով այս սկզբունքից՝ Գ.Ջահուկյանը հայտնում է այն միտքը, որ հայերենը հնում հիմնականում տեսականորեն շփվել է հյուսիսարևմտյան լեզուների՝ մեդերենի (մարերենի) և պարթևերենի, սրա ուշ վիճակի՝ պահլավերենի հետ(Ջահուկյան 1987: 444, 488-493): Այդ շփումները եղել են հենց սկզբից, այն ժամանակ, երբ իրանական ժողովուրդները հանդես են եկել պատմական ասպարեզ՝ II հազարամյակի սկզբին:

Հայոց լեզվի նախագրային շրջանի հնագույն փուլը համընկել է իրանական լեզուների զարգացման հին, մասամբ միջին շրջանի հետ և շարունակվել է մինչև մ.թ. VII դարը: Նոր պարսկերենի ազդեցությունը հայերենի վրա տևել է մինչև XI դարը: Հայերենի շփումը պարսկերենի հետ երկարատև է եղել (մոտ 16 դար), ունեցել է քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, մշակութային և նախքան քրիստոնեությունը՝ նաև կրոնական բնույթ: Այսպիսի սերտ կապերի պայմաններում հայոց լեզվին են անցել բազմաթիվ իրանական փոխառություններ: Ըստ Հ.Աճառյանի՝ իրանական փոխառությունները

կազմում են 1411 արմատ, որոնցից 966 հին պարսկերեն և պահլավերեն են, իսկ 445՝ նոր պարսկերեն:

Գ.Ջահուկյանը իրականում հիմնական փոխառությունների թիվը դնում է 712, իսկ վերջածանցային և վերջածանցակերպային ձևերի հետ միասին վերցրած՝ 837 կամ 839: «Սակայն իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է, - գրում է Գ.Ջահուկյանը, - կան մեծաքանակ բառեր, որոնց բուն աղբյուրների վերաբերյալ առայժմ հայտնի իրանական տվյալներում վկայություններ չեն պահպանվել: (Ջահուկյան 1987: 505-512)

**Իրանական** ծագում ունեն հետևյալ արմատներն ու բառերը.

**Ապարոշ** : Աճառյանն այն մեկնաբանում է իբրև «գլխին կապելու գարդ»: : Հյուբշմանն այն փոխառյալ է համարում *aparafš* ձևից: Աճառյանն իր կարծիքը չի հայտնում, իսկ Գ.Ջահուկյանը ապ(ա)- նախածանցավոր կազմությունների շարքում քննում է նաև **ապարոշ** բառը (<ԼՊ): Հետագայում (<ԱԲ) նա ճշգրտում է բառի ստուգաբանությունը, այն կազմված է մ.պ. **apar** «վրա, մակա» նախածանցով և **awš** կամ **afš** արմատից:

**Ասրառ** «հագուստի հետևի կողմից դրված շոր,զգեստի ներքնակողմը»: Ծագել է պ. *āstar* «փռել տարածել» ձևից, որի արմատն է *str*: Բառը **āstr** հնչյունակազմով փոխ են առել թուրքերը, քրդերը, իսկ *hastar* ձևով՝ սերբերը (<Հյուբշման, Աճառյան ) :

**Բազպան** «բազուկները պահող մետաղյա զրահ»: Ըստ <ԱԲ-ի՝ «պատարագչի թևնոց»: Բառը մ.պ. և պ. եղել է *bāzupān*, *bāzūbān* «բազպան»՝ կազմված *bāzu* «բազուկ» արմատից և *pānā-* *pān-* *bān* մասնիկով (<Հյուբշման):

**Գդակ** «գլխարկ»: Համեմատելով վրաց. գադիա, քուդի «գլխարկ» և հայ. **գլխարկ** բառերը՝ Աճառյանը երկուսի տարբերությունը համարում է – **ակ** ածանցը և եզրակացնում, որ երկու լեզուներն էլ այդ բառը փոխ են առել խալդերենից: Բառի՝ Ջահուկյանի նոր ստուգաբանությունը միանգամից փոխեց Աճառյանի մեկնաբանությունը: Հայ. գլխարկ բառը փոխ. իրան. **goudak** (իրան. *goud* «ծածկել»), այստեղից վրաց., ճան., մեգ. **kudi**, հայ. գուտի (Գ.Ասատրյան, Իրան- Նամե 1996-97,42 Գ.Ջահուկյան):

**Թակալակ** «սարկավազի կարճ զգեստ, ժամաշապիկ»: Աճառյանը ճանաչում է բառի իրան. ծագումը՝ պ. *tagāla*:

**Լաթ** «շոր,շորի կտոր,պատառ»: Փոխառյալ է պ. **lat**-ից:

**Լաշակ** «շոր, որով կանայք գլուխն ու ծնոտն են ծածկում»: Բառն ավանդված է միջին դարերից, փոխառյալ է պ.-ից՝ **lačak** «քող» ձևով:

**Խոյր** «թագ, պսակ, թագավորի, իշխանավորի, կրոնավորի գլխարկ, փաթթոց»: Ծագել է պ. *xōd* ձևից:

**Կամար** «գոտի»: Բառն ունի իր համագիրը. դրանք տարբեր են թե՛

իրենց ծագմամբ, թե՛ իմաստով. գոտի իմաստով կամար բառը ցեղակից է պ. **kamar**, զենդ. **kamarā** «գոտի» բառերին, իսկ «շենքի կոր ճակատ, կամարակապ շինություն» իմաստով փոխառյալ է հուն. kamara «կամար» ձևից, որը հ-ե ծագում ունի և հ-ե շատ լեզուներում որոշ ձևափոխություններով գործածվում է:

Հետաքրքիրն այն է, որ նշված համանունները Ջուդայի բարբառում տարբերակված են նաև գրությամբ՝ քամար «մեջքի գոտի», կամար՝ «շինարարության կամար»:

**Կոշիկ** (կաւշակ) «կոշիկ, ոտնաման»: Արմատը կա մ.պ. kafšik, նաև kafšak, պ. kafš (Հյուբշման, Աճառյան):

**Հանդերձ** «զգեստ, շոր, լաթ»: Բառի արմատն է դերձ, որն առկա է **դերձակ, դերձան, հանդերձ** բառերում: Աճառյանը դերձ արմատը կապում է մ.պ. «handarz», պ. darzi «դերձակ» ձևերին: Պոկորնին նշված արմատը բխեցնում է հ-ե dherg'h «կարել»: Ջահուկյանը նույնպես իրանական փոխառություն է համարում. հմմտ. մ.պ. handarz (հայ. **հան** > իրան. **han** և հայ. դերձակ < իրան. darzak):

**Մուճակ** «կոշիկ, կանացի չուստիկ» արևմտահայերենում՝ «փապուճ»: Բառի հիմքում ընկած է մ.պ. **mōčak** արմատը, որը գործածվում է իրան. բոլոր լեզուներում, ինչպես նաև կովկասյան լեզուներում (Հյուբ., Աճ.):

**Մոյկ** (մոյկ) «ոտնաման, հողաթափ, կոշիկ»: Արևմտահայերենում նշանակում է «մինչև ծունկը հասնող կոշիկ, ճիզմե»: Այս արմատը կապվում է պիլ. mōk «կոշիկ» արմատին (Աճ.):

**Մուշտակ** «բրդոտ մորթուց կարված ձմեռային վերարկու, մուշտակ»: Փոխ. իրանական աղբյուրից muštak հմմտ. արաբ. < mustaq (Աճ., Ջահ.):

Շապիկ «շաբիկ, շապիք, վերարկու, պատմուճան»: Մ.պ. բառն ունի šapik, պ. šabi «**գիշերազգեստ**» (բուն նշանակությամբ): Ընդգծված բառերի արմատն է šap- šab «գիշեր»:

**Շար** «շղարշ, քող, շորեղեն» (շարեշապիկ): Փոխ. է պ. šār արմատից:

**Չուխա** «բրդյա նուրբ կտորից՝ մահուդից, կարված երկար վերնազգեստ»: Չուխան պ. čuxā բառն է: Արևելքից մինչև Բալկանները տարածված բառ է (Աճ.):

**Պապմուճան** «երկար և լայն թիկնոցանման զգեստ, որ հագնում են կրոնավորները և դատավորները»: Փոխառյալ է մ.պ. **patmōčan** «զգեստ» բառից, որը բաղադրված է զենդ. mōč, սանս. muč «**կոշիկ**» արմատից և **pat, an** մասնիկներով (Հյուբ., Աճ.):

**Պարեգոտ** (պարեգաւտ) «թեթև վերնազգեստ, պատմուճան,

թիկնոց, նաև կապա»: Փոխառյալ է մ.պ. paragaud ձևից: Այնուհետև անցել է հուն. παραγῶγός, լատ. paragauda «ոսկեթել զգեստ», ասոր., արաբ., վրաց. «հանդերձ» նշանակությամբ:

**Պսակ** «թագ, պսակ, գլխին դնելու զարդ»: Բառը փոխ. իրանական աղբյուրից՝ pusāk ,զենդ. pusā (Հյուբ., Աճ., Ջահ.):

**Սաղավարտ** «զինվորական երկաթե կամ պղնձե գլխարկ»: Բառի սկզբնաղբյուրն է պ. **sāravart(i)** «գլխի ծածկոց» բաղադրությամբ՝ կազմված է **sār** «գլուխ», **var** «ծածկել» արմատներից և **ti** մասնիկով: Հայերենում **r-ղ** տարնմանությամբ առաջացել է սաղավարտ բառը (Հյուբ., Աճ.):

**Սամոյր** «անասունի մորթուց կարված ծանրագույն մուշտակ»: Փոխառյալ է մ.պ. samōr, պ. samūr ձևերից: Բառը տարածված է արևելյան և արևմտյան բազմաթիվ լեզուներում (Հյուբ., Աճ.):

**Սնդուս** «մետաքսե կտոր, դիպակ»: Փոխ. իրանական աղբյուրից՝ հմմտ. մ.պ. sundus (Հյուբշման, Աճառյան):

**Վակաս** «եկեղեցական հագուստի մի մասը, քահանայի օձիք» (var «ծածկել» արմատից): **Վակաս-ը** համեմատելով վրաց. vakasi բառի հետ՝ Ջահուկյանը փոխ. աղբյուրը համարում է իրանական:

**Վարշամակ** «թաշկինակ, շոր, գլխանոց, սրբիչ, պատանք»: Բառը ստուգաբանել է Հյուբշ., որին համամիտ է Աճառյանը: Ըստ նրա՝ բառի նախածնն է պիլ. vāršāmak:

**Վարպիք**: «ըստ արևելյան գրական լեզվի՝ «ներքնաշոր, սպիտակեղենի վարտիք», իսկ ըստ արևմտյան գրական լեզվի՝ «տաբատ, դրսի վարտիք»: Հայերենում կա նաև անդրավարտիք հոմանիշ բառը: Թե՛ վարտիքը և թե՛ անդրավարտիքը պ. ծագում ունեն՝ **varti** (var՝ «ծածկել»), **andarvarti** «ներքնավարտիք»:

**Տարազ** «նուրբ գործվածք, միջոց, եղանակ, կերպ, օրինակ»: Փոխառություն իրանական աղբյուրից **tarāz**, հմմտ. պ. **tarāz** աֆղ. tarz (Հյուբշ., Աճ.):

**Փափախ** «մորթե գլխարկ»: Բառը փոխառյալ է պ.-ից թուրքերենի միջնորդությամբ:

**Քուրձ** «մազեղենից պատրաստված շոր»: Այն մ.պ. kurz արմատն է, սակայն չի ավանդված մ.պ. գրականության մեջ, բայց հայտնի է ասոր. **kūrzā**, արաբ. **kurz** լեզուներում: Ըստ Հյուբշմանի՝ ինչպես ասոր., այնպես էլ արաբ. հայերենի նման փոխ են առել իրանականից: Նույնը հաստատում է նաև Ջահուկյանը (ՀՄԲ):

**Հունական փոխառությունները** հետևյալներն են՝

**Աղաբողոն** «կարճ փիլոն»: Փոխ.՝ հուն. αῖναβολη (Հյուբշ., Աճ.):

**Էմիֆորոն** (եմիֆորոն) «եպիսկոպոսական խաչազարդ ուրար»:

Փոխ.՝ հուն. ωμοφορισον բառից (Հյուբշ., Աճ.):

**Նափորթ** (ն) «նափորթ, շուրջառ, կրոնավորի վերարկու»: Փոխ.՝ հուն. **αΰαφορα**՝ բառից: Աճառյանը բառի առաջացումը կապում է սկզբնաձևի հետագա փոփոխություններից մեկի՝ սերբ. **nāporā** ձևին, որը հայ. դարձել է նափորտ : Մինչդեռ Ջահուկյանը բառի ծագումը կապում է նախաձև **αΰαφορα**՝ բառին, որի հնչյունական տարբերակներից մեկը հայ. բառն է՝ նափորտ (ՀՄԲ.):

**Սանդալ** «մի տեսակ կոշիկ»: Փոխ.՝ հուն. կամ թերևս իրան. sandal բառից: ՀԱԲ-ում բառի աղբյուրն Աճառյանը համարում է հուն. կամ իրան.: Ջահուկյանը հայ. բառի աղբյուրը համարում է հուն., որից անցել է պ.-ին:

**Սքեմ** «կրոնավորի զգեստ»: Փոխ.՝ հուն. **οχημα** արմատից: Աճառյանը հակված է կարծելու, որ հուն. ձևը նույնպես ասիական ծագում ունի: (Հյուբշ., Աճ.):

**Կնգուղ, վեղար, ուրար** արմատները թեև հուն. են, սակայն նրանց անմիջական աղբյուրը լատ. է:

**Կնգուղ** «կրոնավորի սրածայր գլխարկ»: Փոխ.՝ հուն. χοοκουκλιον: Բառի սկզբնաձևն է լատ. **cucullus** «գլխարկ»: Հայ. տառադարձվել է կուկուլ, ապա **ն-ի** հավելվամբ՝ **կնկուղ, կնգուղ** : Այսօր էլ բարբառներում բառն ունի **կնկուլ, կուկուլ** տարբերակները (Աճ.):

**Վեղար** «կնգուղ, կրոնավորի գլխանոց»: Հայ. փոխ. բյուզ. հուն. բառից, որի սկզբնաձև է լատ. velarium (Աճ.):

**Ուրար** «գոտի, լաշակ, կայսերական զարդ»: Այն առաջացել է հուն. ὠράριον «կնգուղ», լաշակ, ուրար՝ բառից, որի նախաձևն է լատ. **orarium** (Հյուբշ., Աճ.):

**Փիլոն** « կրկնոց, թիկնոց, անթև վերարկու»: Հյուբշմանը բառը կապում է հուն. **φελόνης** ձևին, որից փոխ են առել լատ. paenula, ռուս. **фелонь**, վրաց **փելունի** (Հյուբշ., Աճ.):

**Քղամիդ** «իշխանական թիկնոց»: Ըստ Աճառյանի՝ փոխ.՝ հուն. **χλαμός**, (Աճ.):

Ինչպես տեսնում ենք, հունական փոխառությունները հիմնականում կրոնավորներին վերաբերող հագուստների անվանումներ են:

#### **Ասորական փոխառություններ**

**Գուլպա**՝ փոխ.՝ ասոր. gurbā բառից, որից փոխառյալ է պ. **gūrāb** կամ **gūrāb** «գուլպա» բառից: Փոխառյալ բառը հայ տարբեր հուշարձաններում արձանագրված է գուրպա կամ գուլպա ձևերով: Վերջին ձևը անցել է աշխարհաբար գրական լեզու, իսկ մի շարք բարբառներում շարունակվում է գործածվել գուրպա կամ գուրբա (Լոռի, Արցախ, Ջուղա) (Աճ.):

**Խանձարուր** «մանկական բարուր,փաթաթաշոր, փաթաթան»:  
Փոխ.՝ ասոր. *āʾzrurā* (<յուբշ., Աճ.):

**Խորգ՝** «քուրձ, քրձե հագուստ»:  
Փոխ.՝ ասոր. *xurgā* մ.այ. xvary (>հայ) (<յուբշ., Աճ.):

**Խ(հ)լա** «նվիրատրված թանկագին զգեստ»:  
Փոխ.՝ ասոր. *xila* (հմմտ. արաբ. *xelat* )(Աճ.):

#### **Արաբական փոխառություններ**

**Կապա** «մի տեսակ զգեստ»:  
<այերենին է անցել արաբ. *gabā* բառից (Աճ.):

**Թաս(ակ)** «թաս,գանգ»:  
Բառի արմատն է թաս, փոխ. արաբ. *tass* (a)< պ. *tašt*՝ ակ ածանցով՝ թասակ (նոր) «ձևով առանց շքոցիկի գլխարկ, որ ծածկում է գլխի վերևի մասը միայն» (Աճ.):

**Մանդիլ** «գլխաշոր, վարշամակ»:  
Փոխ.՝ հուն. *μανηλα* «թաշկինակ», որ փոխառություն է լատիներեն *mantile* «անձեռոցիկ» բառից:

**Տրեզ** «հագուստի վրա կամ եզրերին բանվածք, ժապավեն»:  
Էդ.Աղայանը բառի լիակատար բացատրությունը տալիս է հետևյալ կերպ. «Չգեստի վրա կամ եզրերին իբրև զարդ կամ ամբողջության համար կարվող կեղծ ոսկեթելի,արծաթաթելի ևն երիզ կամ խիտ գործված նեղ ժապավեն՝տարբեր գույների» (ԱՀԲԲ):  
Բառն արաբ. ծագում ունի *tirāz*: Աճառյանը սկզբում ընդունում է բառի պ. ծագումը, հետագայում փոխում է կարծիքը և բառը դնում է արաբ. փոխ. մեջ (<յուբ.,Աճ.):

#### **Թուրքական փոխառություններ**

**Կապակ** «կարճ վերարկու»:  
Փոխ.՝ թթր. *kepek* (<կազմված պ.,արաբ. *gabā* ձևից), որից էլ հայ. կապա (Աճ.):

**Ճոթ** «հագուստ, կտոր, ծայր, շորի եզերք»:  
Փոխ.՝ թթր. *jit* ձևից (Աճ.):

**Փարածիկ** «շրջազգեստ թուրք կանանց»:  
Փոխ.՝ թթր. *feraje* ձևից, որը Կովկասում հնչվում է փարաջա՝ լայն թևքերով կրոնավորի վերարկու (Աճ.):

**Վրացական փոխառություն է գդակ** «գլխարկ» բառը:  
<Աճառյանը, համեմատելով վրաց գուդիա, քուդի 'գլխարկ' և հայ. գլխարկ արմատները, երկուսի տարբերությունը համարում է ակ ածանցը և հավանական է համարում այն, որ երկու լեզուներն էլ այդ բառը փոխ են առել խաղերենից: Խաղերենի հետ է առնչվում նաև **ծիրանի** բառը, որը նշանակում է «ծիրանագույն ընտիր հագուստ, թանկագին զգեստ»:  
Ըստ <Աճառյանի՝ թեև ծիրան բառի գործածությունը նոր է, սակայն ամենահին ժամանակներից էլ այն կար, որովհետև հայերենում պահպանված են նրանով կազմված մի շարք բաղադրություններ, ինչպես՝ ծիրանակիր, ծիրանավոր, ծիրանավառ, եզրածիրան ևն: Եթե ծիրանը

հայկական խնձոր կամ սալոր է կոչվել օտարների կողմից և բուն հայկական իրողություն է, նշանակում է՝ ծիրան (h) արմատն էլ փոխառություն է խալդերենից: Այս արմատը կա նաև վրացերենում ճերամ հնչյունակազմով, որը համընկնում է Ալաշկերտի, Մուշի խոսվածքներում գործածվող **ծիրան** արմատին:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք հազուստ նշանակող 19 բնիկ հայերեն բառեր, ութ իրանական, տասը հունական, չորս ասորական, չորս արաբական, երեք թուրքական, մեկ վրացական հնագույն և հին փոխառյալ բառեր: Հազուստ անվանող բառերի մեջ կան բազմաթիվ չստուգաբանված բառեր, որոնք մտնում են լեզվի ստացվածքային բառաշերտի մեջ:

Գիտական միտքը շարունակ փոփոխվում է, զարգանում, վերանայվում են նախորդ լեզվաբանների կատարած ստուգաբանությունները, ճշգրտվում կասկածելի մեկնաբանությունները, բացահայտվում են չստուգաբանված արմատների ծագումնաբանությունները ևն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Եր., 1971-1979:
3. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս 1-2, Եր., 1940-1951:
4. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:
5. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010:

### REFERENCES

1. Aghayan E'd., Ardi hayereni bacatrakan bar'aran, Er., 1976:
2. Atwar'yan Hr., Hayeren armatakan bar'aran, h. 1-4, Er., 1971-1979:
3. Atwar'yan Hr., Hayoc lezvi patmowt'yown, mas 1-2, Er., 1940-1951:

4. Jahowkyan G., Hayoc lezvi patmowt'yown, nahagrayin jhamanakashrjan, Er., 1987:
5. Jahowkyan G., Hayeren stowgabanakan bar'aran, Er., 2010:

**РЕБЕКА МАРГАРЯН - ЭТИМОЛОГИЧЕСКИЕ И ИСТОРИЧЕСКИЕ СЛОИ СЛОВ НАЗЫВАЮЩИХ ОДЕЖДУ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

*Ключевые слова* - словарный запас, индоевропейский язык, исконно армянские слова, заимствованные слова, генеалогия, этимология, одежда, унаследованные слова.

Армянский язык имеет богатый словарный запас. Часть этого словарного запаса составляют слова, называющие одежду, которые по происхождению делятся на три группы: исконно армянские (индоевропейские), полученные или унаследованные и заимствованные.

**REBEKA MARGARYAN - GENEALOGICAL AND HISTORICAL LAYERS OF CLOTHES VOCABULARY IN MODERN ARMENIAN**

*Keywords:* vocabulary, Proto-Indo-European Language, native Armenian words, borrowings, genealogy, etymology, clothing, received words.

The Armenian language has a rich vocabulary. A part of this vocabulary is the clothes vocabulary. The words included in this layer of the Armenian vocabulary, according to their origin, are divided into three groups: native Armenian words (Indo-European), received or inherited words and borrowings.

Ներկայացվել է՝ 24.06.2019

Գրախոսվել է՝ 24.06.2019



О СИНОНИМИИ И МНОГОЗНАЧНОСТИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ  
СОЧЕТАНИЙ В СОВРЕМЕННОМ РУССКОМ ЯЗЫКЕ

СИЛЬВА МАРТИРОСЯН

**Ключевые слова:** фразеологическая синонимия, многозначность, грамматическая однородность, закономерность, словосочетания.

Стилистическое разнообразие и выразительная сила русского языка во многом обязана его идиоматической ценности. Богатое и сложное прошлое русского языка, новая стадия его развития составляют национальную специфику. Границы живых фразеологизмов русского языка чрезвычайно широки, а возможности пополнения их запаса безграничны.

Изучение фразеологических явлений может внести существенные коррективы в наши представления и о языке как системе, и о механизме речевой деятельности.

Формирование значения фразеологической единицы связано с решением того, в каких условиях она возникает (фразеобразующий контекст), на какие языковые структуры опирается (понятие производящей основы) и какие семантические механизмы (расположение, деривация, транспозиция, интеграция) движут фразеологической номинацией. Нельзя определить единицу фразеологии, опираясь на какое-либо одно её свойство. Только совокупность всех существенных признаков может дать точное и полное представление о единице фразеологии: воспроизводимость, устойчивость, нечленимость, номинативность, образность, экспрессивность, отдельнооформленность (1).

Явление синонимии во фразеологии составляет одну из основ семантических отношений в кругу фразеологизмов. Широко представленные в современном русском языке отношения синонимии и семантической сближенности фразеологизмов носят глубоко системный и типологический характер. Вместе с вариантностью, которая выступает постоянным спутником лексико - фразеологической синонимии, указанные отношения и связи образуют единое пространство, служащее источником пополнения и обогащения эмоционально - выразительных ресурсов языка.

Определение фразеологических синонимов несколько сложнее, чем лексических. Объясняется это многогранностью самого явления синонимии и сложностью природы фразеологических единиц. С одной стороны, сематическое содержание фразеологизмов сближает характер их синонимизации с синонимизацией слов, с другой – благодаря своей грамматической форме фразеологические единицы сохраняют особенности синтаксической синонимии. Всё это находится в неразрывном единстве, выступает как свойство фразеологических синонимов, их специфическая черта.

Поскольку целью данной работы является описание синонимических отношений фразеологизмов в современном русском языке, обратимся к объективным показателям обогащения фразеологического состава:

- а) количественное увеличение числа фразеологических единиц, в том числе на основе структурной синонимии;
- б) совершенствование состава фразеологических единиц;
- в) изменение значения фразеологической единицы;
- г) развитие многозначности.

Почему же возникают фразеологические единицы одного понятийного содержания и одной функционально – стилистической принадлежности? Это можно объяснить действием двух противоположных тенденций, которые являются причиной расширения фразеологического состава языка на основе структурной синонимии: 1) забвение или стирание образной мотивированности, послужившей основой семантического преобразования словосочетания; 2) стремление обновить фразеологизм, повысить его экспрессивность, эмоциональное воздействие, следствием чего и является образование синонимических фразеологических единиц (2).

При выделении лексических синонимов мы группируем их по тем грамматическим категориям, к которым относятся синонимичные слова, следовательно, слова – синонимы должны относиться к одной и той же части речи (3). Для фразеологических синонимов грамматическая однородность не обязательна. Например: **видал виды, стреляный воробей, тёртый калач, прошел сквозь огонь и воду** с общим значением 'опытный, бывалый человек'; **засучив рукава, в поте лица, не покладая рук** с общим значением 'усердно', но с различным смысловым оттенком (**засучив рукава** – интенсивно работать; **в поте лица** – работать с большим напряжением, отдавая все силы; **не покладая рук** – работать без усталости, прилежно) или с принадлежностью к разным

стилям речи и с различной экспрессивной окраской (например: **вводить в заблуждение** – **водить за нос** с общим значением ‘обманывать’; **след простыл** – **поминай как звали** – **и был таков** – **только и видели** с общим значением ‘пропал, куда – то исчез, скрылся’). Как видим на примерах фразеологических единиц, семантические и стилистические синонимы выполняют разную роль. Одни утрачивают свои способности, не нарушая адекватности значения, а другие не теряют релевантности и вносят в значение целого стилистическую (в широком понимании) оценку, которой обладают в свободном употреблении. Например: фразеологизмы со значением ‘умереть’: **уснуть вечным сном** (книжный) – **дать дуба** (разговорный) – **склеить ласты** – **сыграть в ящик** (просторечный); ‘побить’ : **намять бока, спустить шкуру, всыпать по первое число**. Близость значений подобных фразеологизмов позволяет их причислить к одному синонимическому ряду.

По структуре фразеологических синонимов на основе принадлежности к разным структурным типам (словоформам, словосочетаниям, предложениям) и наличию или отсутствию вариантных форм выделяются:

1) одноструктурные синонимы (например: **на один покров, на одно лицо** – лишены индивидуальности). Такие синонимы могут включать в свой состав вариантный компонент: **стричь (остричь, подстричь, облованивать; <всех> под одну гребёнку, подгонять <всех> под один колер;**

2) разноструктурные (похожими друг на друга по своим качествам и значениям), которые образованы по разным моделям, но выражающие общее понятие. Например: **как две капли воды, <на> одно лицо; на два фронта, гоняться за двумя зайцами; в один голос, все как один (4); из одного теста, два сапога пара, одного поля ягодка, под одну масть, одного полёта птица, одним лыком сшиты, одного дуба желуди, одним миром мазаны, одного порядка** и т.п. (5). А в таких фразеологизмах как **сидеть между двумя стульями (двух стульев)** и **слуга двух господ (служить двум господам)** опорный компонент выражается одной и той же частью речи, а остальные расположенными в разной последовательности.

Среди пословиц и поговорок также выделяются синонимы, которые могут объединяться в группу на основании синонимических отношений между ними. Например: **два кота в одном мешке не улежатся, две кошки в мешке дружбы не заведут, два медведя в одной берлоге не улягутся, двум шпагам в одних ножнах не ужиться;**

**двум смертям не бывать, а одной не миновать, семь бед – один ответ;**

Богатая фразеологическая синонимия позволяет из множества сходных фразеологизмов выбрать наиболее точное. В художественной и публицистической речи возможно употребление лексических и фразеологических синонимов одновременно: **Она меня очаровала, свела с ума** (возрастание по интенсивности). Иногда употребление фразеологических синонимов, которые могут сочетаться с лексическими, создаёт градацию (от меньшего к большему и наоборот): сломать, разбить в дребезги, стереть с лица земли.

В художественной литературе авторы часто соединяют в одно целое несколько синонимов – фразеологизмов (прием параллельного использования), что позволяет при сохранении содержания повысить выразительность речи: **Вы хотите посвятить себя сцене – это хорошо, но стоит тут овчинка выделки и игра свеч, хватит ли у вас сил?**

Способность фразеологизмов вступать в синонимические отношения с другими фразеологизмами связана с многозначностью.

Изучая приёмы использования традиционных средств выражения, очень часто, с целью сделать речь более яркой, точной и выразительной, употребляют фразеологические синонимы в новых значениях, вследствие чего фразеологическая единица, наряду с общеупотребительными, закреплёнными значениями приобретает ещё целый ряд новых значений (6). Например: сочетание **сойти с ума** имеет значения:

1) лишиться рассудка, стать психически ненормальным. Например: **Васин сошёл с ума! Пусть назначат медицинское обследование его умственных способностей** (С.Н. Сергеев – Ценский);

2) сильно беспокоиться, тревожиться. Например: **Когда я не вижу тебя, схожу с ума от тревоги** (А.Н. Толстой);

3) очень интересоваться, увлекаться чем – либо или кем – либо. Например: **Женщины от него с ума сходили, мужчины называли его фатом и тайне завидовали ему** (И.С. Тургенев);

4) делать глупости, поступать неразумно. Например: **Что ты, опомнись, с ума сошла, в актрисы!** (А.Н. Островский);

5) восклицания, выражающие удивление, восхищение. Например: - **Дочь выходит замуж. – С ума сойти! А она мне ещё кажется ребёнком.**

Разные значения фразеологизма **язык проглотить** также дают возможность употреблять его в синонимических рядах. Так в значении 'есть что-то вкусное' синонимом будет оборот **пальчики облизать**. А в

случае, когда говорят о человеке, который не хочет рассказать о чём – либо (молчит), употребляют несколько синонимических оборотов: **язык проглотил - в рот воды набрал - нем как рыба** и др.

Многозначность обычно возникает в результате совпадения компонентов у фразеологизмов, имеющих частичное мотивационное значение, при котором происходит закрепление в языке их переносное значение. Например, такие фразеологизмы, как **показать нос, ставить точку над «и», брать своё** и др.

Поскольку многозначные фразеологизмы входят в состав нескольких синонимичных рядов, то близкая или тождественная лексико – семантическая сочетаемость является дифференциальным признаком синонимичности фразеологизмов.

Многозначность присуща не всем видам фразеологических единиц. Фразеологические единицы терминологического характера, подобно словам – терминам, однозначны. Семантическая природа термина, его функция в языке препятствует этому, так как значение термина служит точным обозначением определённого предмета, явления, процесса. Например: **удельный вес, магнитный полюс** не являются фразеологическими единицами, поскольку не обладают экспрессией, образным переносным значением. Не употребляются в других значениях и такие более сложные единицы, как пословицы, афоризмы, так как им не свойственны номинативность и нечленимость (7). Хотя у некоторых авторов присутствует оригинальный приём использования народных пословиц. Текст пословицы как таковой отсутствует, но скрытое наличие её явно ощущается, так как сохраняет её смысл, переданный другими словами. Например, пословица **волос долог, да ум короток** в рассказе А.П. Чехова “И прекрасное должно иметь пределы” звучит следующим образом: **Лучшим украшением человеческой головы служат волосы. Но кто не знает, что эти волосы, будучи длинны (не говоря о женщинах), служат признаком по коему узнаются умы легкомысленные и вредоносные.** Намёк на пословицу содержится здесь в авторском замечании **но кто не знает** и вставном предложении **не говоря о женщинах**.

Развитию многозначности препятствует то, что фразеологизмы часто образуются вследствие метафорического переосмысления свободных сочетаний такого же состава. В результате повторной метафоризации одного и того же свободного словосочетания появляются такие многозначные фразеологизмы, которые обладают только

метафорическими значениями. Например, фразеологизм **вилять хвостом** означает:

1. хитрить, лукавить: **Ты, брат, извини, я мужик таёжный, прямой, вилять хвостом не умею.** (Ю.М. Шестаков);
2. колебаться в выборе решения, уклоняться от прямого ответа: **Говори! Не виляй хвостом...**(М.Е. Салтыков-Щедрин);
3. (перед кем?) лестью, угодничеством добиваться чьего-либо расположения: **Из-за своих личных, можно сказать, семейных расчётов вилять хвостом перед заводовладельцем...**(Д.Н. Мамин-Сибиряк).

Отношения многозначности и синонимии во фразеологии не так сложны, как в лексике, потому что многозначных фразеологизмов значительно меньше. Тем не менее учёт этих отношений необходим при определении фразеологических синонимов, в противном случае границы синонимического ряда будут неустойчивыми и неясными.

Таким образом, явление лексико-фразеологической синонимии, семантической сближенности, вариантности занимают особое место во всем многообразии синонимических отношений. Между этими явлениями существует и определенные точки соприкосновения. Грани, разделяющие подобные явления в сфере синонимии, оказываются очень зыбкими. Каждое из явлений находит своё отражение в лексикографических источниках. Предельная близость значения, обусловленная исторически, связи парадигматического характера, а также внешняя, формальная, звуковая близость фразеологизма и слова, обусловленная наличием однокоренных единиц – все это приводит к глубоким, тонким и детализированным отклонениям, поможет уточнить и в более правильном свете представить смысловую структуру каждого отдельного фразеологизма. Умелое использование фразеологизмов в разных значениях и зачастую расширение рядов фразеологизмов, широкое привлечение синонимичных фразеологических выражений, создание синонимичных вариантов общеупотребительных формул будут способствовать обогащению, обновлению, развитию фразеологического фонда современного русского языка.

#### СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Диброва Е.И. Вариантность фразеологических единиц в современном русском языке. – Ростов: Ростовский университет, 1979. – С. 26.

2. Архангельский В.Л., Бабкин А.М. и др. Проблемы фразеологии и задачи её изучения в высшей и средней школе. – Северо – Западное книжное из - во, 1967. – С. 41.
3. [https://studopedia.ru/10\\_254299\\_sinonimiya-frazeologizmov-stilist:cheskoe-ispolzvanie-frazeologicheskikh-oborotov.html](https://studopedia.ru/10_254299_sinonimiya-frazeologizmov-stilist:cheskoe-ispolzvanie-frazeologicheskikh-oborotov.html).
4. scicenter. online/russkiy-yazyk-scicenter/ 129 – mnogoznachnost – sinonimichnost – krugu - 67532
5. Алефриенко Н.Ф. Фразеологический словарь: Культурно – познавательное пространство русской идиоматики. – М.: ООО Из – во ЭЛПИС, 2008.
6. Шанский Н.М. Фразеология современного русского языка. Специальная литература. 1996. – С. 192. – ISBN 5-7571-0038-9 (измен. 25. 01. 2014 г.)
7. [https://znanio.ru/media/russkij\\_frazeologirm\\_fakultivnyi\\_kurs\\_po\\_russkomu\\_yazyku\\_-22275/27310](https://znanio.ru/media/russkij_frazeologirm_fakultivnyi_kurs_po_russkomu_yazyku_-22275/27310)

#### REFERENCES

1. Dibrova E.I. Variantnost' frazeologicheskikh edinic v sovremennom russkom jazyke. – Rostov: Rostovskij universitet, 1979. – S. 26.
2. Arhangel'skij V.L., Babkin A.M. i dr. Problemy frazeologii i zadachi ejo izuchenija v vysshej i srednej shkole. – Severo – Zapadnoe knizhnoe iz - vo, 1967. – S. 41.
3. [https://studopedia.ru/10\\_254299\\_sinonimiya-frazeologizmov-stilist:cheskoe-ispolzvanie-frazeologicheskikh-oborotov.html](https://studopedia.ru/10_254299_sinonimiya-frazeologizmov-stilist:cheskoe-ispolzvanie-frazeologicheskikh-oborotov.html).
4. scicenter. online/russkiy-yazyk-scicenter/ 129 – mnogoznachnost – sinonimichnost-krugu - 67532
5. Alefrienko N.F. Frazeologicheskij slovar': Kul'turno – poznavatel'noe prostranstvo russkoj idiomatiki. – М.: ООО Из – во JeLPIS, 2008.
6. Shanskij N.M. Frazeologija sovremennogo russkogo jazyka. Special'naja literatura. 1996. – S. 192. – ISBN 5-7571-0038-9 (izmen. 25. 01. 2014 g.)
7. [https://znanio.ru/media/russkij\\_frazeologirm\\_fakultivnyi\\_kurs\\_po\\_russkomu\\_yazyku\\_-22275/27310](https://znanio.ru/media/russkij_frazeologirm_fakultivnyi_kurs_po_russkomu_yazyku_-22275/27310)

**ՄԻԼՎԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌՈՒՍԱՑ ԼԵՁՎԻ ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ**

*Հիմնաբառեր՝ դարձվածային հոմանիշություն, բազմիմաստություն, քերականական միասեռություն, օրինաչափություն, բառակապակցություններ*

Հոդվածում դիտարկվում է ժամանակակից ռուսաց լեզվում միևնույն իմաստն ունեցող, միևնույն գործառական ոճին պատկանող հոմանիշ դարձվածային միավորները և բազմիմաստությունը: Վերլուծվում են հոմանիշ և բազմիմաստ դարձվածքների առաջացման պատճառները, կառուցվածքը և կազմությունը, դրանց կիրառման նպատակը:

Հոդվածագիրը փաստում է, որ բազմիմաստությունը հատուկ է դարձվածային միավորների բոլոր տեսակներին, և իրենց տարբեր իմաստներով դարձվածքները կարող են գործածվել տարբեր խոսույթներում:

Հոդվածում ներկայացվում է նաև, որ ռուսերենում բազմաթիվ են հոմանիշ դարձվածքները, որոնց շարքում առանձնակի տեղ են գրավում ասացվածքները:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ դարձվածքների հոմանիշային շարքեր կազմելու հատկանիշը կապված է բազմիմաստության հետ:

**SILVA MARTIROSYAN - SYNONYMOUS AND POLYSEMANTIC PHRASEOLOGICAL UNITS IN MODERN RUSSIAN**

*Keywords: phraseological synonymy, polysemy, grammatical unity, regularity, word expressions*

In the article the synonymic phraseological units of one conceptual content, one functional and stylistic belonging, and their polisemy of the modern Russian language are considered. The causes of occurrence, the structural-semantic composition of synonymous and polysemic idioms and the purpose of their application are analyzed.

The writer states that polysemy is peculiar to all types of phraseological units and they can be used in different discourses with their different meanings.

The article also says that in Russian there are many synonymous phraseological units, among which the proverbs have a special place.

The writer concludes that the peculiarity of phraseological units is linked to their polysemy.

Ներկայացվել է՝ 02.04.2019  
Գրախոսվել է՝ 02.04.2019



«ՀԱԳՈՒՍՏԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔ Է»  
ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՓՈԽԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅԱՑՈՒՄՆ  
ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

ՌՈՒՋԱՆ ՄՈՒՍԵՅԱՆ

*Հիմնաբառեր՝ ճանաչողական փոխաբերություն, ինքնություն, լեզվամշակույթ, հասարակական դիրք*

1970-ական թվականների վերջին և 1980-ական թվականների սկզբին ճանաչողական լեզվաբանության հիմնադիրներ Ջ. Լակոֆֆի, Ռ. Վ. Լանգակերի և Լ. Թալիի աշխատանքներում լեզվական կառույցները սկսեցին ուսումնասիրվել լեզվի և գիտակցության փոխհարաբերության, կարգայնացման սկզբունքների, ճանաչողական գործընթացների և մարդկային փորձի ընդհանրացման լույսի ներքո:

Փոխաբերությունը, որը մինչ այդ հիմնականում դիտվում էր որպես «լոկ լեզվական երևույթ, որը ավելի շուտ կապված է բառերի, քան մտածողության և գործունեության հետ» (Davidson 1978), ինչպես նաև որպես բանաստեղծական երևակայության արտահայտչամիջոց, ըստ Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի՝ ընգրկում, հզոր և բազմագործառույթ գործիք է, որ ներթափանցում է մեր առօրյա կյանք՝ ոչ միայն լեզվի, այլև մտածողության և գործունեության մեջ, քանզի «մարդու ճանաչողական համակարգը իր բնույթով փոխաբերական է» (Лакотф, Джонсон 2008:25):

Փոխաբերականությունը հիմնված է երկու իմացական կառույցների՝ «ակունք և թիրախ ոլորտների» վրա: «Փոխաբերական արտապատկերման» (metaphorical mapping) կամ «ճանաչողական արտապատկերման» (cognitive mapping) միջոցով «թիրախ-ոլորտը ընկալվում է ակունք-ոլորտի միջոցով» (Лакотф, Джонсон 2008:9):

Փոխաբերությունը կապում է անհայտը հայտնիին և այս առումով, այն կարող է օգնել նաև արհեստական ինտելեկտի մոդելավորման գործում: (Shibles 2011) Երևույթների միջև իր ստեղծած զուգորդումների շնորհիվ՝ փոխաբերությունը կարևոր դեր ունի աշխարհի լեզվական պատկերի ձևավորման գործընթացում (Виноградов 1996:24):

Հագուստը՝ որպես հաղորդակցության արդյունավետ միջոց, օգնում է մարդուն հաստատել իր և բացահայտել այլոց ինքնությունը:

Տեխնոլոգիաների զարգացումը, տվյալ հասարակությանը բնորոշ բարոյահոգեբանական և գեղագիտական ընկալումները, ժամանակի

ընթացքում տեղի ունեցող տնտեսական, ժողովրդագրական և այլ հասարակական փոփոխությունները մեծապես ազդում են հազուատի ձևի, հատկանիշների և նրանով արտահայտված ինքնության վրա: Այնուամենայնիվ, բոլոր ժամանակներում հազուատն արտացոլել է շրջապատի, տիեզերքի, աշխարհի մասին մարդու պատկերացումներն ու ընկալումները:

Հազուատը ոչ միայն ծածկում է մարդու մարմնի մերկությունը, նրան պաշտպանում ցրտից ու շոգից, պահպանում անհրաժեշտ հիգիենան, ծառայում որպես վայելչանքի միջոց, այլ նաև արտահայտում է մարդու մշակութային/ազգային, ցեղային, դասային, կրոնական և սեռային պատկանելությունը, հասարակական դիրքը, բնավորության գիծը, խառնվածքը և այլն:

Հետևաբար, հետևելով Ջ. Լակոֆֆի ճանաչողական փոխաբերության տեսությանը, կարելի է փոխաբերաբար ասել **«հազուատը ինքնություն է»**: «Հազուատը ինքնություն է» ընդհանուր փոխաբերության համար կարելի է առանձնացնել մի շարք ենթատեսակներ **«Հազուատը մշակութային /ազգային ինքնություն է»**, **«Հազուատը հասարակական դիրք է»**, **«Հազուատը բարեկեցություն է»**, **«Հազուատը բնավորություն է»** և այլն:

Սույն հոդվածում կներկայացնենք **«Հազուատը հասարակական դիրք է»** ճանաչողական փոխաբերությունը՝ որպես լեզվանյութ ընտրելով հայերենի և անգլերենի «հազուատ» բաղադրիչով դարձվածային միավորները, և ավելին, հազուատի տարբեր պարագաներով, ինչպես նաև դրանց գույներով արտահայտված դարձվածային միավորները:

Ի դեպ, հազուատի տարբեր պարագաներն ուսումնասիրության առարկա երկու լեզվամշակույթներում տարբեր կերպ են արտացոլում մարդու սոցիալական դիրքը, վերադասությունը կամ ստորադասությունը:

Հայերենում **«Հազուատը հասարակական դիրք է»** փոխաբերության ցուցիչ են **թաշկինակ, գրպան, լաչակ, փեշ, շապիկ, վարպիք** հազուատի պարագաներով կազմված ԴՄ-ները:

Հայերենում ստորադասության ցուցիչ են հետևյալ ԴՄ-ները՝

**ձեռքի թաշկինակ լինել**- լիովին սպորտադաս լինել մեկին, կախված լինել մեկից,

Ապա քահանան սկսեց պարծենալ, թե բոլոր գավառի հայերն յուր անունից դողում են, թե ինքր գավառի առաջին մարդն է և թե յուր հոգևոր իշխանությունից անգամ մազաչափ երկյուղ չունի, ըստ որում առաջնորդն իր **ձեռքի թաշկինակն է**, ում յուր գրպանումն ունի, կպահի թե կշարպի, յուր հաճույքին է մնացել: (Պ. Պոռոջան 1892)

**վարտիք կապել չգիտենալ** – անփորձ, խամ, անհմուտ, խիստ անշնորհք լինել:

*Ջորջի Տենլին գեղեցիկ ու ժպտուն հայացք ուներ... սակայն **վարտիք կապել էլ չգիտեր**: (Քես Գարեգին 1954)*

Ընտանիքում ստորադասությունը կարող է արտահայտվել **կնոջ լաջակի/ փեշի տակ լինել /քնել** ԴՄ-ով, որը մատնանշում է կնոջ վերադասությունը, և ուստի ամուսնու ստորադասությունը:

Ողջ կյանքում իրենց հանձնած ստրկության քաղցր թմբիրին՝ ծաղիկների հոտով արբած մեղունների անմեղությամբ, նրանք խաղաղ ու հանգիստ նստում էին իրենց **կանանց փեշերի տակ**, հյուր էին գնում, եկեղեցի հաճախում, և ոչ մի վախ քան չէր պատահում նրանց, լուռումունջ ամեն մեղադրանք փանում էին, հիմարների նման կանոնավոր վճարում էին օրավուր աճող անհնարին տուրքերը, խոնարհաբար գլուխ էին տալիս, երբ իրենց հանձնում էին զինվորական ծանուցագրերը, հեղու խնդրում-աղաչում խոնարհվելով, առձեռն մեծ գումարներ փալով որպես կաշառք, կեղծ անձնագրեր ձեռք բերելով և՛ հար ու նման բաներ, ասես ժառանգական մեղապարտներ լինեին: (Սևդա Սևան 2003)

Վերադասությունը հայերենում հիմնականում արտահայտվում է ավելի շատ փորձառություն, հմտություններ, խելք ունենալու պարագայով, օրինակ՝ **ծալել գրպանը դնել մեկին** ԴՄ-ը խորհրդանշում է *մեկի հանդեպ ինչ-որ հարցում առավելություն ունենալը*, իսկ **մի քանի շապիկ ավելի կտրել/հագնել/մաշել** ԴՄ-ը՝ շատ մեծ, փորձառու, տարիքով լինելը:

Դիրեկտորն էլ, փառք աստծո, կույր չի, տեսնում է, որ այս ինստիտուտի ամենապարտաճանաչ աշխատողը Գուլոյանն է: Իր բարեխղճությամբ, ճշտապահությամբ, աշխատասիրությամբ ու եռանդով հազար քահել **կծալի, գրպանը կդնի...**

— Հապա Լուկաշը ինչո՞ւ է ուզում, որ նա թոշակի գնա: (Վ. Բալայան 1986)

**Հազար շապիկ մաշած սարեր,**

Իրար ծոցում

Իրար կարոտ քաշած սարեր,

Քարոտ սարեր, խավոտ սարեր,

Սարեր, ձեզ ի՞նչ ասեմ: (Հ. Սահյան 1969)

Անգլերենում **«հագուստը հասարակական դիրք է»** փոխաբերությունը կարող է առկայանալ **collar** բաղադրիչով կազմված ԴՄ-ների միջոցով, այն է՝

**a white-collar / a white-collar worker**, նույնն է՝ **a blackcoat / a black-coated worker** - մասնագիտական և գրասենյակային (մտավոր) աշխատանք կատարող անձ,

**a blue-collar / a blue-collar worker** - ֆիզիկական աշխատանք կատարող անձ,

**a pink-collar/ a pink-collar worker** - ցածր վճարվող աշխատանք կատարող անձ՝ հատկապես կին:

*Dave Ashton and David Field in their book Young Workers (1976) constructed a model by which school careers and labour market destinations were all related to the occupation of the young person's father. Those from an unskilled manual working class background left with few or no qualifications and emerged into manual jobs with a 'careerless' orientation. Those from white collar and skilled manual backgrounds benefited rather more from education and emerged to do clerical and apprenticeship training with a short term career orientation. (G. Burgess 1989)*

*The overwhelming majority of Shetlanders employed at the airport are unskilled, semi-skilled 'blue collar' workers. While the airport is the economic hub of the area, agriculture is still an important part of the local economy. (Way of life 2000)*

*Until recently secretarial work and nursing were very much pink-collar professions. (Cambridge Dictionary 2013)*

Ցածր հասարակական դիրքի ցուցիչ է նաև **a hard hat**–բանվոր, պաշտպանող գլխարկ կրող շինարարական աշխատանք կատարող մարդ.ԴՄ-ը:

*Come here, you, hard hat, have you done all I tol... (Cambridge Dictionary 2013)*

«Հագուստը հասարակական դիրք է» փոխաբերության ցուցիչ է նաև հագուստի **purple** – մանուշակագույն գույնը, քանզի բրիտանական մշակույթում էլիզաբեթյան դարաշրջանից ի վեր այդ գույնի հագուստ կրելը հիմնականում խորհրդանշում է բարձր խավին պատկանելությունը, ինչպես նաև բարեկեցիկ կարգավիճակը, քանզի այն ժամանակ այդ գույնը շատ դժվար էր ստանալ և ուստի շատ թանկ արժեք: Ի դեպ, այդ գույնը հաճախ զուգորդվում է նաև արքունիքի հետ:

Ընտանիքի սահմաններում վերադասություն է ցույց տալիս **wear the breeches/pants/trousers** ԴՄ-ը: Հատկանշական է, որ այդ նույն իմաստը հայերենում արտահայտվում է ոչ թե հագուստի պարագայով, այլ մարմնի մասով՝ **գլուխ** բաղադրիչ պարունակող ԴՄ-ում՝ *տան գլուխ լինել*:

*Blake may seem bossy, but it's Lisa that really **wears the trousers** in that relationship.* (The Penguin Dictionary of English Idioms 2001)

Արնտրվում էին ծնկներս փկլոր,  
Աչքս էր լցվում քրտինքը ծոր – ծոր,  
Բայց երբ կեսօրին քույրս հաց բերեց,  
Չգացի ես ինձ **փան գլուխը** մեծ,

Չգացի ես ինձ իսկական հնձվոր: (Ն. Ջարյան 2000)

Իսկ ստորադասությունը ընտանիքում կարող է արտահայտվել հետևյալ ԴՄ-ով՝ **to be tied to smb's apron strings**, որը համարժեք է հայերենի՝ **կնոջ փեշի / լաչակի փակ լինել** ԴՄ-ին:

*At 25, he was still too **tied to her apron strings** to get an apartment of his own.* (The Penguin Dictionary of English Idioms 2001)

Հետաքրքրական է նաև **fur coat and no knickers** ԴՄ-ը, որը մատնանշում է բարձր խավին պատկանելու անձի ունեցած կարծիքն իր մասին, որը, սակայն, ամենևին էլ բարձր դասի ներկայացուցիչ չէ: Այս ԴՄ-ը կարող է հարել նաև «**Հագուստը բնավորություն է**» փոխաբերությանը, քանզի ցույց է տալիս բացասական բնավորության գիծ՝ մեծամտություն:

*Our new boss sounded like she had a lot of good ideas for the department, but it turns out she's **all fur coat and no knickers**.* (thefreedictionary.com)

Ստորադասությունը կարող է արտահայտվել **still in swaddling-clothes** ԴՄ-ի միջոցով, որտեղ **swaddling-clothes**-ը՝ բարուրաշորը արդեն ցույց է տալիս *անձի ինչ-որ բանում անփորձ, սկսնակ լինելը*: Ի դեպ, այս դեպքում հայերը կարող են ասել. «**Բարուրից նոր է դուրս եկել**»:

*In my mind, my son is still in his swaddling clothes - I can't believe he's about to start middle school.* (thefreedictionary.com)

Վերադասություն/ստորադասությունը սերտորեն կապված է նաև մասնագիտության հետ: Հայերենում այս փոխաբերության շրջանակում կարելի է ընդգրկել լեզվի խոսակցական շերտին պատկանող հետևյալ ԴՄ-ները՝ **սպիտակ խալաթ հագնել**՝ բժիշկ լինել/դառնալ, **ուսադիր կրել/ ուսադրավոր լինել**՝ ոստիկան կամ ոազմական ծառայող լինել:

*Մեր փան շուրջը **ուսադիրներ կրող** մարդիկ են, ես տեսնում եմ նրանց, բայց իրավունք չունեմ ներս մտնելու իմ սեփական տունը, վախենում եմ նրանցից:* (Վ. Բալայան 1986)

Հատկանշական է, որ ի տարբերություն հայերենի, անգլերենը հարուստ է նման ԴՄ-ներով, որոնցում, ի դեպ, գերիշխող տարր է **հագուստի գույնը**, ուստի դասակարգումը կատարում ենք նաև ըստ հագուստի գույնի:

Զինված ուժերի համակարգում ունեցած պաշտոնը, դիրքը անգլերենում արտահայտվում է հետևյալ ԴՄ-ներով՝

**a brass hat** - ավագ սպա

He knew nothing of the Army and was inclined to be suspicious of all **brass hats**. (The Penguin Dictionary of English Idioms 2001)

**wear the King's/ Queen's coat/ a red coat** - անգլիական զինված ուժերի ծառայող, արքունական զինծառայող

'How did he get to Newcastle?' Jummer laughed. 'He was too well known to the police and the **Red Coats** for it to be comfortable in Ballarat so he made north. .' (thefreedictionary.com)

Doctor, I thought you **had worn the King's coat!** If that was how you served at Fontenoy, sir, you'd have been better in your berth. (The Penguin Dictionary of English Idioms 2001)

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում անգլիական լեզվամշակություն **cap** և **gown** բաղադրիչներով կազմված այն ԴՄ-ները, որոնք ակադեմիական վերադասության/ստորադասության ցուցիչ են, ընդ որում գլխարկի և զգեստի ձևն ու գույնը կարող են մատնանշել տվյալ դասախոսի/ուսանողի գիտական աստիճանը, կոչումը:

**Cap and gown** - ա)ակադեմիական հագուստ, բ) անգլիական դասախոսական/ուսանողական համազգեստը, գ) ուսանող

It was a cap-and-**gown** affair so we went there in time to take our place. (Cambridge Dictionary 2013)

Բրիտանական մշակույթում ստորադասություն է արտահայտում **dunce's cap** ԴՄ-ը, ինչը նշանակում է հին ժամանակներում կիրառվող թղթե գլխարկ, որի վրա գրված էր **D** տառը (**dunce** – հիմար բառի առաջին տառը) և որը դնում էին անխելք, դասը լավ չսերտած և շատ սխալներ թույլ տվող աշակերտների գլխին՝ որպես պատիժ:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, հայերենում «**հագուստը մասնագիտություն է**» փոխաբերությունը կարող է արատահայտվել քիչ թվով ԴՄ-ներում, իսկ բրիտանական մշակույթին բնորոշ է հագուստի միջոցով մասնագիտության արտահայտումը, որը կարող է արտահայտվել ինչպես **hat**, **coat** և **cap** հագուստի պարագաներով, այնպես էլ դրանց **գունային երանգներով**: Երբեմն գունային երանգը հենց հանդես է գալիս

հագուստի փոխարեն և արտահայտում տվյալ անձի մասնագիտությունը, զբաղմունքը, օրինակ՝ **blue**-ն և նրա երանգները:

Կարելի է փաստել, որ անգլերենում հագուստով արտահայտված ԴՄ-ները կարող են արտահայտել տարբեր մասնագիտություններ՝ *զինվորական, նավաստի, մարզիկ, ոստիկան (blue), զինվորական, բանվոր (hat), զինվորական (coat), ակադեմիկոս, դասախոս, ուսանող, ծաղարածու (cap)*:

Այսպիսով, կարելի է փաստել, որ երկու լեզուներում էլ հագուստը արտահայտում է մարդու դասային պատկանելությունը, հասարակական դիրքը, վերադասությունը/ստորադասությունը, այսինքն՝ թե՛ հայ, և թե՛ բրիտանական լեզվամշակույթում առկայանում է «հագուստը հասարակական դիրք է» ճանաչողական փոխաբերությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Վ., Հավատ (պատմվածքներ), Երևան, «Սովետական գրող», 1986, 300 էջ:
2. Բես Գարեգին, Նովելներ, մաս 1, Երևան, Հայպետհրատ, 1954, 384 էջ:
3. Զարյան Ն., Հատընտիր: (Բանաստեղծություններ, պոեմ, դրամա), Երևան, 2000:
4. Պռոշյան Պ., Սկիզբն երկանց, Երևան, 1892:
5. Սահյան Հ., Բանաստեղծություններ, հատոր Բ, Երևան, «Հայաստան», 1969, 356 էջ:
6. Սևդա Սևան, Ինչ-որ տեղ Բալկաններում, Երևան, Զանգակ-97, 2003:
7. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:
8. Cambridge Advanced Learner's Dictionary 4th Edition, CEF Level: B2 - C2, 2013.
9. Davidson H., What Metaphors Mean.in S. Sacks (ed.) On Metaphor. Chicago: University of Chicago Press, 1978.
10. Robert G. Burgess. Investigating society. Harlow (ed.): Longman Group UK Ltd, 1989, pp. 32-171.
11. Shibles W., Metaphor: An annotated bibliography and history. Whitewater - Wisconsin, 3rd edition, 2011.

12. The Free Dictionary Online /available at *thefreedictionary.com* 20.04.2019/.
13. The Penguin Dictionary of English Idioms, Penguin Books, 2001.
14. Way of life: dominant ideologies and local communities. London: Social Science Research Council, 2000, pp. 1-76.
15. Виноградов С. И., Нормативный и коммуникативно прагматический аспекты культуры речи.// Культура русской речи и эффективность общения. М., Наука, 1996.
16. Кунин А. В., Фразалогия современного английского языка. М., 1972.
17. Лакофф Дж., Джонсон М., Метафоры, которыми мы живем. Изд. 2-е. -М., 2008.-256 с.

#### REFERENCES

1. Balayan V., Havat (patmvac'qner), Er&an, «Sovetakan grogh», 1986, 300 e'j:
2. Bes Garegin, Novelner, mas 1, Er&an, Haypethrat, 1954, 384 e'j:
3. Zaryan N., Haty'ntir: (Banasteghc'owt'yownner, poem, drama), Er&an, 2000:
4. Pr'oshyan P., Skizbn erkanc, Er&an,1892:
5. Sahyan H., Banasteghc'owt'yownner, hator B, Er&an, «Hayastan», 1969, 356 e'j:
6. S&da S&an, Inch-or tegh Balkannerowm, Er&an, Zangak-97, 2003:
7. Sowqiasyan A.M., Galstyan S.A., Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran, Er&an, 1975:
8. Cambridge Advanced Learner's Dictionary 4th Edition, CEF Level: B2 - C2, 2013.
9. Davidson H., What Metaphors Mean.in S. Sacks (ed.) On Metaphor. Chicago: University of Chicago Press, 1978.
10. Robert G. Burgess. Investigating society. Harlow (ed.): Longman Group UK Ltd, 1989, pp. 32-171.
11. Shibles W., Metaphor: An annotated bibliography and history. Whitewater - Wisconsin, 3rd edition, 2011.
12. The Free Dictionary Online /available at *thefreedictionary.com* 20.04.2019/.
13. The Penguin Dictionary of English Idioms, Penguin Books, 2001.



14. Way of life: dominant ideologies and local communities. London: Social Science Research Council, 2000, pp. 1-76.
15. Виноградов С. И., Нормативный и коммуникативно прагматический аспекты культуры речи.// Культура русской речи и эффективность общения. М., Наука, 1996.
16. Кунин А. В., Фразалогия современного английского языка. М., 1972.
17. Лакофф Дж., Джонсон М., Метафоры, которыми мы живем. Изд. 2-е. -М., 2008.-256 с.

**РУЗАН МУСЕЯН – АКТУАЛИЗАЦИЯ КОНЦЕПТУАЛЬНОЙ МЕТАФОРЫ «ОДЕЖДА - ЭТО СОЦИАЛЬНЫЙ СТАТУС» В АНГЛИЙСКИХ И АРМЯНСКИХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦАХ**

*Ключевые слова:* концептуальная метафора, идентичность, лингвокультура, социальный статус

Статья посвящена изучению концептуальной метафоры «Одежда - это социальный статус» в английском и армянском языке на материале английских и армянских фразеологических единиц с компонентом "одежда".

Фразеологические единицы являются ценным источником культурной информации и могут способствовать пониманию и восприятию культурной идентичности в исследуемых языках.

**RUZAN MUSEYAN - ACTUALIZATION OF THE CONCEPTUAL METAPHOR "CLOTHING IS A SOCIAL STATUS" IN ENGLISH AND ARMENIAN PHRASEOLOGICAL UNITS**

*Keywords:* conceptual metaphor, identity, linguo-culture, social status

The article aims at studying the conceptual metaphor "Clothing is social status" in English and Armenian phraseological units with names of clothes. Phraseological units are valuable sources of cultural and cognitive information about ethnic, cultural, and national groups, and help to reveal cultural similarities and differences in the perception of different values in these languages.

Ներկայացվել է՝ 02.04.2019  
Գրախոսվել է՝ 02.04.2019

**“HEIMAT” (ՀԱՅՐԵՆԻՔ) ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ**

**ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ հասկացույթ, գիտափորձ, դրդաբառ, զուգաբառ, բառարանային իմաստ, զուգորդում, ճանաչողական հատկանիշ*

Արդի լեզվամշակութաբանական հետազոտություններում կարևոր տեղ են զբաղեցնում հասկացույթների ուսումնասիրությունները, քանի որ հասկացույթները բնորոշվում են մեզ շրջապատող աշխարհի երևույթների մասին գիտելիքների ամբողջականությամբ և ազգային մշակույթի մաս են կազմում: «Հասկացույթն իրենից ներկայացնում է կոնկրետ էթնիկական խմբի յուրահատուկ մտածողության դրսևորում, և նրա բառայնացումը տվյալ հասկացության համակարգը կրողի լեզվաճանաչողական և ազգամշակութային նշույթավորված զուգորդային իրազեկություններով է պայմանավորված» (Фесенко 2000:144):

“Heimat” հասկացույթի լեզվամշակութային առանձնահատկությունները գերմանացի ուսանողների ազգային գիտակցության մեջ ուսումնասիրելու նպատակով անցկացվել է ազատ զուգորդային գիտափորձ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Հեսենի մարզի Մարբուրգ քաղաքի Ֆիլիպսի անվան համալսարանի գերմանագիտություն բաժնի ուսանողների հետ: Գիտափորձը նպատակ ունի ցույց տալ, թե “Heimat” հասկացույթի հետ կապված ինչ զուգորդումներ կարող են հանդիպել փորձարկվողների մոտ, հետևաբար, բառարանային իմաստներից բացի, հասկացույթի ինչ նոր իմաստներ կարող են հանդես գալ լեզվակիր-փորձարկվողների մոտ: «Զուգորդային գիտափորձերը ցույց են տալիս, թե մեր գիտակցությունն ինչպես է ճանաչում դրդաբառը, այսինքն՝ դրանք բացահայտում են խոսքը հասկանալու, խոսք ստեղծելու հորինվածքները, ինչպես նաև ցույց են տալիս, թե բառային միավորներն իմաստային ինչ ծավալով են ներկայացված լեզվակրի գիտակցության մեջ» (Попова, Стернин 2007:61): Դրդաբառին տրված զուգորդումները մանրագնին ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել, որը և ներկայացվում է ստորև: Զուգորդային գիտափորձն անցկացվել է 2018 թվականի հունվարին: Գիտափորձին մասնակցել են ընդհանուր թվով 100 փորձարկվողներ: Փորձարկվողներին նախապես բաժանվել են մաքուր հարցաթերթիկներ, նրանց բացատրվել է գիտափորձի նպատակը, սահմանվել է նաև

առաջնային ազդակները գրելու համար հատկացվող առավելագույն երկու րոպե ժամանակը, որից հետո խնդրվել է փորձարկվողներին գրիչները վայր դնել: Փորձարկվողներից 76 հոգի ազգությամբ գերմանացի են (27 հոգի՝ արական սեռի, 49 հոգի՝ իգական սեռի), իսկ 24 փորձարկվող այլազգի են (ռուս, սերբ, չինացի, ուկրինացի, իտալացի, սլովակ, թայվանցի, հոլանդացի, հունգարացի, ճապոնացի): Ոչ գերմանացի ուսանողների կողմից լրացված հարցաթերթիկները դրվել են մի կողմ, քանի որ մեզ հետաքրքրում են միայն գերմանացի փորձարկվողների կողմից տրված առաջնային ազդակերը: Կատարվել է ազդակների դասակարգում՝ ըստ փորձարկվողների կողմից տրված ազդակների հաճախականության, ապա զուգորդային նյութը ենթարկվել է քանակական և որակական վերլուծության: Կատարվել է հասկացույթի բառարանային իմաստների և փորձարկվողների կողմից տրված ազդակների համեմատական վերլուծություն: Հաշվարկվել են բազմակի, եզակի և նկարագրական ազդակները: Փորձարկվողների կողմից տրված ազդակների ընդհանուր թիվը կազմում է 449: Ազդակների քանակն ընդհանուր առմամբ տատանվել է 1-ից 12-ի միջև:

Ներկայացնենք փորձարկվողների կողմից տրված ազդակները՝ ըստ դրանց հաճախականության (ազդակի հետ նշվում է զուգորդումների քանակը): Փորձարկվողների գիտակցության մեջ “Heimat” (հայրենիք) հասկացույթի հատկանիշներն են՝ **Familie-52**, **Freunde-24**, **Geborgenheit-22**, **Zuhause-21**, **Deutschland-11**, **Kindheit**, **Sicherheit-10**, **Landschaften**, **Essen**, **Natur**, **wohlfühlen-7**, **Haus**, **Land-6**, **Dorf**, **Kultur**, **Liebe**, **Eltern**, (meine Eltern-1), **Sprache-5**, **Erinnerungen**, **Gefühl**, **Marburg**, **Wald-4**, **Berge**, **Geburtsort**, **Glück**, **glücklich**, **Vertrauen**, **warm**, **Wärme-3**, **bekannt**, **Brot**, **Dialekt**, **Essen**, **Feld**, **Geschichte**, **Herkunft**, **Herz**, **Katzen**, **Menschen**, **Mutter** (meine Mutter-1), **Region**, **Ruhe**, **Spaß**, **Sport**, **Traditionen**, **Ursprung**, **Vereine**, **Vertrautheit-2**, **Action**, **Altstadt**, **ankommen**, **aufgeregt**, **Bayern**, **Behaglichkeit**, **Bekannte**, **Beruf**, **BMW**, **Bett**, **Bodensee**, **Brüder**, **dörflich**, **Draußen**, **Ebbelwoi**, **Eder**, **Elternhaus**, **entspannen**, **euphorisch**, **Europa**, **Fahne**, **Feste**, **Flucht**, **Freiheit**, **Freude**, **Frieden**, **Fulda**, **Fußball**, **Garten**, **Gartenzaun**, **Gastfreudlichkeit**, **gemütlich**, **Gerüche**, **Geschwister**, **Gewohnheit**, **grün**, **Harmonie**, **Heimatfilm**, **Heimatort**, **Heimatstadt**, **heimfahren**, **Herkunftsdorf**, **Hessen**, **Hirsch**, **Hügel**, **Humor**, **Hund**, **kalt**, **kennen**, **Kerzen**, **Kindheitsgerüche**, **Klischee**, **kritisch**, **Kühe**, **Lebensmittel**, **Leute**, **Luxus**, **Mosel**, **Musik**, **Nähe**, **negativ**, **nie zu warm**, **Oma**, **Opa**, **Ordnung**, **Ort**, **Patriotismus**, **Person**, **Polizist**, **rechts**, **Rheingau**, **Rhein(-land)**, **Rhön**, **Rückzugsort**, **ruhig**, **Saarland**, **Sauerland**, **schön**, **Schule**, **schwierig**, **sicher**, **Sonne**, **Spaziergänge**, **Stabilität**, **Stolz**, **stolz**, **Täler**, **Tiere**, **Umarmung**, **Urlaub**,

Verbindung, Verwandte, Wasserkuppe, Wein, weltweit, Wiese, Wohlbefinden, Wohlbehagen, wohnen, Wohnort, Wohnung, Zuhörigkeitsgefühl, Zitronentee, Zusammensein-1:

Ակնհայտ փաստ է, որ հարցվածների գիտակցության մեջ “Heimat” (հայրենիք) դրդաբառի ամենավառ ճանաչողական հատկանիշը **Familie** (ընտանիք) ազդակն է, այն անհամեմատ ավելի շատ է հանդիպում փորձարկվողների մոտ, ընդ որում, 14 հոգի նշել են այն որպես առաջին ազդակ, 36 հոգի ընդհանուր ազդակների շարքում նշել են այն որպես երկրորդ, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ ազդակ, իսկ երկու հոգի ընդհանրապես միայն Familie (ընտանիք) ազդակն են նշել: Սա թերևս պետք է բացատրել նրանով, որ արագ փոփոխվող այս աշխարհում ընտանիքը հասարակության մեջ այն կարևոր բջիջն է, որը մարդու համար ապահովում է պաշտպանվածության, ապահովության, անվտանգության զգացողություն: Հատկանշական է նաև, որ ամենավառ կերպով արտահայտված **Familie** ազդակին հետևում է **Freunde** (ընկերներ) ազդակը, որը փորձարկվողների կողմից նշվել է 24 անգամ: Այնուհետև հետևում են Geborgenheit (ապահովություն), Zuhause (տուն, օջախ), Deutschland (Գերմանիա), Kindheit (մանկություն), Sicherheit (անվտանգություն), Landschaften (քնապատկերներ), Essen (ուտելիք), Natur (քնություն), wohlfühlen (իրեն լավ զգալ), Haus (տուն), Land (երկիր), Dorf (գյուղ), Kultur (մշակույթ), Liebe (սեր), Eltern (ծնողներ), Sprache (լեզու) ազդակները: Ավելի սակավ հանդիպում են Erinnerungen (հիշողություններ), Gefühl (զգացմունք, զգացողություն), Marburg (Մարբուրգ), Wald (անտառ), Berge (սարեր), Geburtsort (ծննդավայր), Glück (երջանկություն), glücklich (երջանիկ), Vertrauen (վստահություն), warm (ջերմ), Wärme (ջերմություն) ազդակները: Զգալիորեն պակաս հանդիպում են bekannt (ծանոթ), Brot (հաց), Dialekt (բարբառ), Feld (դաշտ), Geschichte (պատմություն), Herkunft (ծագում), Herz (սիրտ), Katzen (կատուներ), Menschen (մարդիկ), Mutter (մայր), Region (շրջան), Ruhe (հանգիստ), Spaß (հաճույք), Sport (սպորտ), Traditionen (ավանդույթներ), Ursprung (ծագում), Vereine (միություններ), Vertrautheit (ծանոթություն, մտերմություն) ազդակները: Մնացած ազդակները ըստ իրենց հաճախականության ամենաթույլ արտահայտված հատկանիշներն են, քանի որ դրանք հարցվածների մոտ հանդիպում են միայն մեկ անգամ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ “Heimat” դրդաբառն առաջացնում է զուգորդումների հետևյալ իմաստային խմբերը՝

- *քնակավայր կամ ծննդավայր*՝ Altstadt, Dorf, Elternhaus, Europa, Haus, Heimort, Land, Heimatstadt, Herkunftsdorf, Region, Zuhause

- *ընտանիքի անդամներ կամ մտերիմ մարդիկ*՝ Mutter, Geschwister, Eltern, Opa, Oma, Brüder, Verwandte, Freunde, Bekannte, Person, Leute
- *տեղանքի կամ աշխարհագրական անուններ*՝ Bayern, Bodensee, Deutschland, Eder, Essen, Europa, Fulda, Hessen, Marburg, Mosel, Rheingau, Rhein(-land), Rhön, Saarland, Sauerland, Wasserkuppe
- *Կենդանիներ*՝ Katzen, Hund, Hirsch, Kühe
- *բնություն և բնապատկերներ*՝ Täler, Wiese, Sonne, Wald, Hügel, Berge, Feld, Garten
- *սննդամթերք և խմիչք*՝ Ebbelwoi, Wein, Zitronentee, gutes Essen, Essen, Brot:

Նշվել են բազմաթիվ զգայական բնույթի ազդակներ, որոնք մարդու զգացմունքային դաշտի հետ են կապվում, ինչպես օրինակ՝ Geborgenheit (անվտանգություն), Sicherheit (ապահովություն), Freude (ուրախություն), Harmonie (ներդաշնակություն), Glück (երջանակություն), Wärme (ջերմություն), Vertrauen (վստահություն), Ruhe (հանգիստ), Zugehörigkeitsgefühl (պատկանելիության զգացում), Rückzugsort (նահանջի տեղ) և այլն: Փորձարկվողների կողմից նշվել են նաև բազմաթիվ զուգորդումներ, որոնք պայմանավորված են փորձարկվողների տվյալ պահին ունեցած հոգեվիճակով և զգացողությամբ, նրանց աշխարհընկալմամբ և անձնական փորձով, տվյալ հասկացության հանդեպ ունեցած նրանց արժեքային վերաբերմունքով և լեզվամշակութային իրազեկություններով, նրանց պատկերացումներով, ընկալումներով, գիտելիքներով և այլ հատկանիշներով: Ազդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես գերմանացի հետազոտող Է. Մոզմանն է փաստում. «Հայրենիքը չի կարելի միանգամից նույնացնել որևէ տարածքի հետ: Ծանոթ մարդկային հարաբերությունները ևս պատկանում են դրան, ընտանիքը և բարեկամները, հին ընկերները, ծանոթ սովորույթները և ավանդույթները, տոները նշելու ձևը, և ընդհանրապես ամրագրված կարգ ու կանոնները, ըստ որոնց ընթանում է կյանքը» (Moosmann 1980:28): Ազդակների ձևաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք արտահայտված են ոչ միայն գոյականներով, այլև ածականներով, որոնք թե՛ դրական, թե՛ բացասական հատկանիշներ են արտահայտում՝ *aufgeregt, dörflich, euphorisch, gemütlich, kalt, kritisch, negativ, nie zu warm, weltweit, grün, ruhig, rechts, schön, schwierig, դժվար, sicher, stolz, bekannt, glücklich, warm, veraltet*: Ազդակների շարքում առկա են նաև բազմաթիվ կոլոկացիաներ՝ *vertrautes Gefühl, deutsche Kultur, grüne Natur, traditionelles Essen, gutes Essen, saubere Straßen, künstlicher Begriff*: Աչքի է զարնում, որ փորձարկվողները նաև շարակարգային պատասխաններ

են տվել՝ *wohnen, ankommen, entspannen, heimfahren, kennen, wohlfühlen*: Վերջին ազդակը փորձարկվողների կողմից նշվել է 7 անգամ, որը ևս մեկ անգամ հավաստում է, որ հարցվածների մոտ հայրենիքը հաճախ կապվում է ոչ թե կոնկրետ տարածքի, այլ լավ ինքնազգացողության հետ, որը կարող է նաև օտար միջավայրում լինել: Փորձարկվողների մոտ այս զուգորդումը համընկնում է Wahrig-ի բառարանում հիշատակված *ein fremdes Land, wo man sich wohl fühlt* իմաստի հետ: Հարացուցային և շարակարգային զուգորդումներից բացի հարցվածների մոտ առկա են նաև նկարագրական ազդակներ: Նկարագրական ազդակների շարքը համալրում են հետևյալ արտահայտությունները՝ *Deutsch sein / zu Hause fühlen/ Zuhause sein/ das Gefühl von angekommen sein/ Möglichkeit zur Ruhe zu kommen/ deutsche Sprache beim Bäcker/ mehrere Orte möglich/ Gefühl und dein Ort/ das ewig seiende, das gegebene/ Öffnung für andere/ irgendwo ander/ Verbindung zu Menschen/ altmodisches Wort, man kann es interpretieren, wie man möchte/ Farbe der Blätter an Bäumen: frisches, helles Grün/ Gefühl, wo man sich wohl fühlt (kein Ort)/ für mich persönlich kein fester Ort, mehr Gefühl/ ein Ort, wo man erkannt ist und geliebt wird/ dort, wo ich mich geborgen fühle/ Begriff zur Durchsetzung nationalistischen Gedankenguts/ unabhängig von Nation u Ä, entsteht durch Akzeptanz statt Ausschuss/ Dorf oder Stadt, in dem man aufgewachsen ist/ Land, wo man aufwächst / Dorf, wo ich aufgewachsen bin/ Ort, an dem man einen Zeitraum verbracht hat und sich wohl fühlt:*

Հարցվածների որոշ ազդակներ կապվում են գլոբալիզացիայի և նրա հետևանքների հետ, ինչպես օրինակ՝ *man kann Heimat immer wechseln/ wo das Herz hängt/ irgendwo anders/ mehrere Orte möglich*: Բազմակի հանդիպող Essen ազդակը կարելի էրկակի մեկնաբանել՝ թե՛ որպես կերակուր, թե՛ որպես քաղաքի անուն: Չնայած այն հանգամանքին, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երեք սերունդ է փոխվել, սակայն այդ պատերազմը, ետպատերազմյան շրջանը, արտաքսումը բացասական զուգորդումներ են առաջացնում փորձարկվողների մոտ, և նրանց կողմից նշվել են հետևյալ ազդակները՝ *zum Teil nationalistisches Wort, Rechtspopulisten, Missbrauch und Nationalisten, Vertreibung, Weltkrieg, vorbelastetes Wort, Nachkriegszeit, Rassismus*: Ազդակների շարքում նշվել է նաև երիտասարդ AfD (Alternative für Deutschland) կուսակցությունը, որի անունը կապվում Գերմանիայում աջ էքստրեմիստական գաղափարախոսության հետ: Մյուս կողմից էլ այն փաստը, որ “Heimat” հասկացության **Vaterland** (հայրենիք) կարևորագույն հոմանիշը ոչ մի փորձարկվողի կողմից չի հիշատակվել, ևս մեկ անգամ հաստատում է, որ գերմանացիներն այսօր էլ դեռ զգուշանում են

օգտագործել ժողովրդի մոտ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայրենասիրական պաթոս առաջացնելու նպատակով նացիոնալիստների կողմից թերևս ամենաշատ օգտագործված բառը: Փորձարկվողների մոտ հանդիպում է նաև Ordnung ազդակը, որը վկայում է գերմանական հոգեկերտվածքի մեջ այս իմոյթի կարևորության մասին և դարձյալ կապվում է գերմանացիների ազգային գիտակցության հետ: Փորձարկվողները ոչ միայն բառ-ազդակով են պատասխանել դրդաբառին, այլ նաև՝ թևավոր խոսքերով և ասացվածքներով՝ *Heimat ist, wo das Herz ist./ Man bekommt vielleicht den Mensch aus der Heimat, aber die Heimat nicht aus dem Menschen.* Հարցվածների կողմից օգտագործվել են նաև հայերենում համարժեք չունեցող *Geschwister* և *Rückzugsort* բառերը: Ազդակների շարքը համալրում են բազմաթիվ բարդ բառային միավորներ, որոնք կազմվել են գոյական+գոյական բառակազմական կաղապարով՝ *Heimatfilm, Heimort, Heimatstadt, Zugehörigkeitsgefühl, Herkunftsdorf, Kindheitsgerüche, Lebensmittel, Nachkriegszeit* և այլն: Ըստ Վորկաչևի՝ այս հասկացույթը իմաստային առումով հիբրիդային է. այն պարունակում է դենոտատային, դեյկտիկ մաս, որը թույլ է տալիս կապել այն որևէ կոնկրետ երկրի կամ պետության քրոնոտոպի հետ և էմոտիվ-գնահատողական մաս, որը հենց արտահայտում է նրա յուրօրինակությունը: Հայրենիքն այն է, ինչ մնում է երկրից, երբ նրանից հանում են աշխարհագրությունը և քաղաքական կառուցվածքը՝ մի «անբացատրելի բան», ինչն էլ մարդիկ ամեն ինչից ավելի շատ են սիրում: Համեմատելով փորձարկվողների կողմից նշված ազդակները “Heimat” հասկացույթի բառարանում ամրագրված իմաստների հետ, պարզ է դառնում, որ որոշ բառարանային իմաստներ՝ *Land, wo man geboren ist/ die Stadt oder das Dorf, wo jemand geboren ist/ ein fremdes Land, wo man sich wohl fühlt* հիշատակվել են մի քանի փորձարկվողների կողմից: Բառարանային մյուս իմաստները՝ *vom Vater geerbtes Habe/ Väter, Vorfahren, Urväter/ Herkunftsland eines Tieres, einer Pflanze oder einer Erscheinung*, ոչ մի անգամ չեն հիշատակվել:

Ամփոփելով զուգորդային գիտափորձի արդյուքները՝ կարելի է նշել, որ փորձարկվողների լեզվական գիտակցության մեջ բառարանային իմաստները միշտ չէ, որ ամենավառ արտահայտված հատկանիշներն են: Հաճախ հանդիպում են այնպիսի հարանշանակային իմաստներ, որոնք բառարանային իմաստների հետ ոչ մի կապ չունեն: Ազատ զուգորդային գիտափորձը թույլ տվեց վեր հանել “Heimat” հասկացույթի այն բաղադրիչները, որոնք խորքային են և միշտ չէ, որ ընկալվում են որպես տվյալ հասկացույթի իմաստային բաղադրիչներ, ինչպես նաև բացահայտել գերմանացի ուսանողների գիտակցության մեջ արժեքային

վերաբերմունքը “Heimat” հասկացույթի նկատմամբ: Փորձարկվողների մոտ «հայրենիք»-ը հաճախ զուգորդվում է ընկերների, ծնողների, մանկության, դպրոցի, մանկական հուշերի, անգամ մանկության ժամանակ զգացած բույրերի հետ: Այն զուգորդվում է նաև մշակույթի, լեզվի և բարբառների հետ: «Հայրենիք»-ի ամենավառ ճանաչողական հատկանիշը սակայն **ընտանիք** հատկանիշն է: Բազմաթիվ զուգաբառեր կապված են հարցվածների զգայական աշխարհի հետ, ինչպես՝ վստահություն, ապահովություն և այլն: Գլոբալիզացիան նույնպես թողել է իր ազդեցությունը փորձարկվողների գիտակցության վրա, որոնք հայրենիք են համարում այն երկիրը, որտեղ իրենց լավ են զգում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Воркачѳв С. Слово “Родина”: значимостная составляющая лингво концепта. 2006 (АиФ 2005, № 42)
2. Фесенко Т. Концептуальные системы как контекст употребления и понимания вербальных выражений // Когнитивные аспекты языковой категоризации. Сб. науч. трудов. 2000, С. 141-144
3. Попова З. Стернин И., Язык и национальное сознание / З. Попова, И. Стернин. — Изд. 3., перераб. и доп. — Воронеж : Истоки, 2007, 61 С.
4. Moosmann E. Heimat. Sehnsucht nach Identitat. Herausgegeben von Elisabeth Moosmann. sthetik & Kommunikation, 1980:28
5. Duden. Deutsches Universal Worterbuch-Mannheim-Leipzig-Wien-Zurich-1996:680
6. Wahrig G. Deutsches Worterbuch, Bertelsmann Lexikon Verlag 1994:1650

#### REFERENCES

1. Vorkachjov S. Slovo “Rodina”: znachimostnaja sostavljajushhaja lingvo koncepta. 2006 (AiF 2005, № 42)
2. Fesenko T. Konceptual'nye sistemy kak kontekst upotreblenija i ponimanija verbal'nyh vyrazhenij // Kognitivnye aspekty jazykovej kategorizacii. Sb. nauch. trudov. 2000, S. 141-144
3. Popova Z. Sternin I., Jazyk i nacional'noe soznanie / Z. Popova, I. Sternin. - Izd. 3., pererab. i dop. - Voronezh: Istoki, 2007, 61 S.



4. Moosmann E. Heimat. Sehnsucht nach Identität. Herausgegeben von Elisabeth Moosmann. Ästhetik & Kommunikation, 1980:28
5. Duden. Deutsches Universal Wörterbuch-Mannheim-Leipzig-Wien-Zürich-1996:680
6. Wahrig G. Deutsches Wörterbuch, Bertelsmann Lexikon Verlag 1994:1650

**СИРАНУШ ПАПОЯН - ОСОБЕННОСТИ ЛИНГВО-КУЛЬТУРНОГО КОНЦЕПТА “РОДИНА” В СВЕТЕ АССОЦИАТИВНОГО ЭКСПЕРИМЕНТА**

*Ключевые слова:* концепт, эксперимент, ассоциация, словарные значения, ассоциативная реакция

Настоящая статья посвящается изучению особенностей лингво-культурного концепта “родина” в немецком языке. Как метод изучения человеческого сознания нами проводился ассоциативный эксперимент, изучение результатов которого показывает, что словарные значения не всегда самые ярко выраженные значения у респондентов. Согласно частотности ассоциации, Родина ассоциируется прежде всего с **семьей**. Этой ассоциативной реакции следуют друзья, родители, очаг, детство, ландшафт и другие. Родина также тесно связана с эмоциональным миром респондентов, что в свою очередь зарождает много коннотативных значений.

**SIRANUSH PAPOYAN - FEATURES OF LINGUOCULTURAL CONCEPT “HOMELAND” IN THE LIGHT OF THE ASSOCIATIVE EXPERIMENT**

*Keywords:* concept, experiment, association, dictionary meanings, associative reaction

This article is devoted to the study of the features of the linguistic and cultural concept “homeland” in the German language. As a method of studying consciousness, we conducted an associative experiment. The study of the results of which shows that the dictionary meanings are not always the most pronounced meanings of the respondents. According to the frequency of the association, the “homeland” is associated primarily with family. This associative reaction is followed by friends, parents, hearth, childhood, landscape and others. Homeland is also closely connected with the emotional world of the respondents, which in turn gives rise to many connotative meanings.

Ներկայացվել է՝ 20.06.2019

Գրախոսվել է՝ 20.06.2019

FEMALE WRITINGS OF "POSTMEMORY" THROUGH THE NOVELS  
"L'ÉTRANGÈRE"(THE STRANGER) BY VALÉRIE TORANIAN AND "MA  
GRAND-MÈRE D'ARMÉNIE" (MY GRANDMOTHER FROM ARMENIA) BY  
ANNY ROMAND

LUSINE ABGARYAN

**Keywords:** *genocide literature, transmission, trauma, memory, autobiography*

This article addresses the notion of "postmemory" developed by Marianne Hirsch that we will explore through two novels by two French writers of Armenian origin. These novels, or family stories, are part of the ever-growing group of fictional writings about the memory, trauma and transmission of the Armenian Genocide to succeeding generations.

We will also try to place the stories, the family odysseys of Valérie Toranian and Anny Romand, at the crossroads of autobiography and fiction. These two stories are post-memorial writings of stories of two women survivors of the Armenian Genocide.

The fictional approach to the postmemory of these two women writers are part of a series of contemporary works, literary expressions which find its place in one of the multiple "spaces dedicated to the individual and collective memory"<sup>4</sup>.(Bellemare-Page 2006:49)

The notion of postmemory was created in 1992 by Marianne Hirsch and later developed in these works, and by which we characterize the novels studied. Postmemory refers to the Shoah, and originally designated the relationship of the descendants of the survivors with the memories and the experience of their parents. The term then broadened its meaning and was used to describe the relationships between later generations or non-direct witnesses to the personal, collective and individual trauma of others, of his ancestors:

The term of "postmemory" describes the relationship that the "next generation" has with the cultural, collective, and personal trauma experienced by those who preceded it, so it relates to experiences that this next generation only "remembers" through stories, images and

---

<sup>4</sup> This quote and the following are translated from French by L.A.

behaviors among which she grew up. But these experiences have been transmitted so deeply and emotionally that they seem to be his own memory. The relationship of postmemory with the past is assured by the mediation not of memories, but of projections, creations and imaginative investments. Growing up with the legacy of overwhelming memories, being dominated by stories that preceded one's own birth or own conscience, runs the risk that the stories of one's own life are themselves displaced or even evacuated by our ancestors. It is to be formed, albeit indirectly, by traumatic fragments of events that still challenge narrative reconstruction and exceed comprehension. These events occurred in the past, but their effects continue in the present. This is the structure of postmemory and the process of its generation. (Hirsch 2014)

This indirect form of memory becomes an indispensable tool of analysis for works dealing with traumatic subjects, but not only, as Marianne Hirsch also suggests the possibility of referring this structure when we return to non-traumatic but happy events. Postmemory's "post" is more than a remoteness in time, a distance or a criticism, as is the case of postmodernism or poststructuralism. Rather, it refers to a sequence, a continuity and a consequence of memory, like postcolonial and post-feminist notions that appear as a consequence.

Like any notion, the latter also did not fail to elicit criticism and a plurality of analysis. Hirsch gives a broad definition of this notion, and it does not exclude the use of this term in the analysis of the consequences of other peoples' tragedies or traumatic situations. Although in the beginning it only referred to the Holocaust, it then applied to other genocidal and warlike experiences such as in Rwanda, the former Yugoslavia, Cambodia, the genocide of the Native Americans, Aborigines, the colonization of Africa, and the genocide of the Armenians.

Postmemory work assumes a special status in the case of the Armenian genocide: to tragedy, loss of homeland, loss of identity in many cases-the denial of this genocide adds to the suffering, which gives birth to such documentary, testimonial and even demanding tendencies, and creates aspirations to speak not only in memory of others, but in the place of others, in favor of others.

The postmemorative writing of the two authors, Valérie Toranian and Anny Romand is characterized by a great distance from the experience of their grandmothers. Our contemporaries deal with the genocide and the lived

experience of their grandmothers with a distance of two generations. In the present time and space, Toranian and Romand make symmetrical and systematic transitions between two periods, that of genocide and that of their own childhood and adult life. The structure of these two stories is quite similar and the transitions between the two tenses and spaces are common. Some documentation is present.

The authors began to depict in writing what was transmitted to them directly and orally (the Toranian case), in writing (the Romand case), and silently (the case of some other authors).

In these two cases, the transmission has a distance of two generations and is inhabited by a third party. The History includes smaller stories. Postmemory and memory are intertwined in these narratives by the spatial-temporal framework as well as by the presence of the other who revisits and restores a new life to this memory.

Talking about the past and rebuilding the puzzle from distorted memory becomes an ultimate goal for writers of the third generation of Armenian survivors for various reasons:

- rebuilding their own identity from the personal story denied in most cases by their parents (second generation),
- reconciliation and confirmation of their relationship with their national identity, and family cultural tradition denied, ignored and underestimated,
- aware of being the last to be able to collect the testimonies directly from their ancestors still alive.

According to Robert Antelme, fiction and autofiction are the only writings capable of telling about an intolerable reality. Therefore, the writing is the main means of memory for the authors of the third generation. "The work of release will therefore be done, *in primis*, thanks to the writing itself, which constitutes for them not only the technical support of the testimony but a real work of excavations in progress in the depths of the inherited memory, as well as in the folds of their personal existence."(Imbroscio 2011)

In Toranian's "L'Etrangère" the narrative alternately traces the fate of Aravni, the author's grandmother who narrowly escaped the Armenian Genocide and shortly before her death, at the age of 96, opened up to her granddaughter her own childhood memories, often doing it with humor.

The author's two perspectives intersect in "L'Etrangère". One is the perspective of the little girl who is ashamed of her grandmother by describing her as "not beautiful, not presentable, too big, too weird, too foreign, too sensitive, too paranoid, all too much". (Toranian 2015:49) She says: "My

grandmother is a "genocide survivor." These three words define it, contain it and isolate it from the rest of the species." (Torarnian 2015:18)

The other perspective is that of a woman who makes another woman talk about her story:

"In the last years of her life I visit my grandmother, with a notebook, to try to extract from her, meeting after meeting, elements of her history. The idea that she dies without my being able to collect her testimony haunts me. I apply myself. Although I have a much better knowledge of Armenian, everything is not clear. I stumble on the words, sometimes I transcribe them phonetically on paper to postpone their translation. I compose a puzzle or some rare pieces fit together or I miss the main part of the pattern". (Torarnian 2015:221)

The need to pick up and build the family puzzle through memory is very strong for the third generation of survivors. The descendants of the second generation, having resumed a certain rhythm of life, prefer silence. For the sake of assimilation, they often deny the past of their immigrant parents. The third generation decides to break this long-maintained silence and tries at all costs to create dialogue and collect testimonies or reconstruct the family history, often with great effort:

"She knits. I leave my notebook. I'm looking for ways to make her talk about the most dramatic episodes in her story, which are also the ones that interest me the most.

(...) -Tell me precisely what happened in the convoys.

She whispers something for herself that I do not understand and concludes with:

-Amane; amane ... (my God, my God ...)

I am discouraged. I dream to collect this story which is also mine and she opposes it like a stubborn child". (Torarnian 2015:222)

"The generational aspect of the transmission of the heritage of memory resulting in the inheritance of silence is linked to a certain "voluntary amnesia" (Becker et al. 2015), an amnesia to cling to life (...)." This amnesia, this silence nevertheless keeps the trauma untranslatable for the survivors.

Collective as well as individual memory can be worked out when it comes to manipulating these memories, because the awareness of the traumatic event and its consequences turns out to be very difficult, as Paul Ricœur (Ricœur:2000) reminds us. Moreover, he also observes that there is a kind of forgetfulness, a "commanded" oblivion that buries history. It is by

getting rid of this "commanded" oversight that writers try to free themselves from trauma.

Torianian opens his book with the words of Camus that summarize in some way the ideology of the untranslatable and the unspeakable: "Those who really have something to say, they never speak." (cit. by Torianian 2015:9) Writing, for successive generations of survivors is the way to fill the gap, to restore the inheritance as it is, and to restore the speech long or always unexpressed or partially expressed.

Torianian speaks of the traumatic heritage she is aware of as a child:

"Every family saga has its primitive scenes that weld the clan around a common destiny. My father nailed Armenia in our heads. Like the stigmata of Christ, **the stories of horror are now engraved in our tender flesh, ready to surface again. They flow in our veins, settle in the bone, the soft and the fat, in the wetness of our bowels. They will become, our fellow travelers.**

This ordeal is literally traumatic, but it never occurred to me to blame my father. As an initiation rite that we know will be painful but necessary to be part of the group, I received my share of heritage without flinching. Almost relieved.

The genocide was no longer an abstract and mysterious massacre of which no book or film spoke.

**It was a physical injury that bristled my hair, made me tremble and caused the same symptoms in all my family members.** (Torianian 2015:124-125)

Some chapters of "L'Etrangère" contain dates, especially the important dates of his grandmother's convoy itinerary which she reconstructed thanks to the historian Raymond Kévorkian, as she indicates in the acknowledgements. A bibliography appears at the end of the book, including essays and historical works on the subject of the Armenian Genocide, as well as some novels on this subject and three important works by Robert Antelme, Primo Levi and Elie Wiesel, survivors of the Holocaust. The work of memory then takes a different dimension in this novel.

The author is not in a position where she passively remembers her grandmother's stories. She actively does research to learn more about the history of the Armenian genocide. Through her questions and research, the author became engrossed in the history. This is not, however, Sartrean militant engagement, nor literary revenge on history. The boundaries between engaged literature and testimonial literature are more evident as a

historical moment in literary movements of the twentieth century and much less noticeable in post-genocide literature.

It is, in this case, a combination of history and story, it is postmemory.

The same frame is sketched in "My grandmother of Armenia" by Romand. The novel interweaves photos, excerpts from her grandmother Serpouhi's notebook and the author's childhood memories with the voice of a little girl she was at the time, with short, precise, clean sentences to the ideas and writing of a child.

It was after the death of her uncle Jiraïr that Anny discovered in these cases the notebook of her grandmother: a small notebook of seventy pages written during the convoy in Armenian, French and Greek. It enriches her own childhood memories, as Serpouhi told her about her stories since she was eight, and these convoy stories were bedtime stories for little Anny: "I'm eight years old and she tells me about her suffering because my mother and my uncle no longer want to hear about this painful past. They have turned the page. So it is to me that she confides her sorrows and I drink her words," she recalls (Baudourian:2015). Jiraïr, Anny's uncle, was a child survivor of the genocide, lost and found by his mother four years after his death. He sorted out his memory and told Anny only about "his walks in the mountains to keep sheep"(Romand 2015:111). No word is said about his experience during the deportation, as was the case for his sister, Anny's mother, who belongs to the second generation and who prefers to remain silent, to turn the page of the experience of her mother-victim-survivor.

Confidences of her grandmother are certainly heavy to carry for a girl of eight years old, but Anny Romand sweeps the remark: "I am very grateful to him. Thanks to her, I know where I come from. It's a story that's part of me. My grandmother gave me a lot of strength, she opened my eyes to life," she says. (Baudourian 2015)

Postmemory is often accompanied by a particular feeling in relation to the experience of the ancestors. Whether it is fear or revolt, it is expressed when the postmemory is manipulated. In Romand's novel, fear accompanies little Anny, just as she continues harassing her grandmother years after genocide: "Grandmother often looks behind her to see if someone follows her. No, I do not see anything. She is a little weird." (Romand 2015:14)

The grandmother memories have affected the psychology of the child in such a way that she sometimes puts herself in her place:

"I do not know how they can handle that. Poor children!  
Seeing their mother killed.  
I'm afraid we kill mom.

Sometimes I have nightmares.

I run to save her but I cannot move forward as if I was nailed on the spot". (Toranian 2015:58)

I'm too afraid to stop seeing her, to disappear, to die. (Toranian 2015:95)

Inspired and affected by the stories of her grandmother, little Anny even imagines her escape from convoys:

"We must flee, my grandmother and me. I'm with her in the convoy walking under the sun, without a hat. Mom always says I must have a hat on my head, but Mom, we have nothing, nothing to eat, nothing to drink, no bed, nothing". (Toranian 2015:64-65)

The novel is built in a symmetrical system. The texts that are superimposed in successive chapters deal with the ideas expressed both in the voice of the grandmother, Serpouhi, and the voice of the little girl, Anny. And this testifies the transmission of the memory:

"She loved **her father**, Agop. He was her god. (As an) engineer, he traveled the country of Palestine to construct the path of the train. The family often moved to accompany him. (The) **children went to school** in all cities. **The father wanted them to study. Grandmother also wants me to study, to go to university.** That I have a good job as she says". (Toranian 2015:15)

*Or:*

*"The Carnet (in French) June 1915*

*Well! To tell you the truth, the sweet memory that I will bring with me will be the beautiful, sweet days I spent in my childhood under the protection and **care of a good and generous father and I have the happiness to say even an ideal father.***

*I wish all of you to live with such **a Father** and a sweet and devoted mother. Their only occupation was **to raise their children** and to make children in the future without reproach and to be worthy of all sympathy" (Toranian 2015:17)*

If the girl's text succeeds or precedes the pages of her grandmother's diary to confirm and support her stories, the photos come to enrich Anny's writing. So, the memory is "confirmed" by another "memory."

The images that adorn the pages of the novel give a particular power to the written part. The installations of the fragments of the notebook as well as photos of the family archives make it possible to reconstitute the text in a more suggestive way. The memory, the important moments, the routine of



the family are rich in emotion. "Images, close to the archetypal dimension of knowledge, have a pathos that often exceeds that of writing, more related to the rational development."(Imbroscio 2011) This path back through the images helps to reconstruct the long-lost past.

The report of the author-character with the archives is quite interesting. The photos appear in the novel without logical chronology but are often superimposed after the fragments that would be linked in a certain way. For example, at the end of the chapter entitled "Grandmother Gets Married" in which the marriage of Serpouhi at the age of fifteen is described, through the voice of her granddaughter Anny, a photo appears with the following note: "Serpouhi at fifteen in Kastamouni in Turkey." (Romand 2015:34)

All photos are described by a note as simple as this one. Some pictures of Serpouhi's notebook are also included in the novel, without a particular description: "A page from Serpouhi's notebook Hovaghian, wife Kapamadjian, in Armenian (1915-1918)."

Roland Barthes attributes a "magical" capacity to photography, which intertwines the past and the present and becomes a continuity of the photographed real body, of which it is "the very authentication." Thus, "every photograph is a certificate of presence," it testifies, in a simple and direct way, that "it has been." (Barthes 1980:135,176)

It turns out that photography feeds Romand's novel with documentation next to his grandmother's notebook.

The parallel reading of these two works makes it possible to create some generalizations about the writings of the postmemory:

- These are writings by female authors that manipulate postmemory and testify to the experience of their ancestors, their trauma, but also the role of an Armenian grandmother and her relationship with her grandchildren, and thus the transmission.
- We can prove through these two texts the existence of fictional autobiography or autofiction. This phenomenon has gained great popularity in literature as well as in the cinema.
- The two texts are drawn from the perspective of the hero who grows up "during the text" or remains a child and the narration is from the child's perspective. This choice makes the sentences very short and we often guess the seriousness of certain facts behind very naive sentences.
- The two authors are representatives of the third generation. The reasons for the lack of testimony of the second generation, therefore the children of the survivors in the case of the Armenian genocide, are various, ranging from the loss or search for identity, to the need for assimilation

into a new society, the need to turn the page for traumatic and other psychological reasons.

So, if for the second generation of the Armenian genocide survivors the testimony was almost a taboo, for the third it was an absolute need for the cure, for the repair, then this postmemory "testifies to a form of curative externalization,"

(Bellemare-Page 2006:55) as also seen with psychoanalysts Janine Altounyan and H el ene Piralyan.

Could we conclude that the heirs of the survivors offer, by taking out their postmemory each in his own way, burials for their ancestors? Is writing a particular way to get rid of mourning? This makes it possible to understand why it is only the third generation of survivors who write after so much silence: it is now that memory becomes possible, that it is no longer engulfing, nor is it so traumatic despite denial. "It would be neither "too late" nor "too long" to talk about all it, but only finally possible to think it without dying, without being carried away again in the irremediable news of this trauma." (Piralian 2004:84).

Thus, in the two novels of postmemory the main engine for creative work is writing. Transmission creates a fertile ground for expressing one's own story during the years of childhood and youth, and as we have seen in the two novels, "(they) are not only" stories of war, "but they also reveal mechanisms for the transmission of intergenerational memory." (Piralian 2004:84). The authors pursue a reparative process from a personal point of view, useful for posterity. So, do they fully assume the role of the committed writer?

## REFERENCES

1. Barthes Roland, *La Chambre claire. Notes sur la photographie*, Paris, Gallimard, 1980.
2. Baudourian Elisabeth, *Nouvelles d'Arm enie Magazine*, num ero 222, Octobre, 2015.
3. Becker Annette et al., *Le G enocide des Arm eniens: Un si ecle de recherche 1915-2015*, Armand Colin, Paris, 2015.
4. Bellemare-Page St ephanie, *La litt erature au temps de la post-m emoire :  criture et r esilience chez Andrei Makine*,  tudes litt eraires, 2006, vol. 38, n o 1

5. Hirsch Marianne, « *Postmémoire* », *Témoigner. Entre histoire et mémoire* (En ligne), 118 | 2014.
6. URL : <http://journals.openedition.org/temoigner/1274> ; DOI : 10.4000/temoigner.1274
7. Imbroscio Carmelina, *Post-mémoire et identité. Les représentations du traumatisme par la «mise en scène» des objets*, *Revue italienne d'études françaises* (En ligne), 1. 2011. URL : <http://journals.openedition.org/rief/968> ; DOI : 10.4000/rief.968
8. Piralian Hélène, *Génocide et transmission*, Paris, L'Harmattan, 2004.
9. Ricœur Paul, *La Mémoire, l'histoire, l'oubli*, Seuil, Paris, 2000, chap. « L'oubli »
10. Romand Anny, *Ma grand-mère d'Arménie*, Paris, Michel de Maule, 2015.
11. Toranian Valérie, « *L'étrangère* », Flammarion, Paris, 2015.

**ԼՈՒՍԻՆԵ ԱՐԳԱՐՅԱՆ - «ՇԵՏՇԻՇՈՂՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՎԱԼԵՐԻ ԹՈՐԱՆՅԱՆԻ «ՕՏԱՐԸ» ԵՎ ԱՆԻ ՈՈՄԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՄԵԾ ՄԱՅՐԻԿՍ» ՎԵՊԵՐՈՒՄ**

*Հիմնաբառեր՝* *ցեղասպանության գրականություն, փոխանցելիություն, սրբավայր, հիշողություն, ինքնակենսագրական վեպ*

Սույն հոդվածում դիտարկում ենք Մարիան Հիրշի կողմից մշակված «հետհիշողություն» (անգլ.՝ «postmemory») հասկացությունը՝ ֆրանսագիր հայ արձատներով երկու հեղինակների ստեղծագործություններում: Ուսումնասիրվող երկու վեպերը պատկանում են այն շարունակաբար ավելացող ստեղծագործությունների շարքին, որոնք արձարծում են Հայոց Ցեղասպանության հիշողության, փոխանցման, տրավմայի և հետագա սերունդների վրա ազդեցության թեմաները:

Այս թեմայով գրական ստեղծագործություն գրելը վերապրածների սերունդների համար տասնամյակներ անց դառնում է անհրաժեշտություն՝ հիշողության բեռից ազատվելու, լռությանը վերջ դնելու, նախնիներին պատվելու, «գերեզման շնորհելու», սուգը հաղթահարելու և մի շարք այլ հոգեբանական պատճառներով: Հիշողության պարտքը (ֆր.՝ *devoir de mémoire*) դառնում է այն շարժիչ ուժը, որը ստիպում է ցեղասպանություն և այլ ոճրագործություններ վերապրածների հետագա սերունդներին ձայն

բարձրացնել և ազատվել հոգեբանական այդ ծանր բեռից, որը նրանց փոխանցվել է վերբալ, ոչ վերբալ կամ խոսուն լռության միջոցով:

Հիշողության միջոցով ընտանեկան մանրանկարը վերականգնելու անհրաժեշտությունը ընգծված է վերապրածների երրորդ սերնդի մոտ: Երկրորդ սերնդի ներկայացուցիչները գտնելով կյանքի որոշակի ռիթմ՝ նախընտրում են լռություն, կամ վերադարձ արմատներին կյանքի վերջում միայն: Նրանք հաճախ չեն ընդունում իրենց կապը ծնողների ողբերգական անցյալի հետ: Երրորդ սերունդը նախընտրում է կոտրել տասնամյակների լռությունը և փորձում է ամեն գնով երկխոսություն ստեղծել, վկայություններ հավաքել, վերականգնել ընտանեկան պատմությունը՝ հաճախ այն վերածելով գրական ստեղծագործության:

Շեղասպանության գրականության առկայությունը և՛ Հայոց Ցեղասպանությունից, և՛ Հոլոքոստից, և՛ Ռուանդայի և այլ ցեղասպանություններից հետո, իր հետ առաջ է բերել մի շարք հարցադրումներ, որոնց շուրջ արվում են ուսումնասիրություններ հայտնի ցեղասպանագետ-գրականագետների կողմից: Հարցադրումներից մեկը, որը դիտարկվում է սույն հոդվածում, գեղարվեստական գրականության, տրավմատիկ հիշողության և պատմական-փաստագրական իրադարձությունների եզրերի շփման շուրջ է:

Հոդվածում սույն հարցադրումներն ուսումնասիրվում են Վալերի Թորանյանի «Օտարը» և Անի Ռոմանի «Հայաստանցի մեծ մայրիկս» վեպերի համատեքստում:

#### **ЛУСИНЕ АБГАРЯН- РОМАНЫ «ПОСТПАМЯТИ»: «ЧУЖАЯ» ВАЛЕРИ ТОРАНЯН И «МОЯ БАБУШКА ИЗ АРМЕНИИ» АННИ РОМАНА**

*Ключевые слова:* литература о геноциде, трансмиссия, травма, память, автобиография

В данной статье рассматривается понятие «постпамяти», разработанное Марианной Хирш в романах двух французских авторов с армянскими корнями. Оба изученных романа относятся к серии постоянно расширяющихся работ, посвященных памяти, трансмиссии, травме и влиянию Геноцида армян на следующие поколения.

Написание литературного произведения на эту тему становится жизненной необходимостью для потомков выживших через десятилетия, чтобы облегчить бремя памяти, покончить с молчанием, почтить память предков, «похоронить», преодолеть траур и по ряду других психологических причин. Долг памяти (фр. *devoir de mémoire*) является той движущей силой, которая «заставляет» потомков оставшихся в живых

после геноцидов и других преступлений, сломить молчание для избавления от тяжелого психологического бремени, которое передается вербальными, невербальным способами или способом говорящего молчания.

Потребность восстановить семейную целостность с помощью памяти очень остра в третьем поколении выживших. Представители второго поколения, обретая определенный ритм жизни, предпочитают молчание или возвращаются к корням только в конце жизни. Они часто не принимают свою связь с трагическим прошлым родителей, чтобы не мешать процессу ассимиляции. Третье поколение предпочитает нарушить многолетнее молчание и пытается любой ценой создать диалог, собрать доказательства, перестроить семейную историю. Они часто превращают ее в литературное произведение.

Наличие литературы постпамяти Геноцида армян, Холокоста, Геноцида Руанды и других геноцидов выдвинуло ряд вопросов, которые изучают исследователи геноцида, психологи и литературоведы.

Одним из вопросов, рассматриваемых в данной статье, является взаимодействие художественной литературы, травматической памяти и историко-документальных событий.

В данной статье эти вопросы рассматриваются в контексте романов «Чужая» Валери Тораняна и «Моя бабушка из Армении» Ани Романа.

Ներկայացվել է՝ 24.06.2019  
Երաշխավորվել է ԵՊԼՀ Համաշխարհային գրականության և մշակույթի  
ամբիոնի կողմից  
Գրախոսվել է՝ 24.06.2019

**ԾԱՌԸ՝ ՏԱՐԵՐՔՆԵՐԸ ՄԻԱՎՈՐՈՂ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՄԻՇԵԼ  
ՏՈՒՂՆԻԵԻ «ՈՒՐԲԱԹԸ ԿԱՄ ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԼԻՄԲՈՍԸ»  
ՎԵՊՈՒՄ**

**ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ ծառ, խորհրդանիշ, գրականություն, բնության  
տարերք, կերպարի մեղամորֆոզ:*

Համաշխարհային մշակույթի ամենատարածված և ամենահագեցած խորհրդանիշերից մեկը ծառն է: Այն խորհրդանշում է կյանքը, ուղղահայաց զարգացումն ու միտումը դեպի երկինք ու երկնայինը, ինչպես նաև տիեզերքի ցիկլիկ ընթացքը, քանի որ աճում է, կորցնում տերևները, այնուհետև դրանք վերագտնում հաջորդ տարի՝ վերածնվելով անհամար անգամներ: Տարբեր ժողովուրդների լեգենդներում առկա է ծառ-նախնու երևույթը, որ հանդես է գալիս ծառ-մոր և ծառ-հոր կերպարով: Ծառ-նախնու գաղափարն էլ ժամանակի ընթացքում, ազատվելով իր միջակայս բնույթից, վերածվել է տոհմաձառի՝ պատկերելով ազգակցական կապը, ընտանիքի, տոհմի, ազգի ճյուղավորումը:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել ծառի սիմվոլիկան XX դարի ֆրանսիացի արձակագիր Միշել Տուլնիեի «Ուրբաթը և Խաղաղօվկիանոսյան լիմբոսը» վեպում: Դրա համար կդիտարկենք վեպում ծառի ներկայությունն ու սյուժեի զարգացմանը զուգահեռ դրան վերագրվող դերը:

1967թ. լույս տեսած վեպը պատմում է Ռոբինզոն Կրուզոյի արկածներն անմարդաբնակ կղզում՝ ցույց տալով այն զարմանալի մետամորֆոզը, որին ենթարկվում է հերոսը վեպի ընթացքում: Կղզու վրա հայտնվելուց հետո Ռուբինզոնը, նմանվելով Դանիել Դեֆոյի հերոսին, հաղթահարում է հուսահատությունն ու սկսում կառուցել «քաղաքակիրթ հասարակություն»: Նա կղզին վերածում է ամրոցի՝ դառնալով դրա «ռազմական» ղեկավարը: Սակայն այս արևմտյան մոդելը, որ արտահայտված է վեպում կառավարվող կղզու միջոցով, պարզվում է, որ ապարդյուն է, և Ռոբինզոնին չի օգնում հաղթահարելու մենությունը: Կասկածը մեծանում է արտաքին աշխարհի գոյության և սեփական ինքնության վերաբերյալ:

Ռոբինզոնի այս ողջ աշխատանքն իմաստ է ստանում, երբ իր կամքից անկախ փրկում է մի մետիսի կյանք: Ուրբաթը վերածվում է Ռոբինզոնի՝ պրիմիտիվ ու անկիրթ հասարակությունը քաղաքակիրթ դարձնելու ծրագրի մի մասը: Նա ստիպված է սովորել վարուցանք անել, աղալ, եփել և այլն, իսկ դրա դիմաց նույնիսկ վճարվում է նավաբեկությունից մնացած ոսկով:

Սակայն նրանց միջև ձևավորված «տեր ու ծառայի» հարաբերություններն աստիճանաբար փոխվում են: Ռոբինզոնը հետաքրքրությամբ դիտարկում է և փորձում իր համար վերլուծել Ուրբաթի պահվածքը՝ ազատվելով ռասիստական մոտեցումից: Արդյունքում նա սովորում է ընդունել բնությունն ինչպես որ կա, ինչպես նաև ընդունել ուրիշին և իր հետ եղած տարբերությունները: Ռոբինզոնը որդեգրում է ապրելու նոր հայեցակարգ՝ չհաշվելով ժամանակը, և գիտակցելով հասարակության դատից ու կարծիքից ազատ լինելու առավելությունը: Այսպիսով, նա ավելի է մոտենում իր իրական էությանը, և դա, փաստորեն, հնարավոր է դառնում «վայրի մետիսի» շնորհիվ, ում նա վերաբերվում էր համարյա ստրուկի պես՝ կրկնելով ողջ արևմտյան հասարակության մոլորությունը:

Ռոբինզոնի կերպարի փոխակերպման տարբեր փուլերում հեղինակն անդրադառնում է ծառի սիմվոլիկային՝ դրա տարբեր դրսևորումների միջոցով արտահայտելով այն, ինչ տեղի է ունենում Ռոբինզոնի ներաշխարհում:

Հատկանշական է, որ ծառի մասին կարդում ենք Տուլնիեի վեպի հենց սկզբում, երբ կղզում հայտնված Ռոբինզոնը տեսնում է հսկայական մայրին, որ բարձրանում էր «...քառասյին ժայռերից ահագին բարձր՝ որպես կղզու երկրային կախարհ: Երբ Ռոբինզոնն արթնացավ, մի թեթև հյուսիսարևմտյան զեփյուռ դրա ճյուղերը փարուքերում էր խաղաղեցնող շարժումներով: Այդ բուսական ներկայությունը նրան հանգստացրեց» (Tournier 1972:19):

Վեպում, ինչպես հեքիաթներում, ծառը դարձել է համարյա առանձին կերպար, և դրան են ծառայում այնպիսի անձնավորող արտահայտություններ, ինչպիսիք են *ներկայություն-ը*, *հանգստացնող շարժումներ-ը*: Հակադրելով ծառի խաղաղությունը քառսին՝ դրան վերագրվում է հանգստացնող ուժը: Դրանում անխոս կապ ունի նաև այն, որ տրոպիկական անտառի մյուս ծառերի համեմատ՝ մայրին Ռոբինզոնի համար ամենահարազատն էր ու ծանոթը: Մայրու կողքի քարանձավում Ռոբինզոնը պահում էր ամենաարժեքավոր իրերը՝ հացահատկի բերքը, մսի ու մրգերի պահածոները, հագուստը, զենքը, պայթուցիկը և այլն: Այն

ամենը, ինչ մնացել էր քաղաքակրթությունից և դեռ կապում էր նրան դրա հետ՝ պահված էր հսկա ծառի տակ:

Ծառը հենց սկզբից կապվում է մայր-բնության, հողի պաշտպանող ու սնող սիմվոլիկային: Ռոբինզոնը կարողանում է որպես շաքար օգտագործել խեժը, որ արմավենին «արտասվում էր» (Tournier 1972:67): Հիշելով, թե ինչպես էր նրա մայրն իր վեց երեխաներին փրկել հրդեհվող տնից՝ Ռոբինզոնը հետևյալ կերպ է նրան բնութագրում՝ «Նման իր պտուղների առափութունից կռացած ծառի՝ նա կրում էր իր վեց երեխաներին <...> բարության ու ճշմարտության որմնասյուն, հյուրասեր ու ամուր հող, իր սխալների ու վշտերի ապաստարան» (Tournier 1972:115): Մայրը համեմատվում է ծառի և մայր հողի հետ, ըստ այդմ ծառն էլ հանդես է գալիս՝ որպես մայր բնության ու երկրի խորհրդանիշ: Ռոբինզոնը նրան վերագրում է հստակ կանացի հատկանիշներ և գործառույթներ: Մեկ այլ անգամ մտածելով բույսերի փոշոտման մասին՝ Ռոբինզոնը պատկերացնում է, թե ինչպես կարող էր բեղմնավորել կղզու ծառերը. դրանց ճյուղերը կփոխակերպվեին «բուրավետ ու հեշտասեր» կանանց, որ «կհյուրընկալեին» իրեն (Tournier 1972:128):

Օվկիանոսից փրկված, ջրի փորձությունն անցած Ռոբինզոնը կղզում հայտնվելուց հետո ապրում է հողի տարերքի շրջանը՝ իր «արմատները գցում» հողի մեջ: Կղզին ու դրա բուսականությունը նրա ընկալման մեջ իգական սեռի են, օժտված կանացի հատկանիշներով: Ոգեշնչվելով Եսայու մարգարեության տողերից՝ Ռոբինզոնն ավելի ուժեղ է զգում իր ու կղզի-երկրի կապը.

*«Դուն անգամ մըն ալ Լքուած պիտի չկոչուիս  
Ու քո երկիրդ անգամ մըն ալ Ավերակ պիտի չկոչուի,  
Հապա դուն Իմ հավնածս  
Ու քու երկիրդ Ամուսնացեալ պիտի կոչուի»*  
(տես՝ Tournier 1972:141):

Այսուհետ նա ոչ միայն կղզու տերն է, այլև՝ ամուսինը: Իսկ որոշ ծառեր, ինչպես թզենին ու ճանդանը՝ կղզու կանացի դրսևորումներից են: Մի առավոտ արթնանալիս՝ Ռոբինզոնը տեսնում է, որ իր մորուքն արմատ է գցել հողում. նա սկսում է ծուլվել հողին, ինչպես բույսերը՝ կապվելով մինչև անգամ արմատով: Հեղինակը նրա ամբողջ մարմինն էլ արմատի է նմանեցնում՝ «Նա խեժի հողը էր առնում իր մեծ, արմատի պես սպիտակ մարմնից» (Tournier 1972:166): Տվյալ նախադասության մեջ կարելի է առանձնացնել երկու համեմատություն՝ Ռոբինզոնն ամբողջովին արմատ է դարձել՝ «խրվելով» հողի մեջ, և միաժամանակ, նա նմանեցվում է արմավենուն, քանի որ խեժով էր բուրում:



Ուշագրավ է, որ հողից օդի տարերքին անցումը կրկին արտահայտվում է ծառերի միջոցով: Ուրբաթը թփերն արմատահան էր արել ու թարս տնկել՝ ճյուղերը խրելով հողի մեջ: Ռոբինզոնն անչափ զարմանում է՝ տեսնելով, որ դրանք հարմարվել են իրենց նոր վիճակին: Դեպի երկինք ուղղված արմատները նույնիսկ ծիլ էին տվել, ճյուղերը դարձել արմատներ, իսկ խեժը փոխել էր հոսելու ուղղությունը: Ծառի խորհրդանիշը շրջելով՝ Տուլնիեն մեզ է ներկայացնում կերպարի փոխակերպման նոր փուլը՝ արմատ-Ռոբինզոնը շրջվելու էր դեպի երկինք, դեպի օդայինը:

Հեղինակն անխոս անդրադարձել է «շրջված ծառի» սիմվոլիկային, որն առկա է բազում մշակույթներում: Ուպանիշադներում հիշատակվում է Ասվաթեա կոչվող ծառի մասին, որի ճյուղերն աճում են հողում՝ հանց արմատներ, իսկ արմատները՝ դեպի երկինք: Հետաքրքիր է նշել, որ Ղևոնդ Ալիշանը, փորձելով ստուգաբանել հայերեն Աստված բառը, դիտարկում է նաև այս ծառի անվան հետ ակնհայտ նմանությունը<sup>1</sup>: Հրեական Կաբալայում նույնպես նկարագրվում է մի ծառ, որ աճում է վերևից ներքև: Ժիլբեր Դյուրանն իր՝ «Երևակայականի մարդաբանական կառույցները» աշխատության մեջ տվյալ երևույթը բացատրում է նրանով, որ ծառը դառնում է փոխադարձության խորհրդանիշ (Durand 2016:371), այսինքն՝ անվերջի ու վերջավորի, միության ու երկակիության՝ դառնալով ինչ-որ առումով «չարի ու բարու» ծառ: Շրջված ծառը թեքվում է դեպի երկրայինը՝ շեշտելով մարդու աստվածային բնույթը, և նրա ուշադրությունը հրավիրում դեպի իր ներքին «երկինք»:

Դիտարկելով ծառերի վարքագիծը նման իրավիճակում՝ Ռոբինզոնի համար հնարավոր են դառնում գոյության այլ ձևերը, քան այն «երկրային» կարգը, որը տանել չէր կարողանում Ուրբաթը: Սակայն նման «տարերային» անցման համար անհրաժեշտ էր ազատվել ամուր արմատներով հողի մեջ խրված հսկա պահապան մայրիի խորհրդանիշից:

Երբ Ուրբաթի պատճառով քարանձավը պայթում է, և նրանք զրկվում են տնից՝ Ռոբինզոնը խնամքով հավաքում է անվնաս մնացած իրերն ու դասավորում մայրիի տակ, ինչպես և վարվել էր նավաբեկությունից հետո: Այնուհետև երկուսով պառկում են քնելու նույն մայրիի տակ, որի ծանր ճյուղերը նույնիսկ քամուն չէին ենթարկվում:

---

<sup>1</sup> «Գուցե մեր Աստուած անվանը վերոհիշյալից առավել առնչություն ունի հնդկական Աստուատթա-ն, որ գերագույն մի բան է նշանակում՝ արմատը երկնքում, գլխավայր աստվածային ծառ, որից կյանքն է բխում, որ ինքն իսկ Բրահման է, և շատ այլ բան, շատ այլ առասպել»: Ալիշան, Ղևոնդ, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք. // <https://lib.mskh.am/images/books/hin-havatq.pdf>

Այստեղ վերջին անգամ երևում է հսկա ծառի՝ որպես մայր-հողի պաշտպանական սիմվոլիկան: Այն խորհրդանշում է անշուշտ նաև քաղաքակրթության հետ կապը, այն ամենն ինչ մնացել էր դրանից, ինչ հարազատ էր ու հաստատուն: Սակայն հաջորդ օրը, երբ Ռոբինզոնը տրվում է խորհրդածություններին այն մասին, որ Ուրբաթն իր կամքից անկախ ազատեց նրան «երկրային արմատներից», և ուղղորդում է դեպի «այլ»-ը (*autre chose*), հասկանում է, որ պատրաստ է հին ու «ղեկավարվող» կղզու անկմանը: Հենց այդ ժամանակ էլ սկսում են հողից դուրս գալ մայրիկ արմատները, որը, փաստորեն, պայթյունից թուլացել էր և հիմա քամուց արմատախիլ էր լինում. «*Մեծ մայրին դանդաղ սահում էր աստղերի մեջ և կայծակի աղմուկով ընկնում մյուս ծառերի կենտրոնում՝ որպես մի հսկա, որ բարձր խոտերի մեջ է ընկնում*» (Tournier 1972:203): Այսպիսով, Ծառն անձնավորվում է, նմանվում հսկա մարդու, որի հետ անկում է ապրում այն ամենը, ինչ դրան նախորդող գոյության հիմքն էր: Խորը արմատներով ու հսկա ճյուղերով մայրին, որ խորհրդանշում էր ամեն հաստատունը, այլևս իր տեղում չէր, և նոր հավասակշռություն պետք է հաստատվեր երկնքի ու երկրի մեջ: Ռոբինզոնն, այսուհետ, կսկսի հետևել Ուրբաթին ու երկրային փուլից տեղափոխվել օդային տարերքի փուլ:

Մեկ այլ անգամ հեղինակն օգտագործում է ծառի խորհրդանիշը այնպիսի տեսարանում, որն ակնհայտ տարբերվում է բոլոր նախորդներից. Ռոբինզոնը որոշում է բարձրանալ ծառը՝ մայրամուտը րոպեներ առաջ վայելելու համար: Այս անգամ ծառի տեսակը նշված չէ, սակայն բնորոշող հատկանիշները՝ կարմիր բունը, փշոտ ու պարուրածն տերևները հուշում են, որ խոսքն էկզոտիկ տրոպիկական ծառի մասին է՝ ի հակադրություն մայրիկի: Ռոբինզոնը, հաղթահարելով բարձրությունից ունեցած իր վախը՝ բարձրանում է ծառի գագաթ, և այդպիսով «...նա մասնակցում էր ծառի ակնհայտ գործառույթին, որն է՝ գրկել օդն իր բյուրավոր ձեռքերով, ամուր սեղմել այն իր միլիոնավոր մաշկերով» (Tournier 1972:216): Տվյալ մեջբերումից ակնհայտ է դառնում, որ կերպարին հեռացնելով հողից՝ հեղինակը նրան բարձրացնում է դեպի երկինք:

Եթե մինչ այս ծառի դերը պաշտպանական էր՝ կապված արմատների ու հողի սիմվոլիկային, ապա հետագայում կարևորվում են ճյուղերը, որոնք ծածանվում են քամուց, մոտենում երկնքին ու հաղորդվում օդի տարերքին: «*Ծառը հումուսի մեջ խարսխված մի մեծ նավ էր, և այն պայքարում էր իր բոլոր առագաստները բաց, վերջապես իր թռիչքը կատարելու համար*»: Արմատ, հսկա, խաղաղ, հող, երկիր, բուն բառերին այստեղ փոխարինելու են գալիս *առագաստ, օդ, ձեռք, մաշկներ*,

թռիչք բառերը, որ շատ ավելի օդային են: Նույնիսկ *հումուս* բառը, որ փոխարինում է հողին, դրան ավելի փափուկ ու անկայուն բնույթ է հաղորդում:

Ծառի անձնավորման երևույթին ականատես ենք լինում նաև այս փուլում. «Ծառի թռք-տերևը, ծառն ինքնին թռք, և ըստ ուրեմն քամին՝ նրա շնչատությունը,-մտածեց Ռոբինզոնը: Նա երազեց իր սեփական թռքերի մասին՝ դեպի ներս ծալված, կարմիր մարմնից թուփ, կենդանի մարջան՝ վարդագույն թաղանթներով, լորձային սպունգերով... Ինքն օդում կթափահարեր այդ նուրբ հորդությունը, մարմնական ծաղիկների փունջը...»(Tournier 1972:128): Ռոբինզոնն իր համար երազում է բուսական կերպարանափոխություն, իսկ ծառին մարդկային հատկանիշներ է վերագրում: Ակներև է, որ շարունակվում է նրա միաձուլումը բնության հետ, սակայն այս անգամ ոչ թե որպես արմատ, այլ որպես սաղարթ՝ շատ ավելի ազատ, անկայուն և դինամիկ: Որպես «տուն» նա ընտրում է ոչ թե արմատների կողքի քարանձավը կամ մայրիի շուքը, այլ շքածառի սաղարթը՝ կախված օդում ու մոտ երկնքին: Շքածառի ընտրությունը պատահական չէ. դրա անվանումը ֆրանսերենում *Araucaria* է, իսկ Ուրբաթն Արոկան<sup>2</sup> էր: Նման բառախաղն, անշուշտ, միտված է ընդգծելու ծառի Ուրբաթ-ային բնույթը: Որպես «տուն» ընտրելով նման ծառը՝ Ռոբինզոնն ընդունում էր Ուրբաթի կենսակերպը, և այս անգամ միահյուսվում Ուրբաթ- ծառին:

Ջրի, հողի ու օդի փուլերն անցած Ռոբինզոնին սպասվում էր վերջինը՝ կրակի տարերքի շրջանը: Մոտալուտ փոխակերպման մասին ընթերցողը կարող է գուշակել այն բանից, որ նա ծառ է բարձրանում՝ արևին դիմավորելու: Հետզհետե ավելի ու ավելի հիանալով արևով՝ նա այլևս չի խուսափում դրանից և «արմատի պես սպիտակ» մաշկի գույնն անհամեմատ մգանում է, նմանվում Ուրբաթի գույնին: Իր օրագրում Ռոբինզոնն Արևին է դիմում՝ խնդրելով իրեն դարձնել Ուրբաթի պես, ով կյանքին ծիծաղով և հեգնանքով է վերաբերվում: Իր մորուքը, որ բուսի պես ձգտում էր դեպի հողը, այլևս չկա: «Ի հակառակ դրան՝ վարսերիս վառվող գանգուրները ծովում են՝ դեպի երկինք բարձրացող բոցի պես»: Արմատ դարձած մորուքին փոխարինում են «բոց» մազերը: Նա Արևին հարցնում է. «Արև՛, գո՞հ ես ինձնից: Նայի՛ր ինձ, արդյո՞ք իմ մեղամորժոգը քո կրակի ուղղությամբ է ընթանում» (Tournier 1972:233):

Որոշ ժամանակ անց, անգլիական Union Jack նավը խարիսխ է նետում Ռոբինզոնի կղզու մոտ: Տեսնելով, թե որքան է հեռացել իր հայրենակիցների ապրելակերպից և արժեհամակարգից՝ Ռոբինզոնը

---

<sup>2</sup> Այդպես անվանում են Չիլիի ու Արգենտինայի աբորիգեններին:

որոշում է մնալ կղզում, սակայն Ուրբաթը նրանից գաղտնի լքում է կղզին՝ նավի անձնակազմի հետ: Հուսահատ Ռոբինզոնը մնում է մենակ, վերապրում է հայրենակիցների հետ ունեցած երեկոն և քաղաքակիրթ մարդկանց կյանքի ունայնության մասին իր խորհրդածությունները: «*Նա իր գլուխը հենեց կիսպարիսի բնին*» (Tournier 1972:268): Այստեղ նորից խոսքը ծառի բնի մասին է, քանի որ մոլորված Ռոբինզոնն ուներ պաշտպանության կարիք: Ինչպես որ նավաբեկությունից հետո, այնպես էլ այժմ, այս կարճատև հուսահատության պահին էլ ծառը որպես հենարան հանդես եկավ:

Այդուհանդերձ, Ռոբինզոնը չի վերադառնում իր սկզբնական վիճակին, քանի որ ավելի քան երբևէ հիմա գիտակցում է քաղաքակիրթ կենսակերպի ունայնությունը: Սակայն կրկին «ուրիշ»-ի ներկայությունն է փրկում նրան՝ կղզում էր մնացել նաև նավի պատանի սպասավորը, քանի որ միայն Ռոբինզոնի հայացքում էր տեսել բարություն: Պատահական չէ, որ նրանց հանդիպումը արևածագին է տեղի ունենում՝ կրակի տարերքը շարունակվում էր. «*Վերջապես աստված աստիճան ամբողջովին բացեց իր կարմիր մազերի թագը շեփորների ու ափսեների պայթյուն-ձայների ներքո*» (Tournier 1972:272): Արևը նկարագրվում է Ռոբինզոնի նման. նա ինքն արև էր դարձել:

Խոսելով Ուրբաթի՝ Անդոար նոխագի ողնաշարից պատրաստած ու ծառից կախած «քնարի» մասին, Տուլնիեն գրում է՝ «*Ռոբինզոնն ու Ուրբաթն այլևս չէին գիտակցում իրենք իրենց՝ այն միստերիայի մեծության մեջ, որպեսզի հաղորդվում էին սկզբնական տարերքները: Երկիրը, ծառն ու քամին միաձայն փոնում էին Անդոարի գիշերային աստվածացումը*» (Tournier 1972:224): Ծառն այստեղ տարերքների միավորողն է՝ հավատարիմ մնալով իր վաղեմի սիմվոլիկային: Ժիլ Դըլյոզը, որ տվյալ հրատարակության հետգրությունն է հեղինակել, գրում է. «*Կա մի պայքար երկնքի ու երկրի միջև, որի արդյունքն այս բոլոր տարերքների բանտարկումը կամ ազատագրումն է: Կղզին այս պայքարի սահմանը կամ վայրն է*» (տես՝ Tournier 1972:274): Հենց այս մետամորֆոզն է ապրում Ռոբինզոնը՝ ազատագրելով տարերքները, իսկ ծառը, որպես երկրի ու երկնքի միջև հավասարակշռության կատարյալ խորհրդանիշ, ուղեկցում է կերպարի զարգացումը: Վեպի և հեղինակի այլ ստեղծագործությունների շուրջ բազմաթիվ քննադատական աշխատությունների հեղինակ Առլետ Բուլումիեն այս առիթով գրում է՝ «*Ծառն իրապես առաջարկում է կյանքի մոդել, որում մարդը հաղորդվում է տիեզերքի հզոր ուժերին*» (Bouloumié 1991:79):

Այսպիսով, մեր վերլուծությունը թույլ տվեց եզրակացնել, որ ծառի խորհրդանիշի միջոցով Միշել Տուլնիեն ամբողջացնում է կերպարի

զարգացման փուլերը՝ ծառը տեղավորելով սյուժեի շրջադարձային իրադարձությունների կենտրոնում: Այսպիսին էին, օրինակ, հսկա մայրիկ արմատախիլ լինելը՝ տունը կորցնելուց հետո, կամ ծառի վրա բարձրանալը՝ արևածագը դիմավորելու համար:

Ռոբինզոնն անցնում է բնության կողմից օժում-մկրտության երկար քսանութ տարիներ, որ հեղինակը բաժանել է տարբեր փուլերի՝ դրանց օժտելով չորս հիմնական տարերքներին բնորոշ խորհրդանիշերով, որոնցից ծառը ներկա է սկզբից մինչև վերջ՝ բացահայտելով իր սիմվոլիկայի գրեթե ողջ հարստությունը: Այն հանդես է գալիս, որպես երկրի ու երկնքի մեջ հավասարակշռություն ստեղծող առանցք, և հատկապես, որպես բնության չորս տարերքները միավորող խորհրդանիշ:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Ալիշան Ղ, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք, <https://lib.mskh.am/images/books/hin-havatq.pdf>:  
Alishan Gh., « Hin havatq kam hetanosakan kronq »
2. Bouloumié A., Vendredi ou les Limbes du Pacifique de Michel Tournier, Gallimard, Paris, 1991, 247 էջ:
3. Durand, G., Les structures anthropologiques de l'Imaginaire, Dunod, Malakoff 2016, 384 էջ:
4. Tournier M., Vendredi ou les Limbes du Pacifique, Gallimard, 1972, 273 էջ:

#### **REFERENCES**

1. Alishan Gh, Hin havatq kam het'anosakan kronq, <https://lib.mskh.am/images/books/hin-havatq.pdf>:  
Alishan Gh., « Hin havatq kam hetanosakan kronq »
2. Bouloumié A., Vendredi ou les Limbes du Pacifique de Michel Tournier, Gallimard, Paris, 1991, 247 e'j:
3. Durand, G., Les structures anthropologiques de l'Imaginaire, Dunod, Malakoff 2016, 384 e'j:
4. Tournier M., Vendredi ou les Limbes du Pacifique, Gallimard, 1972, 273 e'j:

## АРПИНЕ АРУТЮНЯН - ДЕРЕВО КАК СИМВОЛ, ОБЪЕДИНЯЮЩИЙ СТИХИИ В РОМАНЕ «ПЯТНИЦА, ИЛИ ТИХООКЕАНСКИЙ ЛИМБ» МИШЕЛЯ ТУРНЬЕ.

*Ключевые слова:* дерево, символ, литература, природные элементы, общение, метаморфоза главного героя

Вертикальная природа дерева, его внешние изменения в течение года, долголетие, тишина, сила и его другие характеристики питали воображение духовных отцов, философов, поэтов и прозаиков, найдя свое отражение в художественных произведениях.

В этой статье мы исследуем самый известный роман французского писателя и философа XX века Мишеля Турнье - «Пятница или Тихоокеанский лимб», один из многих «пересказов» «Робинзона Крузо» Даниэля Дефо. Автор затрагивает темы экзотики, одиночества, политики, отношений с природой и т.д., основанные на психологических, научных и философских взглядах своего времени. Одна из основных тем - колониальная политика Франции и ее последствия. Таким образом, Турнье выстраивает свою концепцию вокруг жизни европейца, появившегося на необитаемом острове и пытающегося «просветить» аборигена.

Подобно Робинзону Дефо, герой Турнье переживает все этапы развития западной политики, делая остров «цивилизованным» и управляя им. Пятница, по традиции, представляется сначала необразованным и необъяснимым существом, недостойным человеческого имени и нуждающимся в воспитании. Но Робинзон Турнье вскоре признает тщеславие своей цивилизации и ее методов, и начинает изучать образ жизни Пятницы. Эта метаморфоза приближает его к природе и к первоначальному «невинному» существованию человека, которое может передаваться через элементы природы. Робинзон проходит четыре стадии развития: воду, землю, воздух и солнце, а переход от одного состояния к другому осуществляется посредством символа дерева.

Если в начале романа гигантский кедр - воплощение стихии земли, корней и цивилизации человечества, то далее он появляется искорененным и заменяется более «воздушными» деревьями, куда Робинзон поднимается чтобы провести ночь: оставляя землю, тянется к небесному, к ветру и солнцу.

Символика дерева присутствует на протяжении всего романа, сопровождая метаморфозы героя и действуя как портал между различными реальностями и стихийными этапами.

**ARPINE HARUTYUNYAN - TREE AS A SYMBOL CONNECTING THE  
NATURAL ELEMENTS IN THE NOVEL “FRIDAY, OR THE PACIFIC LIMB”  
BY MICHAEL TURNIER**

**Keywords:** tree, symbol, literature, natural elements, communication, metamorphosis of the protagonist

The vertical nature of the tree, its external changes during the year, longevity, silence, strength and its other characteristics fueled the imagination of thinkers, philosophers, poets and writers, and has been reflected in their artistic works.

In this article, the most famous novel by the French writer and philosopher of the 20th century, Michel Tournier “Friday or the Pacific Limb,”, one of the many retellings of “Robinson Crusoe” by Daniel Defoe is studied. The author touches upon the themes of exotics, loneliness, politics, relationships with nature, etc., based on the psychological, scientific and philosophical views of his time. One of the main themes is the French colonial policy and its consequences. Thus, Tournier builds his concept around the life of a European, who appeared on an uninhabited island and is trying to “enlighten” the aborigine.

Like Robinson Defoe, the Tournier's hero goes through all the stages of the Western politics development, making the island "civilized" and controlling it. Friday, according to the tradition, is initially an uneducated and inexplicable being, unworthy of a human name and in need of education. But Tournier's Robinson soon recognizes the vanity of his civilization and its methods, and begins to study Friday's lifestyle. This metamorphosis brings him closer to nature and to the original “innocent” human existence, which can be transmitted through the elements of nature. Robinson goes through four stages of development: Water, Land, Air and Sun, and the transition from one state to another is accomplished through the symbol of a tree.

At the beginning of the novel the giant cedar is the embodiment of the elements of earth, the roots and human civilization. Then it appears eradicated and replaced by more “airy” trees, where Robinson rises to spend the night: leaving the earth, stretching to the heaven, to the wind and the sun.

The symbolism of the tree is presented throughout the novel, accompanying the hero's metamorphosis and acting as a portal between various realities and elemental stages.

**Ներկայացվել է՝ 24.06.2019**

**Երաշխավորվել է ԵՊԼՀ Համաշխարհային գրականության և մշակույթի  
ամբիոնի կողմից  
Գրախոսվել է՝ 24.06.2019**

ԿԼՈՋ ՄԱՐՄԻՆԸ՝ ԵՐԿԲՆՈՒՅԹ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԷՄԻԼ ԶՈԼԱՅԻ  
«ԱԲԲԱ ՄՈՒՐԵԻ ՍԽԱԼԸ» ՎԵՊՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Հիմնաբառեր՝ կին, կնոջ մարմին, հոգևորական, բնություն, կրոն, բախում, մարմնեղեն, դրախտ, աստվածային*

Դրախտը, որի դռները կինը փակեց քո առջև, միթե՞ անկարող ես այն կրկին բացել» (Claudel 1931:305)<sup>1</sup>:

Սույն աշխատանքի շրջանակներում կփորձենք ներկայացնել կնոջ մարմնի խորհրդանշային գործածության խնդիրը գրականության մեջ: Մասնավորապես մեզ հետաքրքրում են գրականության մեջ հոգևորականի կերպարի կողմից կանացի մարմնի ընկալման առանձնահատկությունները: Ուսումնասիրության կենտրոնում են Էմիլ Զոլայի «Աբբա Մուրեի սխալը» վեպի հերոսները, որտեղ վեր է հանվում կնոջ մարմնի երկակի բնույթը և հոգևորականի վրա դրա կործանարար ազդեցությունը:

Աշխատանքի նորույթը ընտրված թեմայի ուսումնասիրությունն է՝ միջմշակութային համատեքստում: Նորույթ ենք համարում նաև Է. Զոլայի «Աբբա Մուրեի սխալը» վեպի հերոսուհու՝ Ալբինայի երկակի բնության վերլուծությունը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել կնոջ մարմինը որպես խորհրդանշիչ գրականության մեջ՝ մասնավորապես վերլուծելով Էմիլ Զոլայի «Աբբա Մուրեի սխալը» ստեղծագործությունը: Աշխատության մեջ կիրառվելու է միջմշակութային համեմատական մեթոդ՝ ուսումնասիրելու կնոջ մարմնի սիմվոլիկան տարբեր մշակույթներում և, իհարկե, գրականության մեջ:

Գրականությունն ու արվեստը անդրադառնում են այս թեմային դեռ անհիշելի ժամանակներից: Կնոջ մարմնի նկարագրություն կարելի է գտնել անգամ Հին Կտակարանում՝ Երգ Երգոցում: Իհարկե, Աստվածաշնչյան այս նկարագրությունն ունի բավականին տարաբնույթ

---

<sup>1</sup> Այս և մնացած թարգմանությունները՝ ըստ հոդվածի հեղինակի



մեկնաբանություններ, սակայն փաստը մնում է այն, որ ստեղծագործության երկու հիմնական կերպարներից մեկը կին է, և մյուսը՝ նրա սիրեկանը, գովերգում է այդ կնոջ մարմնեղեն գեղեցկությունը: Շատ հետաքրքիր է այն իրողությունը, որ 20րդ դարի գրողներն ու փիլիսոփաները դիտարկում են «Երգ Երգոցը» հիմնականում աշխարհիկ տեսանկյունից:

Հին Կտակարանը առաջարկում է նաև կնոջ մեկ այլ ընկալում՝ կինը որպես սատանայական, գաղթակղեցնող և մեղքի մղող արարած: Կանացիությունն այն է, ինչ տանջում է հոգևորականին: Կնոջ մարմինը արգելված պտուղն է: Եթե կուսակրոնն այն ճաշակի, կվտարվի եկեղեցուց՝ Աստծո երկրային դրախտից:

Այսպիսով, մարմինը կապվում է այն ամենի հետ, ինչ երկրային է, հողեղեն, բնական, նյութական, մինչդեռ հոգին գտնվում է ավելի վեր՝ մոտ աստվածայինին: Ադամական մեղքից հետո մարմինն ու հոգին դարձան թշնամիներ և, ինչպես կարդում ենք Ֆրանսիացի գրող, փիլիսոփա Սիմոնա դը Բովուարի մոտ, «բոլոր մարմնական կապերը երևացին մեղքի լույսի ներքո» (Beauvoir 1949:270): Հոգևորականը, որ հոգին է, որպես մեղք է դիտարկում կնոջը, որը մարմինն է:

Իր խորհրդավոր բնությամբ, մարդկային օրենքներին անհնազանդությամբ կանացի աշխարհը վախեցնում է հոգևորականներին, ովքեր տեսնում են Սատանային կնոջ մարմնում: Ֆրանսիացի կին գրող, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիա Բաշայի «Մեղավոր հայացք. Կնոջ մարմնին նայող հայացքի մասին մտորումներ» աշխատության մեջ կարդում ենք՝ «Սա սովորական մարմին չէ: Սա **դիպլոմատ մարմին է, որը կապված է հանճարների և հոգիների հեղուկի:** Կինը ոչ միայն հանճար է, նա կրում է իր մեջ հանճարը: Արաբերենում, *jinn* (جنّی), հանճար բառը կիսում է նույն արմատը, ինչ *jain* (جنین) և *junn* (جنون)՝ պրոուդ և խելագարություն: Այդ **դիպլոմատ մարմինը «հղի» է խելագարությամբ**» (Bacha 2015:44):

Ինչպես նշում է Լիլիա Բաշան, «*awra*» (عورة)-ն արաբերեն եզրույթ է, որը մատնանշում է մարմնի այն հատվածները, որ պետք է ծածկել: Այսինքն, կարելի է ասել, որ այս բառը նշանակում է *մերկություն*, որը, ըստ հեղինակի հատուկ է կնոջը, քանի որ «*կարիք չկա, որ նա հանի հագուստը, կինը միշտ է մերկ, նա awra է*» (Bacha 2015:2): Հետաքրքիր է նշել, որ գրականության մեջ հիմնականում բոլոր ճակատագրական կանայք, որոնք կործանարար դեր են խաղացել հոգևորականի կյանքում, ինչպես օրինակ Էսմերալդան (Վ. Հյուգո «Փարիզի Աստվածամոր տաճարը»), Թայխը (Ա. Ֆրաբս «Թայխ»), Ալբինան (Է. Զոլա «Աբբա Մուրեի սխալը»), Սեդան (Լ. Շանթ «Հին Աստվածներ»), և այլն

ներկայացված չեն մերկ, նրանցից եկող վտանգն այլ է՝ լուսնային, թաց, կանացի, հողեղեն, մարմնեղեն էությունը:

Այս թեմայի արձագանքները կան ամենատարբեր մշակույթներում: Չինական փիլիսոփայության մեջ, կանացիությունն ու տղամարդկությունը ներկայացված էն *ին* և *յան* կատեգորիաներով: Յանը, որը տղամարդակայինն է բարձր ուժն է՝ աճող, ակտիվ, դրական, ջերմ՝ կրակն ու արևը խորհրդանշող: Ինը, որը ներկայացնում է բնության կանացի մասը, կապված է երկրային, իջնող ուժի հետ: Այն «*պասիվ, բացասական, ներքին ուժն է (...), իր փարրը ջուրն է (...), ինը իջնում է, մինչդեռ յանը՝ բարձրանում*» (Daniel 1991:30-31): Ինը ասոցացվում է գիշերվա և լուսնի հետ: Լուսինը, որ ստանում է իր էներգիան ինից, միշտ կանացի է, խոնավ, թարմ, պասիվ՝ կապված գիշերվա և առեղծվածի հետ:

Կնոջ զուգորդումը գիշերվա հետ նրան դարձնում է առավել գրավիչ հոգևորականի աչքերում: Կինը վտանգավոր է, որովհետև անմիջականորեն կապված լինելով բնության օրենքներին՝ չի ենթարկվում եկեղեցական կանոններին:

Վերլուծական հոգեբանության հիմնադիր, շվեյցարացի հոգեբույժ Կ. Յունգը *անիմա* է կոչում կանացիի պատկերացումը՝ տղամարդու երևակայության մեջ: Կանացի մարմնի գրավչությունը նա կապում է հոգևորի հետ: «*Սեռը և ոգին երկուսն էլ նույնն են (...)* Կան կանայք, որոնք հոգևոր առումով վերածնում են տղամարդկանց: Ահա թե ինչու շատ վայրերում մարմնավաճառությունը իերոդոլիների միջամտությամբ կրոնական ծառայության բաղկացուցիչ մասն է եղել» (Jung 1996:62-64): *Անիման* այն ամենն է, ինչ կանացի է, դա «*անհստակ տրամադրություններն է, մարգարեական կանխազգացումները, իռացիոնալ զգայունությունը, անձնական սիրո ունակությունը, բնության զգացումը և, վերջապես, կապը անգիտակցականի հետ*» (Jung 1990: 117):

Կնոջ այս կերպարը դարեր ի վեր սնել է բազմաթիվ հեղինակների երևակայությունը: Հատկապես հետաքրքիր է հետևել գրականության մեջ կնոջ և հոգևորականի առերեսմանը: Ուսումնասիրենք Էմիլ Զոլայի «Աբբե Մուրեի սխալը» վեպը, որը լավագույնս վեր է հանում կնոջ և բնության կապի ամրությունն ու դրա բախումը հոգևորականի աշխարհի հետ:

«Աբբե Մուրեի սխալը» «Ռուզոն-Մակկարներ» շարքի հինգերորդ վեպն է: Այս վեպում, Զոլան ակնհայտորեն ցույց է տալիս իր վերաբերմունքը կուսակրոնության նկատմամբ: Լինելով նատուրալիստ՝ Զոլան չէր կարող ընդունել մի երևույթ, որը լիովին դեմ է բնության օրենքներին: Խոսելով կրոնական դոգմաների մասին՝ նա օգտագործում է «*սխալ ընկալված քրիստոնեություն*» (Zola 2014:22) արտահայտությունը: Կաթոլիկությունը նա անվանում է «*մահվան կրոն*» (Zola 2014:22): 1864 թվականի հունվարի

13ին, Լիլ քաղաքի հայտնի ամսագրում Զոլան գրում է՝ «Ես չեմ կարող ընդունել մի կրոն, որը ժխտում է արարումը, որն արհամարհում է մարմինը» (տես՝ Ouvrand 1896:148):

Աբբա Մուրեն կուսակրոն հոգևորական էր, որն ապրում էր Արտո քաղաքում: Նա ուներ անմնացորդ նվիրվածություն եկեղեցուն և հատկապես մեծ սիրով էր լցված Աստվածամոր հանդեպ: Առողջական խնդիրների պատճառով որոշվում է, որ նա պետք է որոշ ժամանակ անցկացնի Պարադույում՝ անծայրածիր մի այգում, ուր ապրում էր Ալբինան՝ նույնքան վայրի ու գեղեցիկ, որքան Պարադուի բնությունը: Արթնանալով Պարադույում՝ Աբբա Մուրեն ոչինչ չէր հիշում իր անցյալի մասին, այսինքն կարելի է փաստել, որ նա ժամանակից և տարածությունից դուրս գտնվող կերպար է: Նույնիսկ վեպի ժամանակագրական կառուցվածքն է խոսում այդ մասին: Այն հատվածը, որտեղ դեպքերը տեղի են ունենում Ալբինայի այգում, կարծես առանձնացված լինի մյուս երկուսից: Այս մասում Աբբա Մուրեն սկսում է շարժվել, քայլել, վագել, մինչդեռ մյուս երկուսում նա համարյա միշտ անշարժ է, երբեմն՝ ծնկաչոք: Նույնիսկ անունն է այլ: Նա այլևս Աբբա Մուրեն չէ, այլ պարզապես Սերժը, որը սովորում է ենթարկվել բնության օրենքներին, իսկ բնությունը մի օրենք ունի՝ ապրել: Մինչ այդ, նրա ողջ աշխարհը սահմանփակվում էր իր փոքր խցով: Այդ խցի պատուհանի ճաղերից արևի ներս սողոսկող մի քանի շողը միակ կապն էին Աստծո ստեղծած աշխարհի հետ: Իսկ այժմ նա մոտեցավ այն ամենին, ինչ թաքցված էր իրենից՝ բնությանն ու կնոջը: Ալբինան դառնում է Սերժ Մուրեի համար Աստծո ստեղծած բնությունը բացահայտելու միջոց՝ պրիզմա, որի միջով նա նայում էր իր նոր գտած աշխարհին:

Կարևոր ենք համարում նշել, որ արևի խորհրդանիշը վեպում շատ ուժեղ է: Սկզբում Ալբինան և Սերժը սպասում էին, որ արևը վերջապես դուրս գա, այնուհետև արևի լույսը գնալով ավելի ու ավելի այրող է դառնում և ուղեկցում է նրանց մինչ այն պահը, երբ Աբբա Մուրեն դրդում է Ալբինային ինքնասպանության, կամ, կարելի է ասել, սպանում է նրան՝ այդպիսով սպանելով Պարադուն: Պարադուի եղանակային փոփոխությունները ևս հետաքրքիր ձևով կապվում են հերոսուհու ճակատագրի հետ. գարուն էր, երբ Ալբինան սիրեց Սերժ Մուրեին, ամռանը նրանք կատարեցին Աբբա Մուրեի «սխալը», աշնանը Ալբինան մահացավ: Այսպես Զոլան ևս մեկ անգամ շեշտում է կնոջ և բնության սերտ կապը:

Վեպի կարևորագույն թեմաներից մեկը *վերադարձն* է: Սա վերադարձ է ամենասկզբին, արմատներին, անմեղությանը: Պարադուն, որտեղ Սերժ Մուրեն արթնանում և տեսնում է Ալբինայի արևաշաղ դեմքը՝

ակնարկ է աստվածաշնչյան դրախտին: Ալբինան բռնում է Սերժի ձեռքը և նրանք սկսում են շարժվել դեպի անցյալ, դեպի այն պահը, երբ մարդը դեռ չէր ըմբոստացել աստվածային օրենքի դեմ: Ինչպես Ադամն ու Եվան, Սերժն ու Ալբինան ապրում էին պարտեզում, որը սիրում էին, և որն իրենց էր սիրում: Նրանք միասին սովորում էին ապրել: Նրանք հետևում էին Աստծո օրենքին՝ «Աստված սեր է, և նա, ով մնում է սիրո մեջ, միության մեջ է մնում Աստծու հետ, Աստված էլ միության մեջ է մնում նրա հետ» (Bible 1991: 68):

Աբբա Մուրեն գործեց իր «սխալը» «կյանքի ծառի փակ, որի փակ <...> ավելի ուժեղ, ավելի սուրբ ու կատարյալ» (Zola 1998: 295) էին իրենց զգում վեպի հերոսները: Սա ևս մեկ ակնարկ է Եդեմական պարտեզի իրադարձություններին: Այն, ինչ տեղի ունեցավ այդ ծառի տակ՝ այնքան բնական էր, որ ամբողջ բնությունն էր նրանց սովորեցնում սիրո արվեստը՝ «Այգին էր, որ ուզում էր այդ սխալը <...> Այդ ծառն էր, որ ասաց Ալբինայի ականջին այն, ինչ մայրերը շնջում են հարսնացուներին ամուսնության երեկոյին» (Zola 1998:301):

Եվան դրդեց Ադամին ճաշակելու արգելված պտուղը և այդ պահին նրանք նկատեցին, որ մերկ էին: Նրանք նկատեցին իրենց սեռային տարբերությունը: Այլինքն, սեռի գիտակցումը և տարբերակումը կապված է մեղքի հետ: Ահա թե ինչու հոգևորականները համարվում են անսեռ էակներ: Ահա թե ինչու « նրա մեջ սպանել էին տղամարդուն» (Zola 1998: 84):

Սերժ Մուրեի արգելված պտուղը Ալբինան էր, ում «տիրելով նա ի վերջո գտավ տղամարդու իր սեռը, մկանների էներգիան, սրտի քաջությունը, առողջությունը, որն իրեն պակասում էր իր երկար պատանեկության շրջանում: Այժմ նա իրեն ամբողջական էր զգում» (Zola 1998:305): Պատմությունը կրկնվում է: «Սխալից» հետո, նրանք նկատում են իրենց մերկությունը՝ «Չե՞ս տեսնում, որ մենք մերկ ենք»: Նա ևս ամաչեց և տրեմեմբոսով սկսեց ծածկել իր պատառոտված հագուստը» (Zola, 1998:308):

Սկսվում է երկու աշխարհների՝ բնության և կրոնի պայքարը: Ալբինան՝ Պարադուի դուստրը, մարմնավորում է բնությունը՝ վայրի, գեղեցիկ, և վերջինիս աշխարհի բախումը Աբբա Մուրեի աշխարհի հետ Ջոլան պատկերում է ինչպես մահվան և կյանքի, ազատության և դոգմաների, արևի և խավարի պայքար:

Ռուս մեծ գրող, պոետ, գրական քննադատ, կրոնական փիլիսոփա Դմիտրի Մերեժկովսկին իր՝ «Երեքի գաղտնիքը. Եգիպտոս-Բաբելոն» ստեղծագործության մեջ նշում է, որ «Աստծո կամքը չկատարվեց քրիստոնեության մեջ, ինչպես չի կատարվել հեթանոսության մեջ:

Այստեղ՝ քրիստոնեության մեջ, անհատը սեռ չունի, այնտեղ՝ հեթանոսության մեջ, սեռը անհատ չունի: Եվ միայն այն ժամանակ, երբ կկատարվի Մեկի և Երկուսի գաղտնիքը՝ Անհատ և Սեռ, այդ ժամանակ կկատարվի Երրորդության գաղտնիքը» (Мережковский 2005:55):

Վեպի 2-րդ գլխում Սերժ Մուրեն և Ալբինան ցույց են տալիս Երրորդության միասնական էությունը: Քրիստոնեությունը (Սերժ Մուրեն) և հեթանոսությունը (Ալբինան) չեն հերքում մեկը մյուսին: Հակառակը, նրանց միությունը լրացնում է Երրորդությունը: Առանց Ալբինայի Սերժը Մեկ է, Ալբինայի հետ նրանք դառնում են Երկու, նրանց միությունը հնարավոր է դարձնում Երեքը:

Հենց սա է Զոլայի մոտեցումը: Մեծ նատուրալիստը ցույց է տալիս, որ բնությունն ու Աստված մեկ են: Իսկ երբ մարդը դուրս է գալիս բնության դեմ, Արդյունքը տառապանքն է, ավերակները և մահը:

Զոլան սկսում է նրանով, որ հակադրում է Արտո քաղաքի աղքատ բնությունը, որտեղ գտնվում էր աբբա Մուրեի եկեղեցին և Պարադուի հարուստ և գայթակղիչ բուսականությունը: Այստեղ, առաջին հայացքից Արտոն կարելի է բնութագրել ինչպես նոր Սողոմ, երկրային դժոխք՝ պահպանվող սև շան կողմից «նստած քաղաքի մուտքի մոտ» (Zola 1998:79):

Չորացած, այրված բուսականությամբ, դատարկ եկեղեցիով, Արտոն կարծես մեղսավոր վայր է՝ լի մարդկային բոլոր մեղքերով, որոնք վտանգավոր են քաղաքի փոքրիկ եկեղեցու համար: Այս սողոմական վայրին հակադրված է այգու նկարագրությունը, որն «ապրում էր երջանիկ կենդանու շքեղությամբ, ում բաց են թողել աշխարհի ծայրում, ամեն ինչից հեռու, ամեն ինչից ազատ», որտեղ «(...) կար ամենագեղեցիկ բույսերի հավաքածուն (...)» (Zola 1998: 212, 216) : Սակայն իր խորհրդավոր և գայթակղիչ գեղեցկության տակ Պարադուն թաքցնում է նույն վտանգը Աբբա Մուրեի համար, ինչ Արտոն՝ եկեղեցու: Այսինքն, Պարադուն և Արտո քաղաքն ունեն նույն էությունը: Արտոն վտանգավոր է փոքր և խոցելի եկեղեցու համար, Պարադուն՝ սիրահարված հոգևորականի: Պարադուի վտանգավոր ուժը իր գեղեցկության մեջ է: Պարադուն և Ալբինան նույնն են, զգում են նույնը և երկուսն էլ ծածկում են երիտասարդ հոգևորականին սպառնացող վտանգը իրենց գեղեցկության ուժի տակ: Եթե Սերժն ուզում էր ազատվել Արտոյի տգեղ և չոր բնությունից, նա նույնիսկ չէր էլ զգում վտանգը՝ ծածկված Պարադուի ծաղիկների արբեցնող բույրի, Ալբինայի ոսկեգույն մազերի ներքո, որոնք նրան դրդում էին դեպի «սխալը»: Ողջ այգին և կենդանականացված կինը դրդում էին Աբբա Մուրեին դեպի ծառը, որտեղ նա կատարեց իր «սխալը»:

Սիմոնա դե Բուվուարի աշխատության մեջ կարդում ենք՝ «Ոչինչ ավելի խորը արմատացած չէ փղամարդկանց սրտում, քան այս կենդանականացումը: Ծովագնացի համար ծովը վրանգավոր կին է՝ ուխտադրուժ, աննվաճելի, ում հնազանդեցնելու համար նա ջանք չի խնայում : Լեռնագնացի համար լեռը հպարտ, ապստամբ, կախարդական և չար կին է, ում հնազանդեցնելու համար նա պատրաստ է վրանգել իր կյանքը» (Beauvoir 1949:255) :

Քրիստոնեական գիտակցության մեջ գազանը, կենդանին մարմանվորում են չարը, Սատանային: Սերժ Մուրեն Ալբինային համեմատում է գազանի հետ իրենց առաջին իսկ հանդիպմանը, երբ չէր էլ կարող պատկերացնել, որ այդ կինը ճակատագրական է դառնալու իր համար: « - Լսե՛ք, հորեղբայր,- ընդհարեց նրան Աբբա Մուրեն:- Կարծես ինչ-որ գազանի ծայն լինի այս պատի երևում (...) Ես այդպես էլ գիտեի, որ գազան է վազվզում այս պատից այն կողմ,- ասաց հոգևորականը» (Zola 1998:112-113):

Ալբինան Սերժին մտցնում է այգի, որի իրական դեմքը չի երևում, այն մնում է առեղծված, ինչպես կենդանականացված կնոջ էությունը: Վերջինս «բանտարկում» է հոգևորականին իր բնության՝ Պարադուի մեջ: Քրիստոնեական տեսանկյունից Ալբինան չարի մարմնավորումն է, քանի որ վեպում ևս երևում է, որ եկեղեցին դիտարկում է կնոջը ինչպես մի էակ, որի բնության մի մասը դիվական է: Ինչպես Սատանան՝ կինը ևս բարդ է, անկանխատեսելի, լի հակասություններով և վերջապես՝ կենդանականացված: Կնոջ և Սատանայի միջև կապը ակնարկվում է նաև վեպի այն հատվածում, որտեղ Սերժ Մուրեի քույրը՝ Դեզիրեն, եղբորը ցույց է տալիս իր այծը: Այդ ժամանակ հոգևորականը դիտարկում է այծերին որպես «դժոխային էակներ, որոնց վրայից ցանկասիրության հոտ է գալիս» (Zola 1998:128), քանի որ նրանց ծիծաղը իրեն դիվային է թվում: Այնուհետև նա համեմատում է այս քմահաճ կենդանիների պահվածքը կանանց հետ՝ այսպիսով վերջիններիս կենդանականացնելով և որակելով ինչպես դիվային և ցանկասեր:

Այսպիսով, քննադատական և գեղարվեստական գրականության մեջ կնոջ մարմնի խորհրդանշային գործածության ուսումնասիրությունը, ինչպես նաև Էմիլ Ջոլայի «Աբբա Մուրեի սխալը» ստեղծագործության մասնակի վերլուծությունը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ բնության և կնոջ անքակտելի կապն է, որ միաժամանակ վախեցնում և գայթակղում է կրոնական դոգմաներին ենթարկվող հոգևորականին՝ վերջինիս հոգում իրար դեմ հանելով երկու հզոր աշխարհներ: Ընտրված վեպի օրինակով երևում է, որ կինը բնության մարմնավորումն է՝ նույնքան գայթակղիչ,

որքան և վտանգավոր: Ջոլան, լինելով նատուրալիստ, դեմ է կանգնում կրոնական դոգմաներին, որոնք հակասում են բնության օրենքներին:

Կատարված ուսումնասիրությունը և ընտրված վեպի վերլուծությունը հանգեցնում են այն եզրակացությանը, որ կնոջ մարմինը, իր հակասական բնությամբ՝ ստեղծագործ և ավերիչ, բերրի և վայրի, հակադրվում է կրոնական աշխարհին՝ պատերազմի դաշտ դարձնելով սիրահարված հոգևորականի ներաշխարհը: Իսկ այդ պատերազմի թեման իր մոայլ գեղեցկությամբ դարեր շարունակ գրողների և արվեստագետների ներշնչանքի անսպառ աղբյուր է:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Beauvoir S., Le deuxième sexe, t.1, Les faits et les mythes, Gallimard, P. 1949, 1210p.
2. Chaponnière C., Le Mystère féminins ou vingt siècles de dénis de sens, Olivier Orban, P. 1989, p.587.
3. Claudel P., Le soulier de satin, Gallimard, P., 1931, 322p.
4. Claudia J., Paul Claudel interroge Le Cantique des Cantique, Annales littéraires de l'Université de Franche-Comté, P.,1994, 514p.
5. Foucault M., Les Corps utopiques, les hétérotopies, Le Kremlin-Bicêtre, Lignes, 2009, 217p.
6. Jung C., Correspondance 1958 - 1961, trad. fr.Alix Gaillard-Dermigny et Christian Gaillard, édition établie par Aniela Jaffé en collaboration avec Gerhard Adler, Paris, Albin Michel, 1996, 652 p.
7. Jung C., Franz M., ouvrage collectif, L'homme et ses Symboles, Paris, 1990, 687p.
8. Reid P. D., La médecine chinoise par les herbes, traduit par Fracis Marche, Genève, Olizan, 1993, 1420p.
9. Zola E., A propos de Saint Christodule et la Réforme des couvents grecs au XI<sup>e</sup> siècle de Le Barbie, dans Journal de Lille, Paris, Hachette, 1864, cité dans Ouvrard P., Zola et le prêtre, Paris, Beauchesne, 1896, 745p.
10. Zola E., Zola et la question religieuse, dans La faute de l'abbé Mouret, Paris, Librairie général, 2014, 710p.

11. Zola, E., La Faute de l'Abbé Mouret, Paris, Librairie Générale Française, 1998, 510p.
12. Мережковский Д., Тайна Трех. Египет-Вавилон, "Эксмо", М., 2005.

#### REFERENCES

1. Beauvoir S., Le deuxième sexe, t.1, Les faits et les mythes, Gallimard, P. 1949, 1210p.
2. Chaponnière C., Le Mystère féminins ou vingt siècles de dénis de sens, Olivier Orban, P. 1989, p.587.
3. Claudel P., Le soulier de satin, Gallimard, P., 1931, 322p.
4. Claudia J., Paul Claudel interroge Le Cantique des Cantique, Annales littéraires de l'Université de Franche-Comté, P.,1994, 514p.
5. Foucault M., Les Corps utopiques, les hétérotopies, Le Kremlin-Bicêtre, Lignes, 2009, 217p.
6. Jung C., Correspondance 1958 - 1961, trad. fr.Alix Gaillard-Dermigny et Christian Gaillard, édition établie par Aniela Jaffé en collaboration avec Gerhard Adler, Paris, Albin Michel, 1996, 652 p.
7. Jung C., Franz M. , ouvrage collectif, L'homme et ses Symboles, Paris, 1990, 687p.
8. Reid P. D., La médecine chinoise par les herbes, traduit par Francis Marche, Genève, Olizan, 1993, 1420p.
9. Zola E., A propos de Saint Christodule et la Réforme des couvents grecs au XIe siècle de Le Barbie, dans Journal de Lille, Paris, Hachette, 1864, cité dans Ouvrard P., Zola et le prêtre, Paris, Beauchesne, 1896, 745p.
10. Zola E., Zola et la question religieuse, dans La faute de l'abbé Mouret, Paris, Librairie général, 2014, 710p.
11. Zola, E., La Faute de l'Abbé Mouret, Paris, Librairie Générale Française, 1998, 510p.
12. Merezhkovskij D., Tajna Treh. Egipet-Vavilon, "Jeksmo", М., 2005.



## **МАРИАМ ОГАННИСЯН - ЖЕНСКОЕ ТЕЛО КАК ДВОЙСТВЕННЫЙ СИМВОЛ В РОМАНЕ ЭМИЛЯ ЗОЛЯ «ПРОСТУПОК АББАТА МУРЕ»**

**Ключевые слова:** Женщина, тело женщины, духовенство, природа, религия, столкновение, плотский, рай, божественное.

Основная цель статьи - проанализировать символ женского тела и проследить его влияние на развитие образа священнослужителя. С этой целью мы рассматриваем роман Эмиля Золя «Проступок аббата Муре», жизнь героев которого - лучший пример столкновения природы и религии, в теле и душе соблазняющего, любящего священнослужителя. На протяжении веков психологи, врачи, писатели, художники, артисты и философы изучали психологические различия между мужчинами и женщинами, которые нашли свое выражение в таких символических образах, как солнце и луна, день и ночь, жар и холод, духовность и плоть. В нашем исследовании мы показываем, что во многих культурах мужчина рассматривается как высоко духовный человек, а женщина как земное тело. Эта тема является отражением несколько мрачной, но бесконечно красивой ситуации в душе влюбленного священника.

Искусство и литература не могли быть равнодушными к этой теме и, естественно, породили ряд блестящих произведений. Эти работы позволяют нам стать свидетелями столкновения двух могущественных миров, природы и религии в душе человека, являющегося представителем духовенства. Основной причиной столкновения является женщина, которая открывает перед героем новый мир.

Священнослужитель, который никогда не делал выбора, встает перед необходимостью ужасного решения - тело женщины или его схизма, Природа или Бог. Таким образом, автор статьи приходит к выводу, что женщина, как и ее тело, противопоставляются религии и клиру.

## **MARIAM HOVHANNISYAN- WOMAN'S BODY AS A BINARY SYMBOL IN "THE FAULT OF ABBOT MOURET" BY EMILE ZOLA**

**Keywords:** *Woman, wife's body, clergy, nature, religion, clash, body, paradise, divine*

The main purpose of the article is to analyze the symbol of the female body and to follow its influence on the development of the image of the priest. So, in Emile Zola's novel "The Fault of Abbot Mouret", heroes' lives are the best example of the clash of Nature and Religion in the body and soul of a seducing, loving cleric.

For centuries, psychologists, doctors, writers, artists and philosophers have studied the psychological differences between men and women, which have been expressed in such symbolic images as the sun and the moon, day and night, heat and cold, spirituality and flesh. In our article, we show that, in many cultures, a man is viewed as a highly spiritual person and a woman as an earthly body. This theme is a reflection of a somewhat gloomy, but infinitely beautiful situation in the soul of a priest in love.

Art and literature could not be indifferent to this topic and, naturally, gave rise to a number of brilliant works. These works allow us to witness the clash of two powerful elements, Nature and Religion in the human soul. The main cause of the collision is a woman who opens up a new world for the hero. The priest who has never made a choice, faces the need of making a terrible decision - the body of a woman or his schism, Nature or God. Thus, the author of the article concludes that woman and her body are contrasted to the religion and clergy.

Ներկայացվել է՝ 24.06.2019  
Երաշխավորվել է ԵՊԼՀ Համաշխարհային գրականության և մշակույթի  
ամբիոնի կողմից  
Գրախոսվել է՝ 24.06.2019

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

**ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ** - ք.գ.թ., դոցենտ, անգլերենի ամբիոն, ԵՊԼՀ  
**ЛИЛИТ БАДАЛЯН** - к.ф.н., доцент, каф. английского языка, ЕГУЯС  
**LILIT BADALYAN** - PhD, Associate Professor, Chair of English, YSULSS

**ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ք.գ.թ., դոցենտ, հայագիտության ամբիոն, ԵՊԼՀ  
**ЛИЛИТ ГЕВОРГЯН** - к.ф.н., доцент, каф. арменоведения, ЕГУЯС  
**LILIT GEVORGYAN** - PhD, Associate Professor, the chair of Armenian Studies, YSULSS

**ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ** - ք.գ.դ., պրոֆեսոր, անգլերենի ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ  
**ГАЯНЕ ЕГИАЗАРЯН** - д.ф.н., профессор, зав. каф. Английского языка, ЕГУЯСС  
**GAYANE YEGHIAZARYAN** - Doctor in Philology, Prof., Head of Chair of English, YSULSS

**ՖՐՈՒՆԶԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - ք.գ.թ. դոցենտ, ռոմանական լեզուների ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ  
**ФРУНЗЕ ОГАНЕСЯН** - к.ф.н. , доцент, зав. каф. Романских языков, ЕГУЯС  
**FRUNZE HOVHANNISYAN** - PhD. Associate Professor, Head of the Chair of Romance Languages, YSULSS

**ԴՈՆԱՐԱ ԴԱԶԱՐՅԱՆ** - ք.գ.թ., դոցենտ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ  
**ДОНАРА КАЗАРЯН** - к.ф.н., доцент кафедры романских языков, ЕГУЯС  
**DONARA GHAZARYAN** - PhD, Associate Professor, Chair of Romance Languages, YSULSS

**ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ** - ք.գ.թ., դոցենտ, հայոց լեզվի ամբիոն, ԵՊԼՀ  
**РЕБЕКА МАРГАРЯН** – к.ф.н., доцент, каф. армянского языка, ЕГУ  
**REBEKA MARGARYAN** - PhD, Associate Professor, Chair of the Armenian Language, YSU

**ՍԻԼՎԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** - դասախոս, ռուսաց լեզվի ամբիոն, ՀԱՊԿ  
**СИЛЬВА МАРТИРОСЯН** - преподаватель, каф. русского языка, НПУА  
**SILVA MARTIROSYAN** - Teacher, Russian language department, NPUA

**ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ** - հայցորդ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ  
**АННА МЕЛКОНЯН**- соискатель, кафедры романских языков, ЕГУЯС  
**ANNA MELKONYAN** - PhD student, Associate Professor, Chair of Romance Languages, YSULSS

**ՌՈՒՀԱՆ ՄՈՒՍԵՅԱՆ** - դասախոս, ԵՊԼՀ, Անգլերենի ամբիոն  
**РУЗАН МУСЕЯН** - преподаватель каф., английского языка, ЕГУЯСН  
**RUZAN MUSEYAN** - Lecturer, English Chair, YSULSS

**ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ** - ք.գ.թ., դասախոս, գերմ. ամբիոն, ԵՊԼՀ  
**СИРАНУШ ПАПОЯН** - к.ф.н, преподаватель, каф. нем. языка, ЕГУЯС  
**SIRANUSH PAPOYAN** - PhD, Associate Professor, the Chair of German language, YSULSS

**ԳՈՀԱՐ ՓԵԼՈՇՅԱՆ**- մագիստրոս, կիրառական լեզվաբանություն, ԵՊԼՀ  
**ГОАР ПЕЛОШЯН** - магистрант, прикладная лингвистика, ЕГУЯС  
**ГОHAR PELOSHYAN** - MA student, Applied Linguistics, YSULSS

**ԼՈՒՍԻՆԵ ԱՐԳԱՐՅԱՆ** - ասպիրանտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն , ԵՊԼՀ և Պարիժ-Սորբոն համալսարան  
**ЛУСИНЕ АБГАРЯН** - Аспирант, каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН и Университет Париж-Сорбонна  
**LUSINE ABGARYAN** - PhD student, Chair of World Literature and Culture, YSULSS and Paris-Sorbonne University

**ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - ասպիրանտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն , ԵՊԼՀ  
**АРПИНЕ АРУТЮНЯН** - Аспирант, каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН  
**ARPINE HARUTYUNYAN** - PhD student, Chair of World Literature and Culture, YSULSS

**ՄԱՐԻԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - ասպիրանտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն , ԵՊԼՀ  
**МАРИАМ ОГАННИСЯН** - аспирант, каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН  
**MARIAM HOVHANNISYAN** - PhD student, Chair of World Literature and Culture, YSULSS.

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի,  
Աննա Ավետիսյանի

Տպաքանակը՝ 100

---

«Լինգվա» հրատարակչություն  
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական  
համալսարան  
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42  
Հեռ.՝ (374 11) 300-150  
Էլ. հասցե՝ [info@brusov.am](mailto:info@brusov.am)  
<http://www.brusov.am>

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական  
համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(48) համարը  
երաշխավորվել է տպագրության ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 04.07.2019  
թվականի № 17 նիստի որոշմամբ և հասանելի է հետևյալ հղմամբ՝  
<https://brusov.am/website/documentation/files/04fbf243.pdf>